



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ¹

Թողարկողի ֆիրմային անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն

Կազմակերպչաիրավական ձևը

0047 Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6,

Հեռ՝ (37410) 510000,

Էլ. Փոստ՝ info@fcc.am

Ինտերնետային կայք՝ www.fastbank.am

«Դայմենշն» ՓԲԸ

Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն²

Կազմակերպչաիրավական ձևը

ՀՀ, ք. Երևան, 0019, Բաղրամյան 2, 27/1 ոչ բնակելի տարածք

Հեռ՝ +374 10 545670

Էլ.-փոստ՝ info@dimension.am

Ինտերնետային կայք՝ www.dimension.am

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՁԻ
ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Երևան 2023

¹ Այսուհետ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ տերմինը կօգտագործվի նաև որպես Թողարկող:

² Այսուհետ «Դայմենշն» փակ բաժնետիրական ընկերություն տերմինը կօգտագործվի նաև որպես Տեղաբաշխող:

Արժեթղթի դասը, տեսակը	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	Անվանական արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթի ձևը	Ոչ փաստաթղթային	Ոչ փաստաթղթային
Թողարկման արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Արժեթղթերի քանակը	100,000 (հարյուր հազար)	100,000 (հարյուր հազար)
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի թողարկման ծավալը	Մինչև 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ	Մինչև 10,000,000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամտաբերություն	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից ³
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից
Շրջանառության ժամկետը	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

³ Պարտատոմսերի պայմանների վերաբերյալ որոշումը ընդունվելու է Ընկերության Խորհրդի կողմից

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	5
ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	8
1. Տեղեկատվություն թողարկողի և թողարկողի գործունեության վերաբերյալ	9
2. Թողարկողին և թողարկողի պարտատոմսերին առնչվող ռիսկեր	16
3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ	22
4. Թողարկողի աուդիտ իրականացնող անձ	23
5. Թողարկողի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն	24
6. Թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները	25
7. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները	27
ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	29
8. Ռիսկային գործոններ	29
9. Հիմնական տեղեկատվություն	33
10. Տեղեկատվություն թողարկվող պարտատոմսերի մասին	33
11. Առաջարկի ժամկետները և պայմանները	51
12. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	60
13. Լրացուցիչ տեղեկատվություն	61
ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	62
14. Անկախ աուդիտորները	62
15. Ռիսկային գործոններ	62
16. Տեղեկատվություն թողարկողի մասին	70

17. Ներդրումներ	74
18. Բիզնեսի նկարագիրը	75
19. Թողարկողի կառուցվածքը	79
20. Հիմնական Միջոցներ	79
21. Զարգացման վերջին միտումները	80
22. Թողարկողի կառավարման մարմինները	83
23. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը	94
24. Հսկող անձինք	112
25. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	112
26. Էական պայմանագրերը	113
27. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	113
28. Այլ տեղեկատվություն	113
ԲԱԺԻՆ 4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	
ՀԱՎԵԼՎԱԾ 1: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը	114
ՀԱՎԵԼՎԱԾ 2: Թողարկման Վերջնական Պայմաններ	115
ՀԱՎԵԼՎԱԾ 3: Հայտ-հանձնարարկանի օրինակելի ձև /ֆիզիկական անձ/	122
ՀԱՎԵԼՎԱԾ 4: Հայտ հանձնարարկանի օրինակելի ձև /իրավաբանական անձ	125
ՀԱՎԵԼՎԱԾ 5: Ֆինանսական հաշվետվություններ	128







ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ
արժեկտրոնային պարտատոմսեր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ







ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր
նոջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված
տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում
ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված
տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ,
որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

<u>Վահե Բաղայան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի նախագահ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>04.07.2023 թ</u> (ամսաթիվ)
<u>Սվետլանա Կարապետյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>04.07.2023 թ</u> (ամսաթիվ)
<u>Արմեն Քթոյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>04.07.23թ</u> (ամսաթիվ)
<u>Վահան Վարդանյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>04.07.23թ</u> (ամսաթիվ)
<u>Դանիել Հիլեր</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>




ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՁԴԱԳԻՐ
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ
արժեկտրոնային պարտատոմսեր


Գարեգին Դարբինյան <hr/> (անուն, ազգանուն)	Գործադիր տնօրեն, Տնօրինության նախագահ <hr/> (պաշտոն)	 <hr/> (ստորագրություն)	03.04.23թ. <hr/> (ամսաթիվ)
Արագած Ասատրյան <hr/> (անուն, ազգանուն)	Գործադիր տնօրենի տեղակալ, Զարգացման տնօրեն, Տնօրինության անդամ <hr/> (պաշտոն)	 <hr/> (ստորագրություն)	03.04.23թ. <hr/> (ամսաթիվ)
Աղասի Վարդանյան <hr/> (անուն, ազգանուն)	Թվային բանկինգի տնօրեն, Տնօրինության անդամ <hr/> (պաշտոն)	 <hr/> (ստորագրություն)	03.04.23թ. <hr/> (ամսաթիվ)
Սերգեյ Գասպարյան <hr/> (անուն, ազգանուն)	Բիզնեսի կառավարման տնօրեն, Տնօրինության անդամ <hr/> (պաշտոն)	 <hr/> (ստորագրություն)	03.04.23թ. <hr/> (ամսաթիվ)
Թաթուլ Թամրազյան <hr/> (անուն, ազգանուն)	Գլխավոր հաշվապահ, Տնօրինության անդամ <hr/> (պաշտոն)	 <hr/> (ստորագրություն)	03.04.23թ. <hr/> (ամսաթիվ)
Լուսինե Սիմոնյան <hr/> (անուն, ազգանուն)	Ռիսկերի կառավարման և համապատասխանության տնօրեն, Տնօրինության անդամ <hr/> (պաշտոն)	 <hr/> (ստորագրություն)	03.04.23թ. <hr/> (ամսաթիվ)



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ
արժեկտրոնային պարտատոմսեր

Լևոն Մովսիսյան	«Դայմենշն» ՓԲԸ		04.07.23թ.
(անուն, ազգանուն)	Գլխավոր Տնօրեն	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են՝

Գարեգին Դարբինյան	Գործադիր տնօրեն, Տնօրինության նախագահ		04.07.23թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես «Ֆասթ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Թողարկող կամ Ընկերություն) պարտատոմսերի ազդագրի (այսուհետ՝ Ազդագիր) ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում: Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Թողարկողի և/կամ «Դայմենշն» ՓԲԸ (այսուհետ՝ **Տեղաբաշխող**) գլխամասային գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջիններիս ինտերնետային կայքերում՝ www.fastbank.am, www.dimension.am:

2020, 2021 և 2022 թվականների դրությամբ ներկայացված բոլոր ֆինանսական տվյալների աղբյուրը Թողարկողի աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվություններն են:

Սույն ազդագրում ներկայացված տեղեկատվությունը, բացառությամբ տարեկան ֆինանսական հաշվետվությունների, անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

1. Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

*հայերեն՝ «Ֆասթ Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն,
ռուսերեն՝ «Фаст Банк» Закрытое Акционерное Общество,
անգլերեն՝ “Fast Bank” Closed Joint Stock Company*

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

*հայերեն՝ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ,
ռուսերեն՝ «Фаст Банк» ЗАО,
անգլերեն՝ “Fast Bank” CJSC,*

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք.Երևան, Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան փողոց 32/6

Թողարկողի պետական գրանցման համարն է՝ 88

Թողարկողի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան փողոց 32/6

ՀՎՀՀ 02251606

Կապի միջոցները

*հեռ.՝ (+ 374 10) 510 000,
էլ. փոստ՝ info@fcc.am
ինտերնետային կայք՝ www.fastbank.am*

Թողարկողի հիմնադրման երկիրը

Հայաստանի Հանրապետություն:

Կոնտակտային անձ

Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերին առնչվող հարցերի առաջացման դեպքում կարող եք դիմել՝ Գլխավոր գանձապետ Էդմոնդ Էլոյանին:

Էլ. հասցե՝ dealing@fcc.am

Հեռ.՝ 010 510000 (1501)

Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է 2011թ. սեպտեմբերի 6-ին հիմնադիրների ժողովի որոշմամբ: ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2022թ. նոյեմբերի 9-ի որոշմամբ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն ստացել է բանկային գործունեության լիցենզիա և ներկայանում է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ անվանմամբ: (Կենտրոնական բանկի կողմից գրանցման համար՝ 88):

- **2019 թ.-ի վերջի դրությամբ**

Ընկերությունն ունեցել է ավելի քան 130 հազար հաճախորդ, մոտ 39 մլրդ ՀՀ դրամի վարկային պորտֆել:

- **2020 թ.-ի վերջի դրությամբ**

Ընկերությունն ունեցել է ավելի քան 130 հազար հաճախորդ, մոտ 47,6 մլրդ ՀՀ դրամի վարկային պորտֆել:

- **2021 թ.-ի վերջի դրությամբ**

Ընկերությունն ունեցել է ավելի քան 139 հազար հաճախորդ, մոտ 52 մլրդ ՀՀ դրամի վարկային պորտֆել:

- **2022 թ.-ի վերջի դրությամբ**

Ընկերությունն ունեցել է ավելի քան 140 հազար հաճախորդ, մոտ 57 մլրդ ՀՀ դրամի վարկային պորտֆել:

Բանկի նպատակն է բանկային գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որն իրականացնում է բանկային գործունեություն՝ ՀՀ ԿԲ-ի կողմից բանկային գործունեության լիցենզիա ստանալու օրվանից:

Բանկը, բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա՝ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով բանկերին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները և կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է բանկային և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի և երաշխիքների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով և արտարժույթով գործարքների իրականացումը:

Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ է: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Որպես նորարարություն հարկ է նշել, որ Բանկն աշխատում է իր սեփական FC Bank ծրագրով:

Բանկի տեսլականը ներառում է լինել դինամիկ զարգացող ֆինանսական կառույց Հայաստանում և արագ ու որակյալ սպասարկման միջոցով հաճախորդներին մատուցել բազմաբնույթ ֆինանսական ծառայություններ:

Թե՛ մինչ առևտրային բանկ դառնալը, թե՛ բանկ դառնալուց հետո Ընկերությունն օրեցօր բարելավում է իր սպասարկման որակը, ավելացնում ծառայություններ, ինչպես նաև հաճախորդների սպասարկումն առավել հարմարավետ դարձնելու նպատակով ավելացնում մասնաճյուղերի թիվը՝ ոչ միայն Երևանում, այլև ՀՀ մարզերում:

Թողարկողի կանոնադրական կապիտալը

Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմում է 30,100,000,000 (երեսուն միլիարդ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, որը կազմված է 1,400,000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 21,500 (քսանմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Վահե Բադալյանը և Վիգեն Բադալյանը տիրապետում են Բանկի 100% բաժնետոմսերին, յուրաքանչյուրը 50%:

Թողարկողի մասնաճյուղերը

Թողարկողն ունի 30 մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը:

Թողարկողի կառուցվածքը

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն չի հանդիսանում ոչ մի ընկերության դուստր կամ կախյալ ընկերություն, ինչպես նաև չունի դուստր կամ կախյալ ընկերություններ: Թողարկողը չի համարվում խմբի անդամ:

Թողարկողի բիզնեսի նկարագիրը

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է 2011թ. սեպտեմբերի 6-ին հիմնադիրների ժողովի որոշմամբ: ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2022թ. նոյեմբերի 9-ի որոշմամբ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ն ստացել է բանկային գործունեության լիցենզիա և այսուհետ ներկայանալու է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ անվանմամբ (Կենտրոնական բանկի կողմից գրանցման համար՝ 88): 2022թ-ի տարեվերջի դրությամբ աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 48.7 մլրդ ՀՀ դրամ:

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա մատուցում է բանկային ծառայություններ ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ կորպորատիվ հաճախորդներին:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի ու երաշխիքների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով և արտարժույթով գործարքների իրականացումը:


2022թ-ի վերջի դրությամբ աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով Բանկի ընդհանուր ակտիվները կազմել են 68.3 մլրդ ՀՀ դրամ, ընդհանուր պարտավորությունները՝ 19.6 մլրդ ՀՀ դրամ: Ֆինանսական վիճակի մասին լրացուցիչ տեղեկությունները հասանելի են Բանկի ինտերնետային կայքում՝ www.fastbank.am/հաշվետվություններ հղումով:

Բանկը հաճախորդների սպասարկումն իրականացնում է Գլխամասային գրասենյակի և 30 մասնաճյուղերի միջոցով: Բանկը հանդիսանում է SWIFT միջազգային վճարային համակարգի, Visa միջազգային վճարային համակարգի անդամ, ArCa վճարային համակարգի լիիրավ անդամ և բաժնետեր, Հայաստանի Ֆոնդային Բորսայի և Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի մասնակից:

Թողարկողը 2022թ.-ի հուլիսին իրականացրել է դրամային և դոլարային արժույթներով պարտատոմսերի թողարկում: Վերոնշյալ պարտատոմսերը ներկայումս ցուցակված են ՀՀ Ֆոնդային Բորսայում և գնանշվում են Դայմենշն ՓԲԸ-ի կողմից:

Թողարկողի կազմակերպական կառուցվածքը

Բանկի կառուցվածք
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ



Թողարկողի տրամադրության տակ եղած ակտիվների մասին տեղեկատվություն

1.2 Ակտիվների որակը

1.2.1 *Ակտիվների համարժեքությունը*

2022թ-ի վերջի դրությամբ աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով Բանկի զուտ շահույթը կազմել է 5.9 մլրդ ՀՀ դրամ, իսկ կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունը կապիտալի միջին մեծությանը)՝ 16.7%: Լսերիջի գործակիցը (ընդհանուր ակտիվների մեծության հարաբերությունն ընդհանուր կապիտալի մեծությանը) կազմել է 1.40: Կապիտալի համարժեքությունը (նորմատիվային կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը) 56.0% է:

1.2.2 *Ակտիվների որակը*

2022թ-ի վերջի դրությամբ աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով Բանկի համախառն վարկային պորտֆելը կազմել է մոտ 57 մլրդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ թողարկողի վարկային պորտֆելում չաշխատող ակտիվների մասնաբաժինը կազմել է 7.5%: Բանկի եկամուտ գեներացնող ակտիվները կազմում են ընդհանուր ակտիվների 89.3%-ը:

1.2.3 *Ակտիվների իրացվելիությունը*

Թողարկողը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որակյալ և արագ իրացվելի ակտիվների, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար: 2022թ-ի դրությամբ Բանկի ընդհանուր իրացվելիության նորմատիվը կազմել է 15.2%:

2. Թողարկողին և Թողարկողի պարտավորումներին առնչվող ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկեր

Գոյություն ունեն Թողարկողին և վերջինիս գործունեության ոլորտին հատուկ մի շարք գործոններ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի ձևով ազդեցություն ունենալ թողարկված արժեթղթերի ռիսկայնության մակարդակի վրա:

Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթն ու դրանցից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկերի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից:

Ներդրողները պետք է հասկանան նաև, որ Ազդագիրը չի կարող ներկայացնել Թողարկողի գործունեության հետ կապված բոլոր ռիսկերը:

Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների հետ և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը:

Բանկն, ինչպես և ցանկացած տնտեսվարող սուբյեկտ, իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ, որոնցից հատկապես կարևոր են ստորև նշված ռիսկերի տեսակները.

Վարկային ռիսկ: Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ գործարքի մյուս կողմնի վիճակի չէ կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ:

ՖՀՄՍ համաձայն հաշվարկված բանկի վարկային պորտֆելը 30.06.2023թ-ի դրությամբ կազմում է 73 մլրդ դրամ, որի կազմում 90+ օր ժամկետանցություն ունեցող (չաշխատող) վարկերի կշիռը կազմում է

4.7%: Կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշների գծով բանկը գտնվում է նվազագույն սահմանաչափից էականորեն բարձր դիրքերում՝ 30.06.2023թ-ի դրությամբ Առաջին մակարդակի հիմնական հիմնական կապիտալ/ՌԿԱ հարաբերակցությունը կազմում է 46.1%, Ընդհանուր կապիտալ/ՌԿԱ հարաբերակցությունը՝ 47.1%:

Շուկայական ռիսկ: Շուկայական ռիսկն առաջանում է շուկայում տոկոսադրույքների, գների, փոխարժեքների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում: Շուկայական ռիսկն իրենից ներկայացնում է արտարժույթի, տոկոսադրույքի, գների փոփոխության հետ կապված ռիսկերի հանրագումար: Բանկն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկերի կառավարմանը, որոնց անբարենպաստ փոփոխությունը կարող է բացասաբար անդրադառնալ բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա և իրական վտանգ հանդիսանալ բանկային գործունեության ընթացքում:

Իրացվելիության ռիսկ: Երբ Ընկերության ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Ռիսկի այս տեսակը կապված է ֆինանսական պարտավորությունները՝ նորմալ և սթրեսային իրավիճակներում, ժամանակին մարելու կարողության հետ: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ դրամական ներհոսքի կրճատման, ներգրավման աղբյուրների սահմանափակման, մակրոտնտեսական իրավիճակի փոփոխության, օրենսդրական փոփոխությունների, նորմատիվային դաշտի փոփոխությունների և այլ պատճառներով: Իրացվելիության ռիսկի հետևանքով դժվարություններ կարող են առաջանալ Ընկերության ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելու ժամանակ, հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու հետ կապված:

Բանկի իրացվելիության ռիսկը գտնվում է ընդունելի մակարդակում: Ստորև ներկայացվում են իրացվելիության հիմնական նորմատիվների մասով Բանկի ցուցանիշները 30.06.2023թ-ի դրությամբ.

Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն	18%
Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն	242.5%

Ստորև ներկայացվում է 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չգեղջված պարտավորությունների հիման վրա: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով:

2022թ. դեկտեմբերի 31	Առևտրային ածանցյալ գործիքներ				Ավելի քան 5 տարի	
	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը	
Ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	2,549	-	-	-	-	2,549
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	1,475,591	3,446,707	3,368,717	-	8,291,015
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	264,474	339,375	806	-	604,655
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	34,808	409,970	1,162,657	-	1,607,435
Այլ փոխառու միջոցներ	-	69,109	338,101	1,854,614	2,392,231	4,654,055
Վարձակալության գծով պարտավորություններ	-	59,554	325,986	1,312,358	876,665	2,574,563
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	844,645	-	-	-	844,645
Ֆինանսական	-	815,800	-	-	-	815,800



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր

Երաշխավորություն
Ընդամենը չգեղջված
ֆինանսական
պարտավորությունն
եր

2,549	3,563,981	4,860,139	7,699,152	3,268,896	19,394,717
--------------	------------------	------------------	------------------	------------------	-------------------

Տոկոսադրույքի ռիսկ: Երբ շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա, տոկոսային եկամուտների և ի վերջո նաև կապիտալի վրա:

Կապիտալի զգայունությունը 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

<i>Արժույթ</i>	<i>Բազիսային կետերի ավելացում 2022թ.</i>	<i>Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2022թ.</i>	<i>Կապիտալի զգայունություն 2022թ.</i>
ՀՀ դրամ	3.18%	-	(702,300)
<i>Արժույթ</i>	<i>Բազիսային կետերի նվազում 2022թ.</i>	<i>Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2022թ.</i>	<i>Կապիտալի զգայունություն 2022թ.</i>
ՀՀ դրամ	3.18%	-	1,006,300

Արդարժության ռիսկ: Ռիսկի այս տեսակը սահմանվում է որպես փոխարժեքի փոփոխության հետևանքով Ընկերության ֆինանսական արդյունքների և կապիտալի վրա ունեցած բացասական ազդեցության ռիսկ:

Ստորև ներկայացվում է արտարժույթային դիրքերը 30.06.2023թ-ի դրությամբ.

Արժույթ	Արտարժույթային դիրք
USD	-0.2%
EUR	0.7%
RUB	0.6%
Այլ	0.1%

Տնտեսական ռիսկեր: ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասական հետևանք ունենալ բանկային համակարգի գործունեության վրա, մասնավորապես կարող է ուղեկցվել Ընկերության կողմից սպասվող եկամուտների նվազմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարություններով: Դա կարտահայտվի Ընկերության կողմից լրացուցիչ ծախսերի կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ: Մակրոտնտեսական բացասական զարգացումներին դիմակայելու բանկի կորդույթություններն ամրապնդելու նպատակով բանկն իրականացնում է սթրես-թեստեր՝ կիրառելով բացասական սցենարներ, որոնց արդյունքներով վերլուծվում է բանկի կապիտալի և իրացվելիության մակարդակի համարժեքությունը նման իրավիճակներում:

Օրենսդրական և նորմատիվային ռիսկեր: Լինելով ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկը՝ իրականացվող օրենսդրական և նորմատիվային փոփոխությունները հնարավոր է թե՛ դրական, և թե՛ բացասական ազդեցություն ունենան բանկերի գործունեության և ֆինանսական արդյունքների վրա: Վերոնշյալ ռիսկերի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Ընկերության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Բանկի գործունեության լիցենզավորման և կարգավորման նպատակը ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունն է, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկի ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված

փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Ընկերության գործառնությունների վրա: Բանկում գործում է Համապատասխանության ծառայություն, որի հիմնական խնդիրն է շարունակական հսկողություն իրականացնել գործող իրավական պահանջներին բանկի գործունեության համապատասխանության ուղղությամբ:

Գործառնական ռիսկեր: Բանկի գործունեության հետևանքով առաջացող հնարավոր կորուստների ռիսկն է: Գործառնական ռիսկը կարող է ի հայտ գալ ներքին գործընթացների, համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների բացասական ազդեցության արդյունքում, ինչը կարող է կորուստ բերել Թողարկողի կապիտալի և/կամ շահույթի վրա: Գործառնական ռիսկի հետևանքով կարող է վտանգվել նաև Թողարկողի համբավը: Ընկերությունում գործառնական ռիսկը կառավարվում է այդ գործառույթի համար նախատեսված ստորաբաժանման՝ Գործառնական ռիսկերի կառավարման ծառայության կողմից:

Մրցակցային ռիսկ: Տվյալ ռիսկն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես բանկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում Ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա, որի պատճառով Թողարկողը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը: Բանկում Ռազմավարական պլանավորման և բյուջետավորման գործընթացի շրջանակներում վերլուծության է ենթարկվում նաև մրցակցային դաշտը համոզվելու համար, որ բանկն ունի բավարար գործիքներ մրցակցությանը դիմակայելու համար:

Առաջին վճարողի ռիսկ և վճարման ռիսկ: Հաճախ իմաստ ունի տարանջատել այս երկու կատեգորիաները, քանի որ որոշ գործառնությունների գծով գործընկերոջ ռիսկը տարբեր է գործարքի կյանքի ընթացքում: Այն գործարքների դեպքում, երբ կողմերից երկուսն էլ փոխանակում են դրամական հոսքեր, ռիսկն ավելի բարձր է գործարքով նախատեսվող վճարումների իրականացման օրը (երբ Ընկերությունն իրականացնում է վճարումն առանց ստանալու հաստատումը, որ գործընկերոջ հանդիպակաց վճարումը հաշվեգրված է), քան վճարումների օրվան նախորդող ժամանակաշրջանում, երբ

Ընկերությունը հնարավորություն ունի զերծ մնալ իր վճարումների կատարումից, եթե ակնհայտ է, որ գործընկերը չի կատարելու իր վճարումը:

Գործընկերոջ ռիսկ, որի սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ գործընկերոջ գծով ռիսկի առավելագույն չափը, որը Բանկը կարող է ունենալ:

Բանկը ձգտում է նվազեցնել գործընկերոջ ռիսկը՝

- սահմանափակելով գործընկերների ցանկը կառավարելի քանակով,
- կիրառելով գործընկերների հաստատման հիմնավոր գործընթաց մինչև ցանկացած նոր գործընկերոջ հետ որևէ գործառնության կնքումը,
- սահմանափակելով Բանկի ռիսկը մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի նկատմամբ:

Կախված ռիսկի ծագման աղբյուրից՝ միջբանկային գործընկերոջ ռիսկը կարելի է տրոհել ռիսկերի հետևյալ տեսակների.

Մայր գումարի կորստի ռիսկ: Դրամական այն միջոցների կորստի ռիսկն է, որոնք Ընկերությունը գործընկերոջը տրամադրել է որպես վարկ կամ ստացվելիք փոխանցման դիմաց կանխավճար/փոխանցում և որոնք գործընկերը չի վերադարձրել կամ հետ չի վճարել ժամանակին՝ պայմանագրով սահմանված ամբողջ գումարի չափով (գործընկերոջ դեֆոլտ): Մայր գումարի կորստի ռիսկը հավասար է վճարման/փոխանցման ենթակա դրամական միջոցներին՝ գործարքի գումարին, եթե գործարքը նախատեսվում է կատարել մեկ փոխանցումով, կամ համապատասխան մնացորդային գումարին, եթե գործարքը նախատեսվում է կատարել մի քանի փոխանցումներով:

Թողարկողի ռիսկ: Գործընկերոջ ռիսկի համատարած օգտագործվող ենթակատեգորիա է հանդիսանում թողարկողի ռիսկը, որը սահմանվում է որպես արժեթուղթ թողարկողի դեֆոլտի կամ սնանկության հետևանքով հնարավոր կորստի հավանականություն: Ինչպես արդեն նշվել է, Բանկը կապիտալի համարժեքության տեսանկյունից գտնվում է միջինից էականորեն բարձր դիրքերում:

Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ բանկերի պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով:

Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Արտարժույթային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը, հատկապես առնչվելի է այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

Տոկոսադրույքի ռիսկը: Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Ընկերության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և, արդյունքում, իրացվելիության վրա:

3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է Բանկի խորհրդի և գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին:

Ընկերությունը ներգրաված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթների մեջ, որոնք կարող են էական ազդել Ընկերության ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա և/կամ կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

Ազդագրի գրանցման ներկայացման օրվա դրությամբ Թողարկողի գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են:

Ֆինանսական ոլորտում ունենալով ավելի քան 11 տարվա փորձ՝ բանկ դառնալու նպատակով, Բանկը վերջին տարիների ընթացքում ակտիվորեն իրականացրել է լայնածավալ տրանսֆորմացիոն միջոցառումներ՝ ֆինանսական, մարդկային ռեսուրսների ինտեգրման, ինչպես նաև ռիսկերի կառավարման ուղղությամբ: Ներկայումս Բանկն ունի շուրջ 700 աշխատակից, 30 մասնաճյուղ ՀՀ ողջ տարածքում և ավելի քան 140 հազար հաճախորդների կայուն բազա:

Բանկի առաջնային ուղղություններից են նոր բանկային տեխնոլոգիաների կիրառումը, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հաճախորդների կապիտալի հուսալի տեղաբաշխումը, վերջիններիս բանկային ծառայությունների ամբողջական փաթեթի առաջարկումն ու

տրամադրումը: Որպես բանկային ծառայությունների զարգացման առաջնահերթ և հեռանկարային ուղի՝ Բանկը դիտարկում է տարբեր տիպի բանկային ծառայությունների մատուցումը հեռակառավարման համակարգերի միջոցով, ինչպես նաև ծառայությունների հնարավորինս լայն շրջանակների մատուցման հասանելիությունը 24/7 ռեժիմով՝ ինչպես հեռակառավարման համակարգերի շրջանակներում, այնպես էլ Բանկի ավտոմատ ինքնասպասարկման սարքավորումների կիրառմամբ՝ կատարելացործելով առկա տեխնոլոգիական հնարավորությունները: Բանկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հաճախորդների բարձրակարգ և որակյալ սպասարկման վրա, աշխատակիցների համար պարբերաբար վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվում՝ վերջիններիս աշխատանքի արտադրողականության բարձրացման և սպասարկման ժամանակահատվածի կրճատման նպատակով: Անձնակազմի բարձր պրոֆեսիոնալիզմը Բանկին թույլ է տալիս արագ արձագանքել շուկայական ենթակառուցվածքում առկա փոփոխություններին, կենտրոնացնել և ուղղել անհրաժեշտ դրամական միջոցները առավել հեռանկարային ուղղություններում: Տարեցտարի Բանկի զարգացմանը և ընդլայնմանը զուգընթաց ավելացել է նաև Բանկի աշխատակիցների թվաքանակը: 31.12.2022թ.-ի դրությամբ բանկի աշխատակիցների ընդհանուր թվաքանակը կազմել է 700:

4. Թողարկողի աուդիտ իրականացնող անձ

Բանկի 2020, 2021 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է «ՔԵՅ ՓԻ ԷՄ ՋԻ» ՓԲԸ-ն:

2022 թվականի անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) կողմից:

Աուդիտորական Ընկերության հասցեն է՝ (Հայաստան, 0001, Երևան, Հյուսիսային պող., 1 շենք, 8-րդ հարկ, գրասենյակ 27, հեռ.՝ +374 (10) 500790, ինտերնետային կայքի հասցեն է՝ http://www.ey.com/en_am):

Աուդիտորական Ընկերության տնօրենն է Էրիկ Հայրապետյան:

Աուդիտորական Ընկերությանն ընտրությունն իրականացվում է մրցույթի հայտարարման միջոցով, ինչի արդյունքում էլ նկատելի հանգամանք է վերջինիս փոփոխությունը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: Աուդիտորական Ընկերության եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

5. Թողարկողի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Թողարկողի կանոնադրությունով սահմանված են Ընկերության կառավարման հետևյալ մարմինները՝

1. Բաժնետերերի ընդհանուր ժողով,
2. Խորհուրդ,
3. Խորհրդին կից կոմիտեներ /խորհրդակցական ձայնով/
4. Գործադիր մարմին՝ Տնօրինություն և Գործադիր տնօրեն:

Ընկերության Բաժնետերերի ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

Ընկերության Խորհուրդը բաղկացած է 5 անդամից և ընտրվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Ընկերության կանոնադրությանը համապատասխան:

Տնօրինությունը և Գործադիր տնօրենը կառավարում են Բանկի առօրյա ընթացիկ գործունեությունը:

Ընկերության Խորհուրդը.

Հ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1	Վահե Բադալյան	Խորհրդի նախագահ	34 տարի
2	Դանիել Հիլեր	Խորհրդի անդամ	51 տարի

3	Վահան Վարդանյան	Խորհրդի անդամ	33 տարի
4	Արմեն Քթոյան	Խորհրդի անդամ	19 տարի
5	Սվետլանա Կարապետյան	Խորհրդի անդամ	13 տարի

Ընկերության Տնօրինությունը.

Հ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1	Գարեգին Դարբինյան	Գործադիր տնօրեն- Տնօրինության նախագահ	26 տարի
2	Աղասի Վարդանյան	Թվային բանկինգի տնօրեն, Տնօրինության անդամ	20 տարի
3	Լուսինե Սիմոնյան	Ռիսկերի կառավարման և համապատասխանության տնօրեն, Տնօրինության անդամ	18 տարի
4	Սերգեյ Գասպարյան	Բիզնեսի կառավարման տնօրեն, Տնօրինության անդամ	14 տարի
5	Թաթուլ Թամրազյան	Գլխավոր հաշվապահ, Տնօրինության անդամ	17 տարի

Ընկերության բաժնետերերն են.

1. Վահե Բադալյան (մասնակցության չափը կանոնադրական կապիտալում՝ 50%)
2. Վիգեն Բադալյան (մասնակցության չափը կանոնադրական կապիտալում՝ 50%)

6. Պարտատոմսերի մասին հիմնական տվյալներ

6.1 Թողարկված պարտատոմսերի վերաբերյալ տեղեկություններ

Թողարկողի կողմից նախկինում թողարկված պարտատոմսերի վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև.

ISIN	Արժույթ	Թողարկման ծավալ	Տեղաբաշխված ծավալ/անվանական	Թողարկման Ամսաթիվ	Մարման ամսաթիվ	Արժեկտրոնի եկամտ.	Շուկա ստեղծող	Բորսայի ցուցակ
AMFSCRB25ER8	ՀՀ դրամ	500,000,000 ՀՀ դրամ	500,000,000 ՀՀ դրամ	13/07/2022	13/07/2024	11.50 %	<<Դայմենշն>> ՓԲԸ	Bbond
AMFSCRB26ER6	ԱՄՆ դոլար	3,000,000 ԱՄՆ դոլար	1,051,300 ԱՄՆ դոլար	13/07/2022	13/07/2024	6.25%	<<Դայմենշն>> ՓԲԸ	Bbond
AMFSCRB24ER1	ԱՄՆ դոլար	4,000,000 ԱՄՆ դոլար	835,000 ԱՄՆ դոլար	09/07/2020	09/07/2023	6.5%	«Արմսվիսթանկ» ՓԲԸ	Bbond
AMFSCRB22ER5	ԱՄՆ դոլար	1,000,000 ԱՄՆ դոլար	1,000,000 ԱՄՆ դոլար	20/07/2018	20/07/2020	6.9%	«Արմբրոկ» ԲԲԸ	Bbond
AMFSCRB21ER7	ՀՀ դրամ	100,000,000 ՀՀ դրամ	100,000,000 ՀՀ դրամ	20/07/2018	20/07/2020	10%	«Արմբրոկ» ԲԲԸ	Cbond

6.2 Թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները

Թողարկող պարտատոմսերն անվանական են, ոչ փաստաթղթային, անբաժանելի և ոչ փոխարկելի:

Թողարկող պարտատոմսերի դիմաց տոկոսային վճարումները կատարվելու են արժեկտրոնային միջոցով:

ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում, շրջանառվում և մարվում են ԱՄՆ դոլարով, իսկ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերը՝ ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարումները իրականացվելու են ԱՄՆ դոլարով:

Դոլարային պարտատոմսերի թողարկման դեպքում թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է առավելագույնը 10 000 000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար, իսկ դրամային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույնը 10 000 000 000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ:

Տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը որոշվելու է Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

Մեկ դոլարային պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, իսկ մեկ դրամային պարտատոմսինը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Թողարկողի կողմից:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Թողարկողի կողմից:

Թողարկողի կողմից անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման նպատակը միջոցների ներգրավումն է, որոնք ուղղվելու են ՓՄՁ վարկավորմանը և գործող պարտավորությունների վերաֆինանսավորմանը:

7. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները

(հազ. դրամ)

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Բանկերի, վարկային կազմակերպությունների և ներդրումային ընկերությունների համար

Ցուցանիշի անվանումը	2022 (աուդիտ անցած)	2021 (աուդիտ անցած)	2020 (աուդիտ անցած)
Ձուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	5,906,736	4,800,155	4,530,226

Սեփական կապիտալի միջին մեծություն	35,456,212	19,914,126	15,424,703
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	16.66%	24.10%	29.37%
Ջուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	5,906,736	4,800,155	4,530,226
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	65,229,626	59,235,791	49,494,089
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	9.06%	8.10%	9.15%
Ջուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	5,906,736	4,800,155	4,530,226
Գործառնական եկամուտ	12,608,919	11,542,753	8,803,244
Ջուտ շահույթի մարժա (NPM), %	46.85%	41.59%	51.46%
Գործառնական եկամուտ	12,608,919	11,542,753	8,803,244
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	65,229,626	59,235,791	49,494,089
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	19.33%	19.49%	17.79%
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	65,229,626	59,235,791	49,494,089
Սեփական կապիտալի միջին մեծություն	35,456,212	19,914,126	15,424,703
Սեփական կապիտալի մուտիպլիկատոր (EM)	1.84	297.46%	320.88%

Զուտ տոկոսային եկամուտ	11,036,924	10,331,948	8,308,432
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	59,254,216	55,282,568	46,123,566
Զուտ տոկոսային մարժա (NIM)	18.63%	18.69%	18.01%
Տոկոսային եկամուտ	13,458,719	13,270,027	10,912,499
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	59,254,216	55,282,568	46,123,566
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	22.71%	24.00%	23.66%
Տոկոսային ծախսեր	2,421,795	2,938,079	2,604,067
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	14,920,128	36,691,696	36,356,237
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	16.23%	8.01%	7.16%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	5,906,736	4,800,155	4,530,226
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	1,400	1,400	1,400
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	4,219.10	3,428.68	3,235.88
Սպրեդ	6.48%	16.00%	16.50%

Ամփոփ Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 1-ում:

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8. Ռիսկային գործոններ

Արժեթղթերում՝ ներառյալ պարտատոմսերում, ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, այդ իսկ պատճառով, ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել, որ Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի կարող է նաև առաջանալ այլ անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ ռիսկ, և ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Ընկերության վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի իրացվելիության և, հետևաբար, գնի անկմանը:

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը կերաշխավորվեն Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Ավանդների հատուցման իրավահարաբերությունները կարգավորվում են մասնավորապես «Ֆիզիկական անձանց բանկային

ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով և հարկ ենք համարում նշել, որ բանկային ավանդների հատուցումը վերաբերվում է միայն ֆիզիկական անձանց: Նշված օրենքի 3-րդ, 5-ից մինչև 10-րդ հոդվածներով սահմանվում են երաշխավորված դրամական միջոցների չափը, կարգն ու պայմանները:

Երաշխավորված դրամական միջոցների չափը դրամային բանկային ավանդի դեպքում տասնվեց միլիոն հայկական դրամ է, իսկ արտարժութային բանկային ավանդի դեպքում՝ յոթ միլիոն հայկական դրամ: Եթե ավանդատուն բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով, իսկ եթե ավանդատուն բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով: Ինչ վերաբերում է երաշխավորված ավանդների հաշվարկման կարգին և պայմաններին, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները: Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր է, ապա երաշխավորվում է նրա առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում իր մասնաբաժնի հանրագումարը՝ նշված օրենքով սահմանված կարգով և չափով: Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝

արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ:

Թողարկողի կողմից առավել էական ռիսկեր են դիտարկվում.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը՝ պարտատոմսերի շուկայի ծավալի և ցածր զարգացվածության պայմաններում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների առաջացումն է: Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերը ձեռք բերման գնից ավելի ցածր գնով:

Վարկային/դեֆոլտի ռիսկը՝ ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները մյուս կողմի նկատմամբ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս (ապահովված պարտատոմսերի դեպքում ավելի քիչ) իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում թողարկողի հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերը իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժութային ռիսկը՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում վնաս կրելու հավանականությունն է, որը կարող է առաջանալ փոխարժեքի տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպե՛ս Ներդրողի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա:

Քանի որ Ընկերությունը նախատեսում է թողարկել ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսեր, հետևաբար

ներդրումները և ներդրումների մարումներն իրականացվելու են ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով: Ուստի, այս իմաստով արտարժույթային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր իրենց դրամական միջոցները նշված պարտատոմսերում ներդրումներ կատարելու նպատակով ստիպված կլինեն փոխարկել այլ արժույթներից ՀՀ դրամի կամ ԱՄՆ դոլարի: Արտարժույթի ռիսկը առաջանում է ազգային դրամի փոխարժեքի տատանումների պատճառով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի պարտատոմսերից ստացված եկամուտների վրա, երբ ներդրողը պարտատոմսից ստացված եկամուտը գնահատում է ազգային արժույթով (օրինակ՝ ներդրում կատարելու համար ներդրողը ազգային արժույթը՝ ՀՀ դրամը փոխարկել է ԱՄՆ դոլարի և պարտատոմսի մարումից հետո ստացված ԱՄՆ դոլարը փոխարկել է ՀՀ դրամի): Մասնավորապես, ԱՄՆ դոլարի արժեզրկման դեպքում, պարտատոմսի մարումից ստացված գումարները (ներառյալ տոկոսները) փոխարկելու դեպքում, ՀՀ դրամով հաշվարկված եկամուտը կարող է նախատեսվածից ավելի քիչ լինել:

Տոկոսադրույքի ռիսկը՝ տոկոսադրույքի փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների կորուստներ կրելու վտանգն է, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, այն կարող է ազդել ինչպես պարտատոմսի գնի, եկամտաբերության, այնպես էլ դրանց գրավչության և իրացվելիության վրա:

Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը՝ որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Ընկերության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

9. Հիմնական տեղեկատվություն

Ընկերության արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են վարկային պորտֆելի աճի ֆինանսավորմանը, մասնավորապես՝ կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը, իսկ առանձին դեպքերում նաև գործող պարտավորությունների վերաֆինանսավորմանը:

10. Առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ կապված տեղեկատվություն

10.1 Արժեթղթի տեսակը և դասը

Թողարկվող պարտատոմսերն անվանական արժեկտրոնային պարտատոմսեր են, անբաժանելի են և փոխարկելի չեն: Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր: Թողարկվող պարտատոմսերը ապահովված չեն:

10.2 Երկիրը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքերում վերջիններս կարգավորվելու են ՀՀ օրենսդրության համաձայն:

10.3 Արժեթղթերի ձևը

Թողարկված պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրը կվարի «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ն (ՀՀ, ք.Երևան, Վ. Սարգսյան 26/1 հեռ.՝ +374 60 61 55 55, այսուհետ նաև՝ **Դեպոզիտարիա**) ըստ Դեպոզիտարիայի համապատասխան կանոնների և ընթացակարգերի:

10.4 Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը

Սույն ծրագրային ազդագրի շրջանակներում Բանկը նախատեսում է տեղաբաշխել 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ և 10,000,000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար անվանական ծավալով պարտատոմսեր:

Մեկ դրամային պարտատոմսին՝ 100 000 ՀՀ դրամ, իսկ դոլարային պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100 ԱՄՆ դոլար: Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում կազմում է 100,000 (մեկ հարյուր հազար) հատ, ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում 100,000 (մեկ հարյուր հազար) հատ:

10.5 Թողարկման արժույթը

Թողարկման արժույթը դրամային պարտատոմսերի դեպքում ՀՀ դրամն է, իսկ դոլարային պարտատոմսերի դեպքում՝ ԱՄՆ դոլարը:

10.6 Առաջարկվող արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվությունը հետևյալն է.

Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի Հոդված 31-ի՝ սնանկ ճանաչված բանկի լուծարման դեպքում Բանկի պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին, հետևյալ հերթականությամբ՝

- առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում.
- երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ

բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի.

- երրորդ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժույթային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով, ընդ որում՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 16 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում, տվյալ անձի՝ մինչև 16 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է երրորդ հերթով, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ չորրորդ հերթով:
- չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների.
- հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.
- վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.
- յոթերորդ՝ բանկի մասնակիցների պահանջները:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի և նույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով բանկի թողարկած անվանական արժեթղթերով, տվյալ դեպքում՝ Պարտատոմսերով, ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից), ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, որոնց հատուցումը երաշխավորված է նույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով, հետևյալ չափերով՝

- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն դրամային Պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը տասնվեց միլիոն ՀՀ դրամ է.
- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային Պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը յոթ միլիոն ՀՀ դրամ է.
- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային Պարտատոմսեր, և դրամային Պարտատոմսերի գումարը տասնվեց միլիոն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային Պարտատոմսերի գումարը՝ մինչև տասնվեց միլիոն ՀՀ դրամով.
- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային Պարտատոմսեր, և նրա դրամային Պարտատոմսերի

գումարը պակաս է յոթ միլիոն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային Պարտատոմսերի գումարն ամբողջությամբ և արտարժույթային Պարտատոմսերի գումարը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային Պարտատոմսերի տարբերության չափով:

Ներդրողի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները, ներառյալ՝ Պարտատոմսերում ներդրումները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժույթային ավանդները:

Երաշխավորված ավանդների հատուցման դեպք (այսուհետ՝ հատուցման դեպք) է համարվում «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին անվճարունակ ճանաչելը և ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը հաստատելը կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին սնանկ ճանաչելը (այսուհետ՝ բոլոր դեպքերի համար՝ անվճարունակ բանկ): Պարտատոմսերի վերադասակարգում կարող է տեղի ունենալ նոր արժեթղթերի թողարկման դեպքում, եթե դրանք համարվելու են

վերադաս, այն էլ միայն այն մասով, որը չի վերաբերվում ավանդների երաշխավորման հիմնադրամին:

10.7 Արժեթղթերից բխող իրավունքները

Պարտատոմսերից բխող իրավունքներն են՝

1. Ստանալ պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները և մարման գումարը՝ ըստ Ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում և արժեկտրոնային եկամուտը/պարտատոմսի մարման գումարը փոխանցվում է ներդրողի բանկային հաշվին Թողարկողի կողմից,
2. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենսդրությամբ թույլատրվող գործողություններ,
3. Գրավադրել պարտատոմսերը օրենսդրությամբ սահմանված կարգով,
4. Իր ցանկությամբ Բանկերի դեպքում օտարել պարտատոմսերը բացառապես Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ-ում (այսուհետ նաև՝ **Բորսա**) (ֆոնդային բորսայում առևտրի թույլտվություն ստացած և/կամ ցուցակված լինելու դեպքում) «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ **Օրենք**) սահմանված կարգով: Ընդ որում, ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Օրենքով արգելվում է կարգավորվող շուկայից (Բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր,
5. Օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

10.8 Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որը ենթակա է որոշման Թողարկողի կողմից:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային անվանական եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Թողարկողի կողմից:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում հաշվարկվելու և ներդրողներին վճարվելու է ՀՀ դրամով, իսկ ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ ԱՄՆ դոլարով:

Արժեկտրոնների հաշվարկման օրերը ենթակա են որոշման Թողարկողի Խորհրդի կողմից:

Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա վերջի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվելու է պարտատոմսերի հերթական արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ին, այսինքն՝ նշված ժամից հետո ռեեստրում գրանցված սեփականատերերը/անվանատերերը չեն կարող

ունենալ նախորդող արժեկտրոնային ժամանակաշրջանի համար (նախորդ եռամսյակ) վճարվող արժեկտրոնի ստացման իրավունք:

Թողարկողը արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրի հիման վրա պատրաստում է տեղեկանք պարտատոմսերի արժեկտրոնների գումարներ ստանալու իրավունք ունեցող անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր) վերաբերյալ՝ ներառյալ արժեկտրոնների գումարի փոխանցման համար անհրաժեշտ տվյալները:

Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարներն անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 0.1 ՀՀ դրամ և 0.01 ԱՄՆ դոլար ճշտությամբ (ընդ որում, կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոնների համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր (հարյուրավոր) թիվը): Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական (հարյուրերորդական) միավորը հավասար է 0-ից 4-ի և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական (հարյուրերորդական) միավորը հավասար է 5-ից 9-ի:

Արժեկտրոնի գումարները վճարվելու են անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում նշված բանկային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով՝ Հաշվի օպերատորի կողմից կվերադարձվի Թողարկողի համապատասխան բանկային հաշվին մեկ շաբաթվա ընթացքում: Այնուհետև Թողարկողը կգործադրի իրենից

կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու ուղղությամբ: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը վճարելու է նոտարի կամ դատարանի (<< օրենսդրությամբ սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն << օրենսդրության:

Տեղաբաշխման ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում Բանկի ինտերնետային կայքում www.fastbank.am, կիրապարակվի նաև տեղաբաշխվող պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման, ինչպես նաև պարտատոմսերի մարման ժամանակացույցը հստակ ամսաթվերով:

Արժեկտրոնի գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում հետևյալ բանաձևը՝

$$ԱԳ=(FV \times C) / k,$$

որտեղ՝

ԱԳ-ն արժեկտրոնի գումարն է,

FV-մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C-տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k-ն մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է (արժեկտրոնների եռամսյակային

վճարման դեպքում k=4)

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI=FV \times C / k \times DCS / DCC$$

AI-կուտակված արժեկտրոնային եկամուտն է,

FV-մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C-տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝
արտահայտված տոկոսներով,

k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը,
(արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում $k=4$),

Օրերի հաշվարկման պայմանականությունը համարվում է
Actual/Actual-ը, ընդ որում՝

DCS-գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի
արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման
օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան
պայմանականության դեպքում [D2M2Y2-D1M1Y1],

DCC- արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան
պայմանականության դեպքում [D3M3Y3-D1M1Y1],

D1M1Y1- գործարքի կատարման օրվա նախորդող արժեկտրոնի
արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,

D2M2Y2- գործարքի կատարման ամսաթիվն է,

D3M3Y3- գործարքի կատարման օրվա հաջորդող արժեկտրոնի
անվանական արժեքի վճարման ամսաթիվն է:

10.9 Արժեթղթերի մարման (մասնակի մարումների) ժամկետը և արժեքը

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու օրը ենթակա է որոշման
Թողարկողի կողմից:

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը միևնույն օրն է:

Մեկ դոլարային պարտատոմսի անվանական արժեքը կազմում է
100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, իսկ մեկ դրամային պարտատոմսինը՝
100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ: Պարտատոմսերի

սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվա նախորդող օրը: Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ մինչև ռեեստրի փակման պահը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/ անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը, իսկ մարման օրվա ոչ աշխատանքային լինելու դեպքում մարման կատարման օր է հանդիսանում մարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի մարման գումարները վճարվում են անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների ճիշտ չլինելու դեպքում Բանկը հարցում է ուղարկում ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա բանկային հաշվեհամարը ճշտելու և համապատասխան փոխանցում իրականացնելու համար: Ռեեստրում ճիշտ հաշվեհամարի բացակայության դեպքում վճարումը իրականացվում է ներդրողին առձեռն՝ Բանկի գլխամասային գրասենյակում: Պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են տվյալ թողարկման արժույթով: Հաշվի առնելով պարտատոմսերի անվանական արժեքի արժույթը և պարտատոմսերի մարման հետ կապված հնարավոր միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը, ներդրողները պետք է նկատի ունենան, որ մարման գումարների փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված միջնորդավճարների ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, հետևաբար նման ներդրողները մարման գումարները կստանան պահումներով՝ համապատասխան Բանկում և այլ միջնորդ բանկերում (եթե այդպիսիք կլինեն) գործող սակագների: Թողարկողը վճարման/մարման հանձնարարագրի(րերի) իրականացման

հետ միաժամանակ կտեղեկացնի Դեպոզիտարիային՝ ներկայացնելով համապատասխան հանձնարարական(ներ) պարտատոմսերի մարման վերաբերյալ: Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

10.10 Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը

Արժեթղթերի եկամտաբերությունը ենթակա է որոշման Թողարկողի կողմից:

10.11 Նոր թողարկման մասին տեղեկատվություն

Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ որոշումն ընդունվել է Թողարկողի Խորհրդի 29.06.2023 թվականի FBC0003DEC#23/06/29-01-05 որոշմամբ: Որոշմամբ ամրագրվել է այն առավելագույն ծավալը, որի շրջանակներում Թողարկողի առանձին որոշմամբ (որոշումներով) կարող է իրականացնել պարտատոմսերի տեղաբաշխում (տեղաբաշխումներ): Պարտատոմսերի տեղաբաշխումներին վերաբերող վերջնական պայմանները հաստատված են համարվում համաձայն Թողարկողի Խորհրդի որոշման (որոշումների):

10.12 Արժեթղթերի ազատ շրջանառության սահմանափակումների նկարագրությունը

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված, Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին Թողարկողի համապատասխան իրավասու մարմնի որոշմամբ պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի սահմանափակումից, եթե նման որոշում կայացվի Թողարկողի կողմից, ինչպես նաև Արժեթղթերի շուկայի մասին օրենքի, Կանոնակարգ 14-ի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերի:

Թողարկողը պարտադիր դիմելու է Բորսա պարտատոմսերը Բորսայում առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու համար համար, և համաձայն գործող օրենսդրության պարտատոմսերի առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու դեպքում վերջիններիս շրջանառությունը կարող է իրականացվել միայն Բորսայում:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել պարտատոմսերը Բորսայում (առևտրի թույլտվություն ստանալու և/կամ լինելու ցուցակված դեպքում) Օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (Բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթեր, բացառություն են կազմում ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները (ՀՀ ԿԲ և ֆինանսական. շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներ, թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքներ):

10.13 Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգը և նկարագիրը

Կարևոր ծանուցում: Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել

մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով գերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների փոփոխության արդյունքում առաջացած լրացուցիչ ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկումը կատարվում է ՀՀ Հարկային օրենսգրքի համաձայն:

Շահութահարկ վճարող են համարվում ՀՀ տարածքում գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Հարկվող շահույթը հարկատուի՝ ՀՀ հարկային օրենսգրքով /ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 104/ սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների /ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 110/ դրական տարբերությունն է: Ներկայումս շահութահարկի դրույքը կազմում է հարկվող շահույթի 18%: Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց շահութահարկի դրույքաչափը պարտատոմսերում ներդրումներից ստացված եկամտի (տոկոսներ, կապիտալի հավելած) համար կազմում է 10%: Բանկի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ներդրողների համար Բանկը հանդիսանում է հարկային գործակալ:

Եկամտային հարկ վճարող են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ռեզիդենտությունը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ: Հարկվող եկամուտը հաշվարկվում է, որպես ֆիզիկական անձի՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված համախառն եկամտի /ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 141/ և սահմանված նվազեցումների /ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 147/ դրական տարբերություն: Ֆիզիկական անձանց համար պարտատոմսերից ստացված միայն տոկոսային եկամուտն է ենթակա հարկման, իսկ հարկման դրույքաչափը ներկայումս սահմանված է 10%: Բանկի պարտատոմսերում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ներդրողների համար Բանկը հանդիսանում է հարկային գործակալ:

Թողարկվող պարտատոմսերում ներդրում իրականացնելու ցանկություն հայտնող անձինք պետք է հաշվի առնեն նաև 24/01/2020թ. ՀՀ ԱԺ կողմից ընդունված օրենքը, համաձայնորի փոփոխություններ են մտցվել ՀՀ հարկային օրենսգրքում, մասնավորապես՝

ա) Լրամշակվել է ՀՀ հարկային օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում նաև ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից, պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամուտը, բացառությամբ բանկերի կողմից թողարկված այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը փոքր է 2 տարուց:

բ) ա) կետով սահմանված արժեթղթեր ձեռք բերելու դեպքում ֆիզիկական անձանց՝ պարտատոմսերից ստացվող տոկոսային եկամուտը հարկման ենթակա չէ:

գ) Լրամշակվել է նաև ՀՀ հարկային օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի շահութահարկի վճարումից ազատվում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝

- ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների, ինչպես նաև տվյալ բաժնետոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով
- ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով:

Վերը նշված փոփոխությունները վերաբերում են ՀՀ ֆոնդային բորսայի՝ բաժնետոմսերի և պարտատոմսերի հիմնական ու երկրորդային ցուցակներում ընդգրկված արժեթղթերին և ուժի մեջ են մտել 2020թ. մարտի 1-ից և տարածվում են այն արժեթղթերի (դրանց դասերի) վրա,

որոնք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) են ոչ ուշ քան 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

11. Առաջարկի ժամկետները և պայմանները

Վերջնական պայմաններին վերաբերվող տեղեկությունները

1) Թողարկման վերջնական պայմանների հրապարակում

Բանկը ծրագրային ազդագրի լրացման գրանցումից հետո արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանների հրապարակումը նախատեսում է կատարել Բանկի պաշտոնական ինտերնետային հասցեում՝ <https://www.fastbank.am/>, յուրաքանչյուր տեղաբաշխումից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Բանկ ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ/երը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր: Պարտատոմսերի ձեռքբերման հայտի լրացումից և պատշաճ կերպով Բանկ ներկայացումից հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պետք է տեղաբաշխման նպատակով Բանկում բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարներին կատարի վճարում պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար: Պարտատոմսերի ձեռքբերման հայտի ներկայացումից հետո՝ մինչև տվյալ օրվա ժամը 16:30-ն, համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտերը համարվում են անվավեր:

Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի տվյալ օրվա գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Բանկը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.fastbank.am:

Տեղաբաշխման նպատակով Բանկում բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարներին դրամական միջոցների ստացումից և պարտատոմսերի ձեռքբերման հայտը ստանալուց անմիջապես հետո Բանկը Դեպոզիտարիային ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարական Թողարկողի տեղաբաշխման հաշվից համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար: Դեպոզիտարիայից ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ դեպո հաշվին պարտատոմսերի փոխանցման վերաբերյալ համապատասխան հաստատում ստանալուց անմիջապես հետո Բանկը տեղաբաշխման նպատակով բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարներից իր օգտագործման համար մատչելի է դարձնում համապատասխան հայտում նշված դրամական միջոցները:

Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո տեղաբաշխման նպատակով բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարին ստացված գումարները ենթակա են ետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտերը չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Բանկի կողմից ստացման ժամկետից: Պարտատոմսերի ձեռքբերման հայտը կհամարվի պատշաճ կերպով առաքված Բանկին, եթե այն առաքվել է Բանկի հետ միայն ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ Բանկ այցելելով) և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում: Լրացնելով համապատասխան հայտը:

Տեղաբաշխողի հետ կապի միջոցներն են՝

- Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0047, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6
- Էլեկտրոնային փոստ՝ info@fcc.am
- այցելելով Բանկի որևէ մասնաճյուղ:

Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտի ձևը ներկայացված է Ծրագրային ազդագրի Հավելված 3-ում: Իրավաբանական անձ ներդրողների համար հայտի ձևը ներկայացված է Ծրագրային ազդագրի Հավելված 4-ում:

Հայտին կից ներկայացվում են.

- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի (առկայության դեպքում սոցիալական քարտի կամ հանրային ծառայության համարանիշ պարունակող փաստաթղթի) պատճենները (կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ)
- Իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականը (ՀՀ պետական ռեգիստրում գրանցված ռեզիդենտ իրավաբանական անձի, ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց ՀՀ-ում ստեղծված մասնաճյուղերի և ներկայացուցչությունների դեպքում նաև գործող ղեկավարի գրանցման ներդիրը) կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքը, լիազորված անձի դեպքում նաև լիազորագիրը:

• **Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը**

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն չի նախատեսվում Թողարկողի կողմից:

Տեղաբաշխման ժամանակ հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին ետ վերադարձման գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը

Հայտի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտերը համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը: Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները պարտատոմսերի հայտերը պատշաճ կերպով առաքելուց, Բանկի կողմից հայտի ստացման հաստատումը/ձանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող ետ կանչել:

Նվազագույն և առավելագույն գումարները, որոնք կարող են նշվել ձեռքբերման (բաժանորդագրության) հայտերում:

Թողարկման ընթացքում կարող են լինել Պարտատոմսերի ձեռքբերման քանակական և գումարային սահմանափակումներ, եթե նման որոշում կայացվի Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները

Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձիք վճարումը կատարում են թողարկման նպատակով «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ում բացված ՀՀ դրամային 2620018773781001 և ԱՄՆ դոլարային 2620018773781002 համապատասխան տարանցիկ հաշվեհամարներին: Համապատասխան հայտերը բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտերի բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ը հաշվի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները գանձվում են համաձայն հաշվի օպերատորի կողմից հաստատված սակագների, որոնց հետ ներդրողը կարող է ծանոթանալ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ www.amx.am:

Առաջարկի արդյունքների հրապարակման ձևը և ժամկետները

Տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հրապարակային տեղաբաշխումն սկսելու պահից յուրաքանչյուր 30-րդ օրվա ավարտից հետո ոչ ուշ, քան 15-րդ օրը, ինչպես նաև

տեղաբաշխման ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, Թողարկողը և/կամ Տեղաբաշխողը պարտավոր է ՀՀ ԿԲ ներկայացնել հաշվետվություն՝ տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին՝ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով:

Նախապատվության իրավունքի իրականացման կարգը

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման ժամանակ պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ–հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն առաջնահերթություն ունի ներդրողը, ում հայտ–հանձնարարականի համաձայն վճարումը ավելի վաղ է ստացվել:

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

Առաջարկի գինը

Արժեթղթերի գինը

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{C}{f} \sum_{i=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f- արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C - տարեկան արժեկտրոնը մեկ պարտատոմսի անվանական արժեքի դիմաց,

Y - մինչև մարում եկամտաբերություն:

Ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ հաշվի օպերատորի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական արժեթղթերի հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

Հետևյալ հղումով ներդրողը կարող է տեսնել այն պահառուների անվանումները և գտնվելու վայրերը, որտեղ կարելի է արժեթղթերի հաշիվ բացել՝ https://cda.am/am/depository_account_operators :

Տեղաբաշխումը

Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը

Մասնակի երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու կապակցությամբ Թողարկողը կնքել է «Պարտատոմսերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագիր «Դայմենշն» փակ բաժնետիրական ներդրումային ընկերության հետ (գրանցված ԿԲ-ի կողմից, գրանցման համար 14, լիցենզիա 0014,

գրանցման հասցե՝ ՀՀ, գ. Երևան, Բաղրամյան 2, 27/1 ոչ բնակելի տարածք):

«Դայմենշն» ՓԲԸ-ն պարտավորվում է լավագույն ջանքերի գործադրմամբ, թողարկման ծավալի (տրանշի) նվազագույնը 5%-ի չափով մասնակի երաշխավորված եղանակով տեղաբաշխել Թողարկողի կողմից թողարկվող անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերը: Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխում սկսվելու է առանց տեղաբաշխողի կողմից մասնակի երաշխավորված 5%-ի: Տեղաբաշխողը գնելու է յուրաքանչյուր տրանշի թողարկվող պարտատոմսերի նվազագույնը 5%-ը մինչև տեղաբաշխման սկիզբը:

Տեղաբաշխման առանձին տրանշերի համար «Դայմենշն» ՓԲԸ-ն կարող է ներգրավել համատեղաբաշխող(ներ) կամ տեղաբաշխմանն աջակցող անձ(իք): Նման դեպքում վերջիններիս մասին տեղեկատվությունը կներկայացվի 10 (տասը) աշխատանքային օրում Թողարկողի էլեկտրոնային կայքում: Թողարկողը այդ մասին կտեղեկացնի ԿԲ կողմից ազդագրի լրացումը գրանցելուց հետո:

Տեղաբաշխման պայմանները

Համաձայն «Դայմենշն» ՓԲԸ-ի հետ կնքած «Պարտատոմսերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրի՝ Թողարկողը պարտավորվել է Տեղաբաշխողին վճարել ծառայության վճար, որը կազմում է տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.7%-ի (զրո ամբողջ յոթ տասնորդական տոկոս) չափով հաջողության վճար:

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխում իրականացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի ցանկացած մասնաճյուղից «Դայմենշն» ՓԲԸ-ի բացված հաշվեհամարին:

Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն

(սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրավար՝ վերջինիս համակարգում գործող որևէ Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (այսուհետ նաև **Դեպոզիտարիայի ենթապահառու**)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ (հեռ.՝ +374 60 615 555, +374 10 543 321):

Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշիվ:

12. Թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Սույն Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո Թողարկողը պարտադիր դիմելու է Բորսային տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու համար: Ընդ որում պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու դիմումը կարող է չբավարարվել Բորսայի կողմից:

Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ և պարտատոմսերի ձեռքբերման հայտերի հիման վրա դրանց դիմաց կատարված վճարումները կվերադարձվեն 10 աշխատանքային օրվա ընթացքում: Տեղաբաշխման արդյունքում առևտրի թույլտվություն ստանալու համար Բորսայի կողմից

սահմանված նվազագույն անհրաժեշտ ծավալը չբավարարելու դեպքում՝ տեղաբաշխումը կհամարվի չեղյալ իր հետագա գործընթացներով: Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, մինչև փաստացի վճարման օրը կուտակված արժեկտրոնային եկամուտները ևս ենթակա են վերադարձման գնորդներին:

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի ոչ մի շուկայում:

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Բորսայի կողմից տեղաբաշխված պարտատոմսերը առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու դեպքում Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր:

Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր պարտատոմսերի սեփականատերերին և անվանատերերին նման պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

13. Լրացուցիչ տեղեկատվություն

Բացի սույն Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից (2020, 2021, 2022 թվականների համար), որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են հավելված 5-ում:

Թողարկողի վարկանիշը

Թողարկողի վարկանշող կազմակերպությունների կողմից չի վարկանշվել:

ԲԱԺԻՆ 3.ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14. Անկախ աուդիտորները

Բանկի 2020, 2021 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է «ԲԵՅ ՓԻ ԷՄ ԶԻ» ՓԲ ընկերությունը:

2022 թվականի անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) կողմից:

Աուդիտորական Ընկերության հասցեն է՝ (Հայաստան, 0001, Երևան, Հյուսիսային պող., 1 շենք, 8-րդ հարկ, գրասենյակ 27, հեռ.՝ +374 (10) 500790, ինտերնետային կայքի հասցեն է՝ http://www.ey.com/en_am):

Աուդիտորական Ընկերության տնօրենն է Էրիկ Հայրապետյան:

Աուդիտորական Ընկերության ընտրությունն իրականացվում է մրցույթի հայտարարման միջոցով, ինչի արդյունքում էլ նկատելի հանգամանք է վերջինիս փոփոխությունը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: Աուդիտորական Ընկերության եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

15. Ռիսկային գործոններ

Ցանկացած տնտեսավարող սուբյեկտի պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ:

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործառնությունների, ֆինանսական իրավիճակի կամ արդյունքների վրա: Ելնելով նշվածից՝ Թողարկողը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար: Մասնավորապես՝ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ռիսկերը.

Վարկային ռիսկ: Ընկերության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված գործընկերոջ վարկունակության, վարկառուի կողմից պարտավորության չկատարելու կամ մասնակի կատարելու հետ, որոնք Ընկերությանը կարող են կորուստներ պատճառել: Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով Թողարկողը կարևորում է վարկավորման գործընթացում վարկավորման պատշաճ ստանդարտների պահպանումը, վարկունակության վերլուծությունը, վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, տարբեր տեսակի կենտրոնացումների գծով հսկողությունը:

Ընկերության հիմնական գործունեությունը վարկերի տրամադրումն է: Համապատասխանաբար, վարկային ռիսկը մեծագույն կարևորություն ունի Ընկերության ռիսկերի կառավարման մեջ: Զգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Ընկերությունը կիրառում է տարբեր մեթոդներ վարկային ռիսկերը բացահայտելու, գնահատելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով: Ռիսկերի կառավարումն իրականացվում է ներքին իրավական ակտերով կառավարման մարմինների, գործընթացում ներգրավված ստորաբաժանումների սահմանված լիազորությունների շրջանակներում:

Վարկավորման գործընթացն իրականացվում է համաձայն Բանկի Խորհրդի կողմից հաստատված վարկային քաղաքականության, որտեղ

հստակ սահմանված են բոլոր առնչվող ընթացակարգերը և պահանջները: Համաձայն Ռիսկերի կառավարման քաղաքականության՝ Ընկերությունը բաշխում է վարկային ռիսկի մակարդակը՝ սահմանելով վարկային ռիսկի ներքին սահմանաչափեր (մեկ անձի գծով, առանձին պրոդուկտների և ճյուղերի մակարդակով):

Վարկային հայտերի անաչառ վերլուծության նպատակով բիզնես ստորաբաժանումներից զատ բանկում ստեղծված է Վարկային վերլուծությունների ծառայությունը, որը պատասխանատու է վարկային հայտերում ամփոփված տեղեկատվությունը որպես «երկրորդ աչք» վերլուծելու և վարկային ռիսկերը հնարավորինս նվազեցնելու համար: Վարկերի տրամադրման վերաբերյալ որոշումները կայացվում են վարկային կոմիտեի կողմից: Վարկային հայտերի գնահատումը և հաստատումը կատարվում է ելնելով վարկառուների արդյունավետության հիմնական ցուցանիշներից՝ վարկային պատմությունից, ֆինանսական վիճակից, կառավարման որակից, նպատակային օգտագործումից, գրավից և այլն:

Բանկում արդեն տրամադրված վարկերի վիճակի ընթացիկ հսկողությունն իրականացվում է Մոնիտորինգի ծառայության կողմից, իսկ պորտֆելային մակարդակով վարկային ռիսկի, դրա առանձին ուղղություններով կենտրոնացման հսկողությունն իրականացվում է Ֆինանսական ռիսկերի կառավարման ծառայության կողմից:

Վարկերի մեծ մասի դեպքում վարկային ռիսկի նվազեցման նպատակով Ընկերությունն ընդունում է երկրորդային ապահովման միջոց՝ գրավ կամ անձնական երաշխավորություն: Վարկային պորտֆելի գերակշիռ մասն ապահովված է գրավ հանդիսացող գույքով:

Ընկերությունը սկզբունքորեն կիրառում է ռիսկերի կառավարման միևնույն քաղաքականությունը հաշվեկշռային և հետհաշվեկշռային ակտիվների համար:

ՖՀՄՍ համաձայն հաշվարկված բանկի վարկային պորտֆելը 30.06.2023թ-ի դրությամբ կազմում է 73 մլրդ դրամ, որի կազմում 90+ օր ժամկետանցություն ունեցող (չաշխատող) վարկերի կշիռը կազմում է 4.7%: Կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշների գծով բանկը գտնվում է նվազագույն սահմանաչափից էականորեն բարձր դիրքերում՝ 30.06.2023թ-ի դրությամբ Առաջին մակարդակի հիմնական

հիմնական կապիտալ/ՌԿԱ հարաբերակցությունը կազմում է 46.1%,
Ընդհանուր կապիտալ/ՌԿԱ հարաբերակցությունը՝ 47.1%:

Շուկայական ռիսկ: Շուկայական ռիսկն առաջանում է շուկայում տոկոսադրույքների, գների, փոխարժեքների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում: Շուկայական ռիսկն իրենից ներկայացնում է արտարժույթի, տոկոսադրույքի, գների փոփոխության հետ կապված ռիսկերի հանրագումար: Բանկն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկերի կառավարմանը, որոնց անբարենպաստ փոփոխությունը կարող է բացասաբար անդրադառնալ բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա և իրական վտանգ հանդիսանալ բանկային գործունեության ընթացքում:

Իրացվելիության ռիսկ: Երբ Ընկերության ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Ռիսկի այս տեսակը կապված է ֆինանսական պարտավորությունները՝ նորմալ և սթրեսային իրավիճակներում, ժամանակին մարելու կարողության հետ: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ դրամական ներհոսքի կրճատման, ներգրավման աղբյուրների սահմանափակման, մակրոտնտեսական իրավիճակի փոփոխության, օրենսդրական փոփոխությունների, նորմատիվային դաշտի փոփոխությունների և այլ պատճառներով: Իրացվելիության ռիսկի հետևանքով դժվարություններ կարող են առաջանալ Ընկերության ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելու ժամանակ, հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու հետ կապված:

Բանկի իրացվելիության ռիսկը գտնվում է ընդունելի մակարդակում: Ստորև ներկայացվում են իրացվելիության հիմնական նորմատիվների մասով Բանկի ցուցանիշները 30.06.2023թ-ի դրությամբ.

Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով	18%
--	-----

արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն	
Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն	242.5%

Ստորև ներկայացվում է 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չգեղջված պարտավորությունների հիման վրա: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով:

<i>2022թ. դեկտեմբերի 31</i>	<i>Առևտրային ածանցյալ գործիքներ</i>			<i>Ավելի քան 5 տարի</i>		
	<i>Մինչև 3 ամիս</i>	<i>3-12 ամիս</i>	<i>1-5 տարի</i>	<i>Ավելի քան 5 տարի</i>	<i>Ընդամենը</i>	
Ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	2,549	-	-	-	-	2,549
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	1,475,591	3,446,707	3,368,717	-	8,291,015
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	264,474	339,375	806	-	604,655
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	34,808	409,970	1,162,657	-	1,607,435
Այլ փոխառու միջոցներ	-	69,109	338,101	1,854,614	2,392,231	4,654,055
Վարձակալության գծով պարտավորություններ	-	59,554	325,986	1,312,358	876,665	2,574,563
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	844,645	-	-	-	844,645
Ֆինանսական երաշխավորություն	-	815,800	-	-	-	815,800
Ընդամենը չգեղջված ֆինանսական պարտավորություններ	2,549	3,563,981	4,860,139	7,699,152	3,268,896	19,394,717

եր

Տոկոսադրույքի ռիսկ: Երբ շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա, տոկոսային եկամուտների և ի վերջո նաև կապիտալի վրա:

Կապիտալի զգայունությունը 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

<i>Արժույթ</i>	<i>Բազիսային կետերի ավելացում 2022թ.</i>	<i>Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2022թ.</i>	<i>Կապիտալի զգայունություն 2022թ.</i>
ՀՀ դրամ	3.18%	-	(702,300)
<i>Արժույթ</i>	<i>Բազիսային կետերի նվազում 2022թ.</i>	<i>Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2022թ.</i>	<i>Կապիտալի զգայունություն 2022թ.</i>
ՀՀ դրամ	3.18%	-	1,006,300

Արտարժույթային ռիսկ: Արտարժույթային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոփոխության փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից:

Ընկերությունը կիրառում է արտարժույթային ռիսկի կառավարման հետևյալ սկզբունքները.

- Ընկերությունը ձգտում է փակել արտարժույթային ռիսկերը և զերծ մնալ սպեկուլյատիվ գործառնություններից:
- Ընկերությունն արտարժույթային շուկաներում չի բացում սպեկուլյատիվ ռիսկեր: Ածանցյալ գործիքները կարող են օգտագործվել միայն հեջավորման նպատակով՝ փակելու ռիսկը:
- Ընկերությունը ձգտում է համապատասխանեցնել ակտիվների և պարտավորությունների արժույթներն ինչպես գումարներով, այնպես էլ ժամկետներով՝ պաշտպանված լինելու համար փոխարժեքային տատանումներից:
- Ընկերությունը վերահսկում է արտարժույթային ռիսկն օրական կտրվածքով:

Ընկերության Դիլինգի ծառայությունը վերահսկում է արտարժույթի ռիսկը գործառնական մակարդակում՝ կառավարելով արժույթային բաց ռիսկն ԱՄՆ դոլարի արժեզրկման և այլ մակրոտնտեսական ցուցանիշների գնահատումների հիման վրա, ինչը Ընկերությանը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել վնասներն ազգային արժույթի նկատմամբ փոխարժեքի զգալի տատանումներից:

Ստորև ներկայացվում է արտարժույթային ռիսկերը 30.06.2023թ-ի դրությամբ.

Արժույթ	Արտարժույթային ռիսկ
USD	-0.2%
EUR	0.7%
RUB	0.6%
Այլ	0.1%

Ընդհանուր տնտեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Ընկերության գործունեության վրա: Բոլոր տեսակի իրադարձությունները, որոնք կհանգեցնեն Ընկերության վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմանը, հաճախորդների կողմից Ընկերության հուսալիության հանդեպ կասկածանքի կամ բացասական վերաբերմունքի, կարող են էապես ազդել Ընկերության գործունեության վրա: Դա կարտահայտվի Ընկերության կողմից լրացուցիչ ծախսերի

կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ: Ընկերությունում ռիսկերի արդյունավետ կառավարման և նվազեցման նպատակով պարբերաբար իրականացվում է տնտեսության վիճակի հնարավոր բացասական փոփոխությունների ազդեցության տարբեր սցենարային իրավիճակների վերլուծություններ: Նման վերլուծությունները և սցենարները քննարկվում են մշտապես Ֆինանսական ծառայության կողմից: Նման հաճախականությունը հնարավորություն է տալիս արագ արձագանքել շուկայում սպասվող կամ տեղի ունեցող փոփոխություններին և մշակել գործողությունների պլան փոփոխված իրավիճակին համապատասխան: Ֆինանսական ռիսկերի կառավարման ծառայության կողմից եռամսյակային պարբերականությամբ իրականացվում են նաև սթրես-թեստեր և սցենարային վերլուծություններ, որոնք հնարավորություն են տալիս բանկին մշակել համապատասխան պլաններ և պատրաստ լինել նաև բացասական զարգացումների պարագայում ապահովել բանկի գործունեության կայունությունը:

Մրցակցային ռիսկ: Տվյալ ռիսկն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես բանկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում Ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա, որի պատճառով Թողարկողը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը: Բանկում Ռազմավարական պլանավորման և բյուջետավորման գործընթացի շրջանակներում վերլուծության է ենթարկվում նաև մրցակցային դաշտը համոզվելու համար, որ բանկն ունի բավարար գործիքներ մրցակցությանը դիմակայելու համար:

Թողարկողի ռիսկ: Գործընկերոջ ռիսկի համատարած օգտագործվող ենթակառուցվածք է հանդիսանում թողարկողի ռիսկը, որը սահմանվում է որպես արժեթուղթ թողարկողի դեֆոլտի կամ սնանկության հետևանքով հնարավոր կորստի հավանականություն: Ինչպես արդեն նշվել է, Բանկը կապիտալի համարժեքության տեսանկյունից գտնվում է միջինից էականորեն բարձր դիրքերում:

Ընդհանուր տնտեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Ընկերության

գործունեության վրա: Բոլոր տեսակի իրադարձությունները, որոնք կհանգեցնեն Ընկերության վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմանը, հաճախորդների կողմից Ընկերության հուսալիության հանդեպ կասկածանքի կամ բացասական վերաբերմունքի, կարող են էապես ազդել Ընկերության գործունեության վրա: Դա կարտահայտվի Ընկերության կողմից լրացուցիչ ծախսերի կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ: Ընկերությունում ռիսկերի արդյունավետ կառավարման և նվազեցման նպատակով պարբերաբար իրականացվում է տնտեսության վիճակի հնարավոր բացասական փոփոխությունների ազդեցության տարբեր սցենարային իրավիճակների վերլուծություններ: Նման վերլուծությունները և սցենարները քննարկվում են մշտապես Ֆինանսական ծառայության կողմից: Նման հաճախականությունը հնարավորություն է տալիս արագ արձագանքել շուկայում սպասվող կամ տեղի ունեցող փոփոխություններին և մշակել գործողությունների պլան փոփոխված իրավիճակին համապատասխան: Ֆինանսական ռիսկերի կառավարման ծառայության կողմից եռամսյակային պարբերականությամբ իրականացվում են նաև սթրես-թեստեր և սցենարային վերլուծություններ, որոնք հնարավորություն են տալիս բանկին մշակել համապատասխան պլաններ և պատրաստ լինել նաև բացասական զարգացումների պարագայում ապահովել բանկի գործունեության կայունությունը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Ընկերության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Բանկային գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ավանդատուների, ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է տնտեսական նորմատիվների և ռիսկերի կառավարման համակարգերի նկատմամբ պահանջների սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Ընկերության գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա: Ընկերությունը

գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում: Օրենսդրական պահանջներին բանկի գործունեության համապատասխանության հսկողությունն իրականացնելու համար Բանկում գործում է Համապատասխանության ծառայություն, որը շարունակական սկզբունքով հետևում է օրենսդրական դաշտում կատարվող և նախատեսվող բոլոր փոփոխություններին և ապահովում բանկում իրազեկվածությունը և հսկում դրանց համապատասխանությանն ուղղված միջոցառումների պլանավորման և իրականացման գործընթացները:

Գործընկերոջ ռիսկ: Գործընկերոջ ռիսկի սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ գործընկերոջ գծով ռիսկի առավելագույն չափը, որը Ընկերությունը կարող է ունենալ:

Ընկերությունը ձգտում է նվազեցնել գործընկերոջ ռիսկը՝

- Սահմանափակելով գործընկերների ցանկը կառավարելի քանակով,
- Կիրառելով գործընկերների հաստատման հիմնավոր գործընթաց մինչև ցանկացած նոր գործընկերոջ հետ որևէ գործառնության կնքումը,
- Սահմանափակելով Ընկերության ռիսկը մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի նկատմամբ:

Գործառնական ռիսկ: Գործառնական ռիսկն այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, կեղծիքից կամ արտաքին միջավայրի իրադարձություններից: Երբ վերահսկողությանը չի հաջողվում կատարել իր գործառնությունները, գործառնական ռիսկերը կարող են վնասել Ընկերության հեղինակությանը, ունենալ իրավական հետևանքներ, կամ հանգեցնել ֆինանսական կորուստների: Ընկերությունը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն միջոցներ է ձեռնարկում կառավարելու դրանք, ինչպես ներքին հսկողության մեխանիզմների, այնպես էլ հնարավոր ռիսկերի մոնիթորինգի և դրանց հակազդման միջոցով:

Ներքին հսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատում, մուտքի, ծրագրային համակարգերի և տեղեկատվության հասանելիության, լիազորման և համադրման

ընթացակարգեր, աշխատակազմի կրթության և գնահատման գործընթացներ:

Կազմակերպությունում գործառնական ռիսկերի կառավարումը կանոնակարգված է համապատասխան ներքին իրավական ակտերով: Կազմակերպությունում գործում է Գործառնական ռիսկերի կառավարման ծառայություն, որը մշակում և համապատասխան կառավարման մարմինների հաստատմանն է ներկայացնում Գործառնական ռիսկի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը, մշտապես հսկողություն է իրականացնում տվյալ ռիսկերի գծով և մշակում ներքին հսկողության համակարգի բարելավման միջոցառումներ:

Գիտակցելով վերը նշված ռիսկերը և դրանց կառավարման համար արդյունավետ ներքին հսկողության համակարգի անրաժեշտությունը՝ Ընկերությունում ընդունվել են Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր, ձևավորվել է Հսկողական բլոկ, որը ներառում է հիմնական ռիսկատեսակների կառավարման հսկողական գործառույթների իրականացնող ստորաբաժանումներ:

Միևնույն ժամանակ, մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխությունները և դրանցով պայմանավորված մարտահրավերները, Ընկերությունը շարունակաբար ջանքեր է գործադրում ներքին հսկողության համակարգի բարելավման ուղղությամբ՝ նպատակ ունենալով զսպել հնարավոր ռիսկերը, ապահովել ծրագրավորված ակտիվապասիվային և եկամտային ցուցանիշների կատարումը:

Կադրերի հոսունության ռիսկ, որն իրենից ներկայացնում է մրցունակ կադրերի աշխատանքից ազատման դեպքում Ընկերության վնասներ կրելու հավանականությունը: Բարձրորակ մասնագետների առկայությունը Ընկերության աշխատակազմում շատ կարևոր է մրցունակ լինելու և պլանավորված աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Նման մասնագետների նկատմամբ մեծ պահանջարկի պատճառով առաջանում է նաև կադրերի հոսունության ռիսկ, որի ազդեցությունը չեզոքացնելու նպատակով Ընկերության ղեկավարությունը նպատակային և հետևողական միջոցառումներ է իրականացնում աշխատողների որակավորման բարձրացման, նյութական խրախուսման և սոցիալական ապահովման խնդիրների

բարելավման ուղղությամբ: Ձևավորված պրակտիկայի համաձայն՝ տարին մեկ անգամ նախատեսվում է իրականացնել աշխատավարձերի վերանայում: Խորհրդի կողմից հաստատվել է Աշխատակիցների վարձատրության հաշվարկման և վճարման կարգը: Կազմակերպվում են անվճար անգլերենի դասընթացներ, ներքին վերապատրաստումներ, յուրաքանչյուր ստորաբաժանում ունի իր թեյնինգների տարեկան ծրագիրը:

16. Տեղեկատվություն Թողարկողի մասին

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆասթ Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն,
ռուսերեն՝ «Фаст Банк» Закрытое Акционерное Общество,
անգլերեն՝ “Fast Bank” Closed Joint Stock Company

Թողարկողի կրճապ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ,
ռուսերեն՝ «Фаст Банк» ЗАО,
անգլերեն՝ “Fast Bank” CJSC,

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

Ընկերությունը գրանցված է ՀՀ Կենտրոնական բանկում,
գրանցման համարը՝ 88

Թողարկողի գրնվելու վայրն է՝

ՀՀ, ք.Երևան, Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան փողոց 32/6

Ստեղծման տվյալներ՝

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է 2011թ. սեպտեմբերի 6-ին հիմնադիրների ժողովի որոշմամբ: ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2022թ. նոյեմբերի 9-ի որոշմամբ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն ստացել է բանկային գործունեության

լիցենզիա և այսուհետ ներկայանալու է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ անվանմամբ:
(Կենտրոնական բանկի կողմից գրանցման համար՝ 88):

2022 թ.-ի վերջի դրությամբ Բանկն ունեցել է ավելի քան 140 հազար
հաճախորդ, մոտ 57 մլրդ ՀՀ դրամի վարկային պորտֆել:

Ներկայումս այն ունի 14 մասնաճյուղ Երևանում և 16 մասնաճյուղ՝
ՀՀ տարբեր մարզերում:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+ 374 10) 510 000,
էլ. փոստ՝ info@fcc.am
ինտերնետային կայք՝ www.fastbank.am

Թողարկողի հիմնադրման երկիրը՝

Հայաստանի Հանրապետություն:

Թողարկողի մասնաճյուղերը

Մասնաճյուղերի հասցեներն են՝

Ներկայումս Բանկն ունի 14 մասնաճյուղ Երևանում և 16 մասնաճյուղ՝ ՀՀ
տարբեր մարզերում:

«Գլխամասային գրասենյակ»	Հասցե՝ 0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6
«Շրջանային» մասնաճյուղ	Հասցե՝ 0009, ՀՀ, ք. Երևան, Արսլան փողոց 37 շենք
«Տիգրան Մեծ» մասնաճյուղ	Հասցե՝ 0009, ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծ 29/33
«Մովսես Խորենացի» մասնաճյուղ	Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Խորենացի 24
«Սեբաստիա» մասնաճյուղ	Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Սեբաստիա 123/2

«Բաղրամյան» մասնաճյուղ	Հասցե՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 1/4
«Շենգավիթ» մասնաճյուղ	Հասցե՝ 0046, ՀՀ, ք. Երևան, Բագրատունյանց 26 շենք, 62 և 61/1
«Ալեք Մանուկյան» մասնաճյուղ	Հասցե՝ 0070, ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 7
«Էրեբունի» մասնաճյուղ	Հասցե՝ 0005, ՀՀ, ք. Երևան, Էրեբունի փողոց 14/1, 22/1
«Դավթաշեն» մասնաճյուղ	Հասցե՝ 0046, ՀՀ, ք. Երևան, Տ, Պետրոսյան 1/1
«Կոմիտաս» մասնաճյուղ	Հասցե՝ 0014, ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պողոտա 58 շենք, 40 առևտրի սրահ
«Ավան» մասնաճյուղ	Հասցե՝ 0060, ՀՀ, ք. Երևան, Ավան, Խուդյակովի փողոց 69/1
«Հարավ-Արևմտյան» մասնաճյուղ	Հասցե՝ 0060, ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Անդրանիկի փողոց 113/6
«Զվարթնոց» մասնաճյուղ	Հասցե՝ ք.Երևան, Զվարթնոց միջազգային օդանավակայան,
«Թումանյան» մասնաճյուղ	Հասցե՝ 0002, ՀՀ, ք.Երևան, Թումանյան փողոց, 24 շենք, 48 տարածք
«Գյումրի» մասնաճյուղ	Հասցե՝ 3104, ՀՀ, ք. Գյումրի, Տիգրան Մեծ 29/33
«Էջմիածին» մասնաճյուղ	Հասցե՝ 1101, ՀՀ, ք. Էջմիածին, Մաշտոցի պող, 14/79
«Վանաձոր» մասնաճյուղ	Հասցե՝ 2001, ՀՀ, ք. Վանաձոր , Տիգրան Մեծ 41

«Գորիս» մասնաճյուղ	Հասցե՝ 3201, ՀՀ, ք. Գորիս, Անկախության 11/1
«Մասիս» մասնաճյուղ	Հասցե՝ 0801, ՀՀ, ք. Մասիս, Դպրոցականների 2/1
«Արտաշատ» մասնաճյուղ	Հասցե՝ 0701, ՀՀ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փողոց 109/4
«Արմավիր» մասնաճյուղ	Հասցե՝ 0909, ՀՀ, ք. Արմավիր, Երևանյան 25 շենք 1 տարածք
«Աբովյան» մասնաճյուղ	Հասցե՝ 2201, ՀՀ, ք. Աբովյան, Հանրապետության պող 1/72
«Հրազդան» մասնաճյուղ	Հասցե՝ 2302, ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Մարշալ Բաղրամյան թաղ., 2, Անդրանիկի պող, թիվ 114 սպ կենտրոն
«Մարտունի» մասնաճյուղ	Հասցե՝ 1401, ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Գ, Նժդեհի 4/1
«Աշտարակ» մասնաճյուղ	Հասցե՝ 0204, ՀՀ, մարզ Արագածոտն համայնք Աշտարակ ք. Ա. Մանուկյան փողոց 21/7
«Իջևան» մասնաճյուղ	Հասցե՝ ՀՀ, մարզ Տավուշ, համայնք, Իջևան ք., Երևանյան փողոց 124 խանութ
«Վեդի» մասնաճյուղ	Հասցե՝ ՀՀ, մարզ Արարատ, Վեդի ք., Արարատյան փողոց 60/1 առևտրի սրահ խանութ
«Արթիկ» մասնաճյուղ	Հասցե՝ մարզ Շիրակ, ք. Արթիկ, Երկաթուղայինների փող., 2/2 առևտրի կենտրոն
«Կապան» մասնաճյուղ	Հասցե՝ մարզ Սյունիք, Կապան ք. Շահումյան փողոց 5ա/6, 10/2 գործարան

«Եղեգնաձոր» մասնաճյուղ	Հասցե՝ մարզ Վայոց ձոր, համայնք Եղեգնաձոր, ք.Նարեկացու փողոց 3/4
------------------------	---

17. Ներդրումները

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո մինչև Ազդագրի ներկայացման պահը Բանկի կողմից էական ներդրումներ չեն կատարվել:

Բանկի կառավարման մարմինները նախատեսում են 2 մլրդ դրամ ներդրում կատարել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, մասնավորապես Բանկի ծրագրային և սերվերային տեխնոլոգիաների ապահովման համար:

18. Բիզնեսի նկարագիրը

Բանկի նպատակն է բանկային գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որն իրականացնում է բանկային գործունեություն՝ ՀՀ ԿԲ-ի կողմից բանկային գործունեության լիցենզիա ստանալու օրվանից:

Բանկը, բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա՝ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով բանկերին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները և կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է բանկային և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի և երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով և արտարժույթով գործարքների իրականացումը:

Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն

իրականացնելու լիցենզիա և Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ է: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկն աշխատում է շաբաթը 7 օր, օրը 24 ժամ աշխատանքային ռեժիմով, ինչը շատ հարմար է իր հաճախորդների համար: Որպես նորարարություն հարկ է նշել, որ Բանկն աշխատում է իր սեփական FC Bank ծրագրով:

Հարկ է նշել, որ ոչ լոմբարդային վարկերը չունեն որևէ թաքնված վճարներ, իսկ անշարժ և շարժական գույքի գնահատման ծախսերը կազմակերպությունը վերցնում է իր վրա:

Բանկի տեսլականը ներառում է լինել դինամիկ զարգացող ֆինանսական կառույց Հայաստանում և արագ ու որակյալ սպասարկման միջոցով հաճախորդներին մատուցել բազմաբնույթ ֆինանսական ծառայություններ:

Թե մինչ առևտրային բանկ դառնալը, թե բանկ դառնալուց հետո ընկերությունը օրեցօր բարելավում է իր սպասարկման որակը, ավելացնում ծառայությունները ինչպես նաև հաճախորդների սպասարկումն առավել հարմարավետ դարձնելու նպատակով ավելացնում մասնաճյուղերի թիվը՝ ոչ միայն Երևանում, այլև ՀՀ մարզերում:

Հիմնական գործունեությունը

Թողարկողի հիմնական գործունեության նկարագիրը

Բանկը, բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա՝ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով բանկերին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները և կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է բանկային և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

Բանկը կարող է իրավաբանական անձանցից, իր մասնակիցներից, անհատ ձեռնարկատերերից, ՀՀ-ից և համայնքներից,

այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ: Ընկերության գործունեության հիմնական ուղղվածությունը վարկերի տրամադրումն է, որոնք էլ ձգտում է հասանելի դարձնել տնտեսության տարբեր հատվածների, ինչպես նաև հասարակության լայն շրջանակների համար: Բանկը, որպես հիմնական գործունեություն, ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկեր է տրամադրում ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Բանկի համար առաջնային ոլորտներից է քարտային տեխնոլոգիաները և փոխանցումների ոլորտը, որով Բանկը ապահովում է հաճախորդներին միջազգային ստանդարտներին համապատասխան ծառայություններ: Բանկի զեկավարության կողմից վերոնշյալ ոլորտը հանդիսանում է բանկի զարգացման առաջնահերթություններից մեկը:

Բանկն աշխատում է մասնաճյուղային ցանցի միջոցով՝ մատուցելով ներքոհիշյալ ծառայությունները.

1. Ոսկու գրավադրմամբ վարկեր (գերիշխող ուղղություն),
2. Սպառողական վարկեր,
3. Հիփոթեքային վարկեր (այդ թվում՝ ծրագրային),
4. Բիզնես վարկեր,
5. Գյուղատնտեսական վարկեր,
6. Վարկավորում պետական հատուկ ծրագրով,
7. Ավանդների ներգրավում
8. Տրանզակցիոն ծառայություններ
9. Երաշխիքներ,
10. Իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից փոխառությունների ընդունում,
11. Պարտատոմսերի թողարկում,
12. Տարադրամի փոխանակում,

Գործող բիզնեսում գերիշխող ուղղությունը հանդիսանում է ոսկու գրավով վարկերը: Այդ ուղղության նման զարգացումը պայմանավորված է նրանով, որ սահմանափակ են ներգրավված միջոցները. իսկ այդ վարկերն

առավել եկամտաբեր և ցածր ռիսկային են: Հարկ է նշել, որ Բանկում ներդրված են մնացած վարկատեսակների վերլուծությունների, որոշումների կայացման և տրամադրման բոլոր անհրաժեշտ տեխնոլոգիաները (բացառությամբ սքրիինգային համակարգերի):

Թողարկողի նոր ծառայությունների մատուցում

Բանկն իրականացնում է բիզնեսի վարկավորում, բնակարանի ձեռքբերման, կառուցապատման և վերանորոգման հիփոթեքային վարկավորում, ավտովարկավորում, լոմբարդային վարկավորում, սպառողական, գյուղատնտեսության և այլ վարկավորում, ինչպես նաև լիզինգային և ֆակտորինգային գործառնություններ: Սպառողական վարկերի տրամադրման պլանավորման ժամանակ հաշվի է առնվել նաև ներկայումս ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող խստացման միջոցառումները և Բանկը դրսևորելու է իրեն որպես էթիկ վարկատու:

Բանկն ակտիվորեն քայլեր է ձեռնարկելու որպեսզի դառնա ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ պետական ներքին պարտքի կառավարման գործակալ, ինչպես նաև դառնալու է ՀՀ ֆոնդային բորսայի անդամ՝ նպատակ հետապնդելով ակտիվ մասնակցություն ունենալ ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումներին, ինչպես նաև երկրորդային շուկայի գործարքներին:

Բանկը միացած է ՀՀ կենտրոնական բանկի BankMail համակարգին, ինչպես նաև հանդիսանում է SWIFT միջազգային համակարգի անդամ: Կազմակերպությունն իր հաճախորդների վճարահաշվարկային և վճարային գործիքներով սպասարկումն իրականացնելու համար բանակցելու և բացելու է թղթակցային հաշիվներ, ինչպես տեղական, այնպես էլ միջազգային բանկերում:

Հիմնական շուկաները

Թողարկողի ծառայությունների մատուցման հիմնական շուկաների նկարագիրը

«Ք ֆինանսական շուկայում Բանկն առանձնանում է միկրոֆինանսական ծառայությունների լայն մատուցմամբ, նպատակ հետապնդելով՝ նպաստելու միկրո, մանր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը, հատկապես գյուղական վայրերում՝ վարկեր, փոխառություններ տրամադրելու և օրենսդրությամբ սահմանված այլ ծառայություններ մատուցելու միջոցով, ինչպես նաև սպառողական վարկավորման զարգացմանը: Բանկը փորձում է հասանելի դարձնել ֆինանսական ծառայությունները հասարակության տարբեր խավերին, և նույնիսկ նրանց, ովքեր մինչ օրս հնարավորություն չեն ունեցել ստանալ այդ ծառայություններն այլ բանկերից և վարկային կազմակերպություններից:

Թողարկողի մրցակցային դիրքի նկարագրությունը

Բանկն իրականացրել է SWOT, բանկային համակարգի վերլուծություններ և շուկայում գործող սուբյեկտների նկատմամբ մրցակցային դիրքի ուսումնասիրություն:

Մանրաձախ վարկային պրոդուկտների շուկայում իրականացվել է հիմնական մրցակիցների նկատմամբ Բանկի հարաբերական առավելությունների և թերությունների ուսումնասիրում (գնային քաղաքականություն, համբավ, շուկայի մասնաբաժին, պրոդուկտների դիզայն և այլն), Բանկի ներկա և ապագա դիրքավորումը ըստ վարկային պրոդուկտների, որի հիմքում դրվել է պրոդուկտի երեք պարամետր՝ պայման/դիզայն, գին, ռիսկի ախորժակ:

Մանրաձախ սեգմենտում Բանկի ներկայիս հիմնական ծառայությունը հանդիսանում է ոսկու գրավադրմամբ վարկավորումը: Այս ծառայության մասով շուկայում մրցակցում են բանկերը, վարկային կազմակերպությունները, ինչպես նաև ինչ-որ առումով գրավատները: Հիմնական մրցակիցներ են հանդիսանում բանկերից՝ ՎՏԲ բանկը, Կոնվերսբանկը, Արդշինբանկը և Հայէկոնոմբանկը:

Ոսկու գրավադրմամբ վարկավորման ոլորտում Բանկն ունի բազմամյա հաջողված փորձ, հանդիսանում է շուկայի առաջատարներից մեկը և բոլոր նախադրյալները կան հետագայում ևս պահպանելու

առաջատարի իր դիրքերը: Ինչպես նաև արդեն իսկ մշակվում են այս պրոդուկտում թվային լուծումներ և հեռահար սպասարկման հնարավորություն, ինչը մի քանի անգամ կկրճատի սպասարկման տևողությունը:

19. Թողարկողի կառուցվածքը

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն չի հանդիսանում ոչ մի ընկերության դուստր կամ կախյալ ընկերություն, ինչպես նաև չունի դուստր կամ կախյալ ընկերություն: Թողարկողը չի համարվում խմբի անդամ:

20. Հիմնական միջոցները

Բանկն իր բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք է բերել հիմնական միջոցներ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում շենքեր, շինություններ) և ոչ նյութական ակտիվներ, որոնց արժեքի համագումարը չի գերազանցում Բանկի ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 10%-ը: Բանկի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 1,029,022 հազ. ՀՀ դրամ, Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում շենքեր, շինություններ) արժեքը կազմել է 1,661,048 ՀՀ դրամ, իսկ ոչ նյութական ակտիվներինը 613,470 ՀՀ դրամ 31.12.2022թ.-ի դրությամբ:

Բանկի կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ առկա չեն:

Ընկերության հիմնական միջոցներն ունեցել են հետևյալ կազմը և կառուցվածքը:

հազ. ՀՀ դրամ

31.12.2022	Շենքեր, շինություններ	Վարձակալած հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ	Կապի և հաղորդակցման միջոցներ	Տնտեսական գույք և այլ հիմնական միջոցներ	Շարժական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք	130,130	197,709	592,299	803,422	168,167	1,891,727

Կուտակված մաշվածություն	45,664	33,897	393,056	235,767	154,322	862,706
Զուտ հաշվեկշռային արժեք	84,466	163,812	199,243	567,655	13,845	1,029,021

21. Զարգացման վերջին միտումները

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2022թ. նոյեմբերի 9-ի որոշմամբ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն ստացել է բանկային գործունեության լիցենզիա և ներկայանում է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ անվանմամբ:

Ֆինանսական ոլորտում ունենալով ավելի քան 11 տարվա փորձ՝ բանկ դառնալու նպատակով, Բանկը վերջին տարիների ընթացքում ակտիվորեն իրականացրել է լայնածավալ տրանսֆորմացիոն միջոցառումներ՝ ֆինանսական, մարդկային ռեսուրսների ինտեգրման, ինչպես նաև ռիսկերի կառավարման ուղղությամբ: Ներկայումս Բանկն ունի շուրջ 700 աշխատակից, 30 մասնաճյուղ ՀՀ ողջ տարածքում և ավելի քան 140 հազար հաճախորդների կայուն բազա:

Բանկի շարունակական զարգացման նպատակով Բանկը նախատեսում է հաճախորդներին առաջարկել ծառայությունների մատուցման նոր ձևեր, նոր տեխնոլոգիական հարթակ, ինչպես նաև հետևողական լինել Բանկի անձնակազմի հետագա զարգացմանն ու վերապատրաստմանը, ինչը հնարավորություն կընձեռի ապահովել առավել հարմարավետ և բարձրակարգ սպասարկում:

Բանկը նախատեսում է կատարելագործել քարտային տեխնոլոգիաների և փոխանցումների ոլորտը, որը թույլ կտա Բանկին ապահովել հաճախորդներին միձազգային ստանդարտներին համապատասխան ծառայություններ: Բանկի զեկավարության կողմից վերոնշյալ ոլորտը հանդիսանում է բանկի զարգացման առաջնահերթություններից մեկը:

Բանկը նախատեսում է ընդլայնել մասնաճյուղերի քանակը, ինչպես նաև համալրել բանկոմատների և տերմինալների քանակը՝ ապահովելով ավելի լայն հասանելիություն:

Բանկի գործունեությունը մեծապես պայմանավորվում է արտաքին միջավայրում տեղի ունեցող իրադարձություններով: Բանկը սեփական և հաճախորդների կարիքները բավարարելու համար գործունեություն է ծավալում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում, ուստի Բանկի գործունեության վրա էական ազդեցությունն են թողնում ինչպես հայրենական, այնպես էլ միջազգային տնտեսությունում տեղի ունեցող իրադարձությունները:

Ազդագրի գրանցման ներկայացման օրվա դրությամբ Թողարկողի գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են:

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԿԱՄ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ընկերության ակտիվների շահութաբերության (ROA) և կապիտալի շահութաբերության (ROE) ցուցանիշների կանխատեսումներն արտացոլված են ստորև բերվող աղյուսակում:

Ցուցանիշներ	2023	2024	2025
Ակտիվների շահութաբերություն (ROA)	7.37%	5.76%	5.19%
Կապիտալի շահութաբերություն (ROE)	12.7%	13.7%	15.4%

Բանկի համար սահմանվել են հետևյալ եկամուտների կենտրոնները.

1. Վարկային բլոկ,
2. Գանձապետական բլոկ,
3. Տրանզակցիոն բլոկ (քարտային տեխնոլոգիաներ և փոխանցումներ),
4. Ներդրումային բլոկ (նախատեսվում է ավելի ուշ):

Հաճախորդների հետ կոնտակտի ուղիները (այդ թվում՝ թվային) պարզապես նպաստելու են վերոնշյալ եկամուտների կենտրոնների պրոդուկտների վաճառքին, դիմումների ու հայտերի ընդունմանը և ձևակերպմանը: Ըստ կոնտակտի ուղիների վաճառքների և եկամուտների պլանավորում հնարավոր կլինի իրականացնել Ծրագրի իրականացման վերջում, Բանկի գործունեության առաջին տարվա համար՝ պրոդուկտների և կոնտակտի կենտրոնների վերջնական դիզայնն ունենալուց հետո: Այս փուլում ֆինանսական կանխատեսումները ընդհանուր են և պլանավորում ըստ հաճախորդի հետ կոնտակտի ուղիների նպատակահարմար է իրականացնել ավելի ուշ:


22. Թողարկողի կառավարման մարմինները

Թողարկողի կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն օժտված է ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավասությամբ:

Ընկերության խորհուրդը իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ վերապահված են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը:

Ընկերության կառավարման մարմինների իրավասություններն ու պարտականությունները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ:

Թողարկողի կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը հետևյալն է՝



Կառավարման մարմինների իրավասությունները

Ընդհանուր ժողովը

Ընդհանուր ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

Տարեկան ժողովը գումարվում է ոչ ուշ, քան ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը, վարման կարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում են Ընդհանուր ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով:

Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններն են՝

ա) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

բ) Ընկերության վերակազմակերպումը,

գ) Ընկերության լուծարումը,

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը,

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

է) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

ը) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

թ) Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ժ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

ժբ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների

բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

ժգ) Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

ժդ) Ընդհանուր ժողովի վարման կարգը,

ժե) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

ժզ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը,

ժէ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը,

ժը) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում,

ժթ) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում,

ի) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում,

իա) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի, անդամների և Գործադիր տնօրենի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը,

իբ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,

իգ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը,

իդ) հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը,

իե) հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը,

իզ) օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Կանոնադրության վերոնշյալ կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության Գործադիր տնօրենին, գլխավոր հաշվապահին կամ այլ անձի:

Ժողովի որոշմամբ այդ կետի «իզ» և «իե» ենթակետերով սահմանված հարցերով որոշումների ընդունումը կարող է փոխանցվել Ընկերության

գործադիր մարմնին, իսկ «է», «թ», «ի» և «իբ-իե» ենթակետերով սահմանված հարցերով՝ խորհրդին:

Ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50 (հիսուն)-ից ավելի տոկոսին:

Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ձայների թվի առնվազն 3/4 (երեք/չորրորդ) մեծամասնությամբ, եթե օրենքով ավելի մեծ չափ նախատեսված չէ: Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:

Ընդհանուր ժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 (հինգ) օրվա ընթացքում՝ առնվազն երկու օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը:

Ընկերության Խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 3 և առավելագույնը 9 անդամից, որոնք ընտրվում են Ընդհանուր ժողովի կողմից սահմանված ժամկետով: Խորհրդի քանակական կազմը որոշվում է Ընդհանուր ժողովի կողմից:

Ընդհանուր ժողովին Ընկերության Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Ընկերության մասնակիցները, ինչպես նաև Խորհուրդը:

Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,

բ) տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

գ) Ընդհանուր ժողովների օրակարգի հաստատումը,

դ) Ընդհանուր ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի

հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը,

ե) Կանոնադրության 7.1.5 կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը Ընդհանուր ժողովների քննարկմանը,

զ) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,

է) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով,

ը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,

թ) Ընկերության Գործադիր տնօրենի տեղակալի և գլխավոր հաշվապահի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների սահմանումը,

ժ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,

ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,

ժբ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,

ժգ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,

ժդ) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

ժզ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,

ժե) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը,

ժէ) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,

ժը) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում,

ժթ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը,

ի) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

իա) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,

իբ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը,

իգ) օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

Կանոնադրության նախորդ կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության Գործադիր տնօրենին, գլխավոր հաշվապահին կամ այլ անձի:

Խորհուրդն իրավասու է (քվորում ունի), եթե ներկա են խորհրդի անդամների առնվազն 2/3 (երկու/երրորդ)-ը:

Խորհրդի որոշումներն ընդունվում են մասնակիցների ընդհանուր ձայների թվի առնվազն 2/3 (երկու/երրորդ) մեծամասնությամբ, եթե տվյալ որոշման կայացման համար օրենքով ավելի մեծ չափ նախատեսված չէ:

Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 10 (տասը) օրվա ընթացքում: Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

բ) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,

գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

դ) նախագահում է Ընդհանուր ժողովներում:

Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտի իրականացնող անձի և Ընկերության գործադիր մարմնի պահանջով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Ընդհանուր ժողովի հաստատած՝ խորհրդի կանոնակարգով: Խորհուրդը կարող է ընդունել որոշումներ նաև հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով):

Խորհրդի հետ կապված բոլոր այն հարցերը, այդ թվում Խորհրդի անդամների ընտրության, Խորհրդի նիստերի գումարման և անցկացման հետ կապված հարցերը, որոնք չեն նախատեսվել սույն կանոնադրությամբ, կարգավորվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների դրույթներով:

Գործադիր մարմին

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր մարմինը՝ Ընկերության Տնօրինությունը և Ընկերության Գործադիր տնօրենը: Գործադիր տնօրեն, նրա տեղակալ, Տնօրինության անդամ չի կարող լինել այն անձը, որը չի համապատասխանում Կենտրոնական բանկի որակավորման համապատասխանության չափանիշներին և (կամ) որին օրենքով արգելված է լինել Ընկերության ղեկավար: Տնօրինության կազմում պարտադիր ընդգրկվում են Գործադիր տնօրենը, նրա տեղակալները և գլխավոր հաշվապահը, ինչպես նաև կարող են ընդգրկվել տնօրենները:

Ընկերության Տնօրինությունը՝

ա) սահմանում է Ընկերության կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքները և մատուցվող ծառայությունների սակագները,

բ) հաստատում է Ընկերության աշխատատեղերը, աշխատանքի խթանման և խրախուսման պայմանները,

գ) քննարկում և որոշումներ է ընդունում վերստուգումների, ստուգումների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունների վերաբերյալ,

դ) քննարկում և որոշումներ է ընդունում Ընկերության գույքի օտարման գործարքների վերաբերյալ,

ե) քննարկում և որոշումներ է ընդունում մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու նպատակահամարության մասին,

զ) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

Ընկերության Տնօրինության նիստն իրավասու է (քվորում ունի), եթե նիստին անձնական մասնակցության կամ հեռակա քվեարկության ձևով (հարցման միջոցով) մասնակցում են Տնօրինության անդամների կեսից ավելին: Ընկերության Տնօրինության որոշումներն ընդունվում են նիստին ներկա Տնօրինության անդամների ձայների մեծամասնությամբ: Տնօրինության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Քվեարկության ժամանակ Տնօրինության յուրաքանչյուր անդամ ունի ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Տնօրինության այլ անդամի) չի թույլատրվում:

Գործադիր տնօրենն ունի որոշիչ ձայնի իրավունք:

Դեմ կամ ձեռնպահ քվեարկած անդամը պարտավոր է հիմնավորել իր կարծիքը:

Ընկերության Տնօրինության նիստերը գումարում է Գործադիր տնօրենը՝ առնվազն ամիսը մեկ անգամ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության:

Տնօրինության նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում է Ընկերության ներքին աուդիտի ղեկավարը:

Տնօրինության նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում:

Տնօրինության նիստերը կազմակերպում և վարում է Գործադիր տնօրենը, որը ստորագրում է նիստերի որոշումները:

Գործադիր տնօրենը՝

ա) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից,

բ) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,

գ) գործում է առանց լիազորագրի,

դ) տալիս է լիազորագրեր,

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,

է) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,

ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

ժա) իրականացնում է Տնօրինության նախագահի գործառույթները՝

1) կազմակերպում է Տնօրինության աշխատանքները,

2) գումարում և նախագահում է Տնօրինության նիստերը,

3) կազմակերպում է Տնօրինության նիստերի արձանագրությունների վարումը,

4) ներկայացնում է Տնօրինությունը Խորհրդի նիստերին,

5) ստորագրում է Տնօրինության նիստերի որոշումները:

Գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ օրենքով և Կանոնադրությամբ Ընդհանուր ժողովի, Խորհրդի և Տնօրինության բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:

Գործադիր տնօրենը կազմակերպում է ժողովի, Տնօրինության և Խորհրդի որոշումների կատարումը:

Ընկերության գործադիր տնօրենի տեղակալների և գլխավոր հաշվապահի գործառույթները՝

Ընկերության Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ:

Գործադիր տնօրենի տեղակալները նշանակվում են Ընդհանուր ժողովի կողմից՝ Ընկերության Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

Ընկերության Գործադիր տնօրենի տեղակալը (տեղակալները) պատասխանատվություն է (են) կրում գործունեության կոնկրետ ոլորտներում իրեն (իրենց) վերապահված պարտականությունների կատարման համար, ինչպես նաև իրականացնում է (են) Ընկերության տարածքային ստորաբաժանումների աշխատանքների կորդինացումը:

Ընկերության գլխավոր հաշվապահին իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

Ընկերության գլխավոր հաշվապահի գործառույթները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ:

Ընկերության գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ընդհանուր ժողովին, Խորհրդին, Գործադիր տնօրենին կամ այլ անձի:

Ընկերության գլխավոր հաշվապահը նշանակվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ Ընկերության Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

Ընկերության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական մարմիններին ժամանակին ներկայացնելու, դրանցում արժանահավատ տեղեկատվություն արտացոլելու, ինչպես նաև Ընկերության ժողովին, Խորհրդին, պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներում Ընկերության մասին անկողմնակալ ֆինանսական տեղեկություններ արտացոլելու համար:

Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է Ընկերության բոլոր աշխատողների համար:

Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված՝ Ընկերության Գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի միջև տարածայնությունների դեպքում գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ Գործադիր տնօրենի կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է Գործադիր տնօրենը:

Ընկերության գլխավոր հաշվապահը պետք է ունենա այդ պաշտոնում աշխատելու համար Կենտրոնական բանկի կողմից տրված որակավորման վկայական:

23. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը

Խորհրդի նախագահ՝ Վահե Բադալյան

Բնակության վայրը	ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Իրավասությունները Իրավասությունները և Պարտականությունները	<ul style="list-style-type: none"> Կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք, կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը, նախագահում է ժողովներում:

Ընկերությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը

Ընկերության անվանումը	Գտնվելու վայրը	Գործունեության բնույթը
«Կովկաս Ագրո» ՍՊԸ	ՀՀ, Աշտարակի խճուղի 20, Աշտարակ 0204, Արագածոտն	100% մասնակից
«Բադալյան Եղբայրներ» ՍՊԸ	Աբովյան 37, Երևան, 0009, Հայաստան	50% մասնակից
«Ֆասթ Շիֆթ» ՍՊԸ	Երևան, Գ. Հովսեփյան 20	50% մասնակից
Fasttoken Limited	“Luxe Pavilion, 2nd level, Diamonds International Building, Portomaso STJ 4010, Malta”	50% բաժնետեր
FC Capital (Malta) Limited	Apt 31, Block B, Depiro Point, Silema SLM 2033, Malta	50% բաժնետեր

FC Network Limited	PO Box 227, Clinch’s House, lord street, Douglas, Isle of Man, IM99 1RZ	50% բաժնետեր
Radon B.V	29, Emancipatie Boulevard, Curacao	50% մասնակից
S.C. Holding Limited	Clinch’s House, Lord Street, Douglas, Isle of Man IM99 1RZ	50% բաժնետեր
SC IP Limited	17 Bond Street St. Helier, Jersey JE2 3NP Channel Islands	50% բաժնետեր
Vbet LLC	04086, М. Київ, Вулиця Олени Телиги, Будинок 41	50% բաժնետեր
«Գետառ Բիզնես Կենտրոն» ՍՊԸ	Գետառի փ./ 4/17 Երևան, Հայաստան	50% մասնակից
Կիբերսպորտի Համահայկական Ֆեդերացիա ՀԿ	Գ. Հովսեփյան փողոց 20, Նորք Մարաշ, Երևան, 0047, Հայաստան	50% համահիմնադիր
«Հին Նորք Բիզնես Կենտրոն» ՓԲԸ	Գ. Հովսեփյան փողոց 20, Նորք Մարաշ, Երևան, 0047, Հայաստան	50% բաժնետեր
«Հին Նորք» ՓԲԸ	Գ. Հովսեփյան փողոց 20, Նորք Մարաշ, Երևան, 0047, Հայաստան	50% բաժնետեր
Վահագն Բաղայան Բարեգործական Հիմնադրամ ՀԿ	Գ. Հովսեփյան փողոց 20, Նորք Մարաշ, Երևան, 0047, Հայաստան	50% համահիմնադիր
Վիվառո Գրուպ ՍՊԸ	Հյուսիսային/ 10շ./ 62 բն. Կենտրոն 0010 Երևան, Հայաստան	50% մասնակից
Վիվառո Մեդիա ՍՊԸ	Երևան, Գ. Հովսեփյան 20	50% մասնակից

Ընկերության և Ընկերության կառավարման մարմինների անդամների միջև շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև հնարավոր չէ:

Խորհրդի անդամ՝ Դանիել Հիլեր

Բնակության վայրը	ք. Բորդո Ֆրանսիայի Հանրապետություն
Իրավասությունները և Պարտականությունները	<ul style="list-style-type: none"> • Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: • Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Ընկերությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Ընկերությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

Խորհրդի անդամ՝ Վահան Վարդանյան

Բնակության վայրը	ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Իրավասությունները և Պարտականությունները	<ul style="list-style-type: none"> • Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: • Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված

	<p>իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:</p>
<p>Ընկերությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը</p>	<ul style="list-style-type: none"> • Թվային լուծումներով զբաղվող ՍՎՏ ՍՊԸ տնօրենի տեղակալ, • Նաիրիան ՓԲԸ Խորհրդի անդամ և գործադիր տնօրեն

Խորհրդի անդամ՝ Արմեն Քթոյան

<p>Բնակության վայրը</p>	<p>ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն</p>
<p>Իրավասությունները և Պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: • Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:

<p>Ընկերությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը</p>	<ul style="list-style-type: none"> • Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Վիճակագրության ամբիոնի վարիչ, • ՀՀ ԲՈԿ 014 մասնագիտական խորհրդի անդամ • ՀՀ պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի անդամ
---	---

Խորհրդի անդամ՝ Սվետլանա Կարապետյան

<p>Բնակության վայրը</p>	<p>ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն</p>
<p>Իրավասությունները և Պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: • Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
<p>Ընկերությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը</p>	<p>Ընկերությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:</p>

Ընկերության և Ընկերության կառավարման մարմինների անդամների միջև շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև հնարավոր չէ:

Տնօրինության նախագահ - գործադիր տնօրեն՝ Գարեգին Դարբինյան

Բնակության վայրը	ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Իրավասությունները և Պարտականությունները	<ul style="list-style-type: none"> • Իրականացնում է ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը, • Տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, • Ներկայացնում է ընկերությունը տարբեր՝ այդ թվում միջազգային, պետական և մասնավոր կառույցներում, • Գործարքներ է կնքում ընկերության անունից, • Տալիս է լիազորագրեր, ստորագրում պայմանագրեր, հրամաններ և ընկերության բնականոն գործունեությունը ապահովելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթեր, • Խորհրդի հաստատմանն է ներկայացնում ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,

	<ul style="list-style-type: none"> • Տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, • Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում ընկերության աշխատակիցներին, • Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ, • Կորրոպցիան ստորաբաժանումների և դրանց ղեկավարների աշխատանքը, • Ընկերության տնտեսական ցուցանիշների բարելավման նպատակով իրականացնում է համապատասխան աշխատանքներ, • Ընկերության աշխատանքները բարելավելու նպատակով ներկայացնում է առաջարկություններ: • Տնօրինության նախագահը իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
<p>Ընկերությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը</p>	<p>Ընկերությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:</p>

Ընկերության և Ընկերության կառավարման մարմինների անդամների միջև շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև հնարավոր չէ:

Տնօրինության անդամ - Թվային բանկինգի տնօրեն ` Աղասի Վարդանյան

Բնակության վայրը	ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Իրավասությունները և Պարտականությունները	<ul style="list-style-type: none"> • Բանկի թվայնացման ռազմավարությանը համապատասխան թվային նախագծերի նախաձեռնում, • Թվային բանկինգի գծով նախագծերի իրականացում և նպատակային ցուցանիշների ապահովում, • Թվային տեխնոլոգիաների, այդ թվում՝ ինտերնետ, մոբայլ բանկինգի և հեռահար սպասարկման այլ համակարգերի ռազմավարության մշակում և իրականացում, • Թվային տեխնոլոգիաների ներդնում և առաջխաղացում՝ ապահովելով թվային տեխնոլոգիաների ներթափանցման, տարածման և կիրառման բարձր մակարդակ, • Հեռահար եղանակով ծառայությունների մատուցման համակարգերից օգտվող հաճախորդների համար սպասարկման որակի ապահովում համակարգերի շարունակական զարգացման ապահովում, • Հեռահար գործիքների միջոցով մատուցվող ծառայություններում նորամուծությունների ներդրում, • Բանկի թվային և ինքնասպասարկման համակարգերի անընդհատ և անխափան

	<p>աշխատանքի ապահովմանն ուղղված քայլերի ձեռնարկում,</p> <ul style="list-style-type: none"> • Ակտիվ մասնակցություն Բանկի ռազմավարության մշակման աշխատանքներում, • Բանկի ռազմավարության և տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված թվային, ուղղությունների, լուծումների, համակարգերի ներդրման աշխատանքների իրականացում, • Թվային լուծումների բոլոր հարթակների «սինխրոն» աշխատանքի կազմակերպման ապահովում և գնահատում, • Թվային բանկինգի Anti-Fraud համակարգերի ներդրմանն աջակցում և գործարկում, • Տնօրինության անդամը իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
<p>Ընկերությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը</p>	<p>Ընկերությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:</p>

Ընկերության և Ընկերության կառավարման մարմինների անդամների միջև շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև հնարավոր չէ:

Տնօրինության անդամ – Բիզնեսի կառավարման տնօրեն՝ Սերգեյ Գասպարյան

Բնակության վայրը	ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Իրավասությունները և Պարտականությունները	<ul style="list-style-type: none"> • Մասնակցել տնօրինության նիստերին և որոշումներ կայացնել, • Համակարգել կոմերցիոն բլոկի աշխատանքները, մասնավորապես՝ <ul style="list-style-type: none"> -Կառավարել Մանրաձախ բիզնեսի և Կորպորատիվ բիզնեսի կառավարման աշխատանքները՝ խթանելով նոր պրոդուկտների ստեղծման և զարգացման աշխատանքները, դրանց թվայնացումը և վաճառքը, -Կառավարել և վերահսկել Վարկային վերլուծությունների ծառայության գործունեությունը, -Կորդինացնել Ընկերության մասնաճյուղերի աշխատանքը և զարգացնել վերջիններս որպես վաճառքի կենտրոններ, -Կորդինացնել և վերահսկել Կոնտակտային կենտրոնի աշխատանքները նպաստելով կենտրոնի աշխատանքների օպտիմալացմանը և զարգացմանը՝ ներդնելով լավագույն միջազգային փորձը, • Ելնելով Ընկերության ընդհանուր ռազմավարական նպատակներից մշակել Կոմերցիոն բլոկի ռազմավարությունը, • Նպաստել հավատարիմ և խոստումնալից հաճախորդների պահպանման մշակույթի ներդրմանը, • Հաստատել և զարգացնել հարաբերություններ համապատասխան գործընկերների հետ,

	<ul style="list-style-type: none"> • Նախաձեռնել Ընկերության սպասարկման բարելավմանն, արդիականացմանն և թվայնացմանն ուղղված նախագծեր, • Ստորագրելու ծրագրային վարկերի գծով ամսական հաշվետվությունները, վերաֆինանսավորման և որակավորման հայտերը, • Ստորագրելու հաճախորդներին տրամադրվող գրությունները, այդ թվում՝ գործող և մարված վարկերի վերաբերյալ, • Ստորագրելու վարկային կոմիտեի որոշումների հիման վրա տրամադրվող թույլտվությունները և համաձայնությունները, • Ստորագրելու ընկերության կողմից ընդունված ներքին ակտերին (կանոնակարգեր, որոշումներ, հրամաններ և այլն) համապատասխան ստորագրել (հաստատել)՝ Ընկերության կողմից տրամադրվող վարկերի գծով գրավի պայմանագրեր, վարկային պայմանագրեր, երաշխավորության պայմանագրեր և վարկերի տրամադրման կարգադրությունները, ինչպես նաև վարկավորման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերը, • Ստորագրելու հիփոթեքային վարկերի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացվող տեղեկանքները, • Ստորագրելու աուդիտորական հարցումների պատասխանները, • Ստորագրելու գրավադրված անշարժ գույքի նկատմամբ բնակտարածության
--	--

	<p>օգտագործման իրավունքի ձեռք բերման կամ դադարեցման թույլտվությունները,</p> <ul style="list-style-type: none"> • Ստորագրելու գրավադրված գույքը գրավատուի կողմից վարձակալության տալու թույլտվությունները, • Ստորագրելու գրավադրված անշարժ գույքի մակերեսների և նպատակային նշանակությունների փոփոխության թույլտվությունները, • Ստորագրելու տրանսպորտային միջոցների պետհամարանիշների/հաշվառման վկայագրերի փոփոխության թույլտվությունները, • Ստորագրելու ընկերության կողմից մատուցվող ոչ ֆինանսական ծառայությունների հետ կապված գրությունները, • Ստորագրելու ՀՀ կենտրոնական բանկի կողմից ուղարկվող ԾՕՀ գրությունների պատասխանները, • Ստորագրելու ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրի կողմից ուղարկվող գրությունների պատասխանները, • Ստորագրելու «Աքռա Քրեդիտ Ռեփորթինգ» վարկային բյուրո ՓԲԸ-ի կողմից ուղարկված գրությունների պատասխանները, • Ստորագրելու «Աքռա Քրեդիտ Ռեփորթինգ» վարկային բյուրո ՓԲԸ-ին ուղարկվող գրությունները: • Տնօրինության անդամը իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է
--	---

	<p>օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:</p>
<p>Ընկերությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը</p>	<p>Ընկերությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:</p>

Ընկերության և Ընկերության կառավարման մարմինների անդամների միջև շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև հնարավոր չէ:

Տնօրինության անդամ – Ռիսկերի կառավարման և համապատասխանության տնօրեն–Տնօրինության անդամ՝ Լուսինե Սիմոնյան

<p>Բնակության վայրը</p>	<p>ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն</p>
<p>Իրավասությունները և Պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Կազմակերպել ռիսկերի կառավարման և համապատասխանության գործընթացների ներդրումը և հետագա զարգացումը, համակարգել այդ գործընթացների առօրյա աշխատանքը: • Իրականացնել ռիսկերի կառավարման հսկողական գործառույթի ղեկավարումը՝ համաձայն բանկային գործունեությունը համակարգող իրավական ակտերի և ՀՀ ԿԲ պահանջների: • Ներդնել և վերահսկել կազմակերպությունում ռիսկերի մշակույթը զարգացնելու գործընթացը:

	<ul style="list-style-type: none"> • Ռիսկերի կառավարման տեսանկյունից մասնակցել ռազմավարության մշակմանը, բիզնես գործընթացների և պրոդուկտների ներդրմանը՝ համաձայն Ընկերության ներքին իրավական ակտերի: • Կազմակերպել ռիսկերի բացահայտման, գնահատման, մոնիթորինգի և կառավարման, ռիսկի ախորժակի սահմանման, սթրես թեստերի անցկացման և կապիտալի կառավարման գործընթացների ներդրումը և շարունակական կատարելագործումը: • Կազմակերպել Anti-Fraud համակարգերի ներդրման գործընթացները: • Կազմակերպել վարկային մոնիթորինգի իրականացման և վարկային ռիսկերի բացահայտման, գնահատման, մշտադիտարկման մեխանիզմների ներդրումը և գործարկումը: • Համակարգել գործառնական ռիսկերի կառավարման համակարգի շարունակական կատարելագործման գործընթացը: • Կազմակերպել գործառնական միջադեպերի համաքազրման և հաշվառման, ֆինանսական և համբավի կորստի գնահատման գործընթացները: • Համակարգել Ընկերության տեղեկատվական անվտանգության համակարգի ներդրման թարմացման և զարգացման գործընթացները: • Համակարգել տեղեկատվական փաստաթղթերի և ներքին ընթացակարգերի օրենսդրական պահանջներին համապատասխանեցնելու գործընթացը:
--	--

	<ul style="list-style-type: none"> • Համակարգել ներքին դիտարկումների ծառայության աշխատանքը, կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ ստացված ազդակների վերլուծությունը և միջազգային սանկցիաների տակ գտնվող և կասկածելի անձանց ցանկերով տվյալների ստուգման գործընթացի ներդրումը և իրականացումը: • Կազմակերպել ենթակայությամբ ստորաբաժանումների անհրաժեշտ միջազգային և ներքին լիցենզավորումները: • Մասնակցել անձնակազմի ուսուցմանը:
<p>Ընկերությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը</p>	<p>Ընկերությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:</p>

Տնօրինության անդամ - գլխավոր հաշվապահ՝ Թաթուլ Թամրազյան

<p>Բնակության վայրը</p>	<p>ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն</p>
<p>Իրավասությունները և Պարտականությունները</p>	

	<ul style="list-style-type: none"> • Ներքին հաշվապահական ծառայության աշխատանքների կազմակերպում, ղեկավարում, վերահսկում • Դրամական միջոցների և նյութական արժեքների ժամանակին և սահմանված կարգով հաշվառման և նրանց հետագա շարժի հետ կապված գործառնությունների ճիշտ արտացոլման ապահովում, • Ապրանքանյութական արժեքների, դրամական միջոցների և հիմնական միջոցների ժամանակին գույքագրման ապահովում, • Դեբիտորական պարտքերի հաշվառման ապահովում, • Սահմանված ժամկետներում օրական, շաբաթական, երկշաբաթյա, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվապահական հաշվետվությունների ներկայացում, • Հաշվապահական հաշվառման գործունեությանը վերաբերող կարգերի և մեթոդական ցուցումների մշակման աշխատանքների կազմակերպում, • Բանկի հարկային և սոցիալական ապահովության հիմնադրամի գծով պարտավորությունների ժամանակին կատարման ապահովում, • Ղեկավարի հանձնարարությամբ պաշտոնից բխող այլ գործառույթների իրականացում: • Տնօրինության անդամը իր
--	---

	<p>պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:</p>
<p>Ընկերությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը</p>	<p>Ընկերությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:</p>

Ընկերության և Ընկերության կառավարման մարմինների անդամների միջև շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև հնարավոր չէ:

Ընկերության որևէ մասնաճյուղում կենտրոնացված չէ ընկերության ակտիվների 10 և ավելի տոկոսը:

24. Հսկող անձինք

Ընկերության հսկող անձինք են հանդիսանում՝ Վահե Ռոմիկի Բադալյանը և Վիգեն Ռոմիկի Բադալյան, ովքեր տիրապետում են Ընկերության 100% բաժնետոմսերին, յուրաքանչյուրը 50%: Բաժնետերերից մեկը Խորհրդի նախագահն է:

25. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

Պարմական ֆինանսական տեղեկատվություն

Ընկերության 2020, 2021 և 2022 թվականների անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված հաշվետվությունները ներկայացված են սույն Ազդագրի - Հավելված 5-ում: Ցանկության դեպքում

ներդրողները Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կարող են ստանալ նաև Ընկերության գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից, ինչպես նաև ծանոթանալ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում:

Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2022 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Դարական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Ընկերությունը ներգրավված չէ ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա էական ազդեցություն ունեցող դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթներում:

26. Էական պայմանագրերը

Ընկերությունում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Ընկերության կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

27. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն ներկայացվող Ազդագրում չի օգտագործվել:

Բացի Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Որպես սույն բաժնում

ներկայացված տեղեկատվության ստացման աղբյուր, երրորդ անձինք ներգրավված չեն:

28. Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.fastbank.am հասցեով, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Բանկի գլխամասային գրասենյակ՝ 0047, ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6:

Հավելվածներ

Հավելված 1: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն) x 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընհանուր ակտիվների միջին մեծություն) x 100

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) = Գործառնական եկամուտ / Ընհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) = Ընհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուտ տոկոսային մարժա (NIM) = Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն = Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր = Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սպրեդ = (Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) – (Տոկոսային ծախսեր/Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

ՀԱՎԵԼՎԱԾ 2: Թողարկման Վերջնական Պայմաններ

----- 20__թ.

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ
անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի
պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ----- 2023 թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ում Գ. Հովսեփյան փողոց, Նորք-Մարաշ 32/6 ք. Երևան, ՀՀ հասցեում:

<p>Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)</p>		
	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«Ֆասթ Բանկ» ՓԲԸ
	Երաշխավորողը	մասնակի երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու կապակցությամբ Թողարկողը կնքել է «Պարտատոմսերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագիր «Դայմենշն» փակ բաժնետիրական ներդրումային ընկերության հետ
	Սերիան	
	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	ենթակա է որոշման իրավասու մարմնի կողմից

		պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Ամենայն մանրամասնությամբ ներկայացված է Ծրագրային Ազդագրի 10.6 մասում
	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար
	Առաջարկի գինը	Ենթակա է որոշման իրավասու մարմնի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Անվանական արժեքը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ/ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
	Քանակը	համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի, այսինքն Թողարկման ծավալի հարաբերությունը անվանական արժեքին
	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման իրավասու մարմնի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

	<p>Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)</p>	<p>Ենթակա է որոշման իրավասու մարմնի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ</p>
	<p>Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր</p>	
	<p>Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)</p>	<p>Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ որոշումն ընդունվել է Թողարկողի Խորհրդի 29.06.2023 թվականի FBC0003DEC#23/06/29-01-05 որոշմամբ: Հաջորդ թողարկումները ենթակա են որոշման Թողարկողի Խորհրդի կողմից:</p>
<p>Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ</p>		
	<p>Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը</p>	<p>Ենթակա է որոշման իրավասու մարմնի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ</p>
	<p>Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն</p>	<p>Ենթակա է որոշման իրավասու մարմնի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ</p>

	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Ենթակա է որոշման իրավասու մարմնի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	Ենթակա է որոշման իրավասու մարմնի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	Ենթակա է որոշման իրավասու մարմնի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ենթակա է որոշման իրավասու մարմնի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	Ենթակա է որոշման իրավասու մարմնի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	Անվանական արժեքով
	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Չի նախատեսվում
	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	Ժամկետ(ներ)ը	Չի նախատեսվում
	Օպցիոնի իրականցման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Չի նախատեսվում
	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	Չի նախատեսվում
	Այլ տեղեկություններ	
	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փուլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	Ժամկետ(ներ)ը	
	Օպցիոնի իրականցման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Չի նախատեսվում
	Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«Դայմենշն» ՓԲԸ, ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 2, 27/1 ոչ բնակելի տարածք
	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	Ենթակա է որոշման իրավասու մարմնի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման

		սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Այլ տեղեկություններ		
	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն որևէ կարգավորվող շուկայում առևտրի
	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի առևտրի թույլտվություն ստացման և/կամ ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲ ընկերությունը:
	Արժեթղթի վարկանիշը	Ոչ կիրառելի
	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Ենթակա է որոշման իրավասու մարմնի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

Թողարկողը (երաշխավորողը) պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը (երաշխավորողը) հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր

ՀԱՎԵԼՎԱԾ 3: Հայտ-հանձնարարկանի օրինակելի ձև /Ֆիզիկական անձ/

**«Ֆասթ Բանկ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի
ձեռքբերման Հայտ**
(Ֆիզիկական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և _____
ժամանակը (օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Ֆիզիկական անձի անվանումը _____
(Անուն, Ազգանուն)

Էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը _____

ՀԾՀ _____

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն Հայտի ներկայացմամբ ընդունում եմք «Ֆասթ Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով
և ցանկություն եմք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ
պայմաններով՝

Պարտավորումների ձեռքբերման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտավորումների արժույթը ՀՀ դրամ ԱՄՆ դոլար

Ձեռք բերվող պարտավորումների քանակը՝ _____
հազ
քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտավորումների միավորի _____
ձեռքբերման գինը
գինը թվերով



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր

*Ձեռք բերվող պարտավորումների
 ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր
 գումարը*

ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի բանկային հաշվի համարը

Բանկի անվանումը

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի
 անունը

Արժեթղթերի հաշվի համարը

Սույն Հայտով, հավաստում ենք, որ Հայտը ներկայացնելուց առաջ ծանոթացել ենք պարտատոմսի Ծրագրային ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ընդունում և համաձայն ենք դրանցում նշված պայմաններին և պատրաստակամ ենք ստանձնել Բանկի թողարկած պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն Հայտի բավարարման դեպքում Հայտը կհանդիսանա մեր և Բանկի միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ մեր կողմից պարտատոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Լրացվում է Տեղաբաշխողի կողմից

Ձեռք բերվող պարտավորումների ԱՄՏԾ



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր
քանակ

քանակը թվերով

Ստորագրություն

Անուն Ազգանուն

*Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները —
— հաշվին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ
դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան
գումարները վճարվում են փվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են
համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:*



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր

ՀԱՎԵԼՎԱԾ 4: Հայտ հանձնարարկանի օրինակելի ձև /իրավաբանական անձ/

**«Ֆասթ Բանկ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի
ձեռքբերման Հայտ**
(իրավաբանական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և
ժամանակը

(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Իրավաբանական անձի անվանումը

(ֆիրմային անվանում, կազմակերպարավական ձև)

Պետոեզիստրի գրանցման տվյալները

(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գրանցման վայրի հասցեն, էլ. փոստի
հասցեն, հեռախոսահամարը

ՀՎՀՀ

Ռեզիդենտությունը

(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն Հայտի ներկայացմամբ ընդունում ենք «Ֆասթ Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով
և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ
պայմաններով՝

Պարտավորումների ձեռքբերման ամսաթիվը

(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտավորումների արժույթը

ՀՀ դրամ ԱՄՆ դոլար

Ձեռք բերվող պարտավորումների քանակը՝
հատ

քանակը թվերով (տառերով)



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր

Ձեռք բերվող պարտավորումների միավորի ձեռքբերման գինը

գինը թվերով

Ձեռք բերվող պարտավորումների ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը

ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի բանկային հաշվի համարը

Բանկի անվանումը

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը

Արժեթղթերի հաշվի համարը

Սույն Հայտով, հավաստում ենք, որ Հայտը ներկայացնելուց առաջ ծանոթացել ենք պարտատոմսի Ծրագրային ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ընդունում և համաձայն ենք դրանցում նշված պայմաններին և պատրաստակամ ենք ստանձնել Բանկի թողարկած պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն Հայտի բավարարման դեպքում Հայտը կհանդիսանա մեր և Բանկի միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ մեր կողմից պարտատոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Ձեռք բերվող պարտավորումների ԱՄՏԾ



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ

քանակը թվերով

Ստորագրություն

Անուն Ազգանուն

(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները հաշվին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են փոխադրման օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին փոխադրման օրը:



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկվող
կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր

ՀԱՎԵԼՎԱԾ 5: Ֆինանսական հաշվետվություններ

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

*2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	1
Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեության նկարագրություն	5
2. Պատրաստման հիմունքներ	6
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր	7
4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ	23
5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24
6. Պահանջներ բանկերի նկատմամբ	25
7. Ածանցյալ ֆինանսական գործիքներ	25
8. Ներդրումային արժեթղթեր	26
9. Հաճախորդների տրված վարկեր	26
10. Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	30
11. Ոչ նյութական ակտիվներ	31
12. Հարկում	31
13. Վարկային կորուստի գծով ծախս	33
14. Այլ ակտիվներ	33
15. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	34
16. Պարտավորություններ բանկերի նկատմամբ	34
17. Թողարկված պարտքային արժեթղթեր	34
18. Այլ փոխառու միջոցներ	35
19. Վարձակալության գծով պարտավորություններ	35
20. Այլ պարտավորություններ	35
21. Սեփական կապիտալ	36
22. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ	36
23. Չուտ տոկոսային եկամուտ	37
24. Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ	38
25. Անձնակազմի և այլ գործառնական ծախսեր	38
26. Ռիսկերի կառավարում	39
27. Իրական արժեքի չափում	52
28. Կապակցված կողմերի բացահայտումներ	56
29. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն	58
30. Կապիտալի համարժեքություն	58



**Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ**

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ֆասթ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ֆասթ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Բանկ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք Էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ արտահայտել է չձևափոխված կարծիք, ինչպես նաև ներառել է «Հանգամանքի շեշտադրում» և «Այլ հանգամանք» բաժինները 2022 թվականի հունիսի 17-ին թողարկված աուդիտորական եզրակացությունում՝ ուշադրություն հրավիրելով համադրելի տեղեկատվության վերահաշվարկի վրա և նկարագրելով համադրելի տեղեկատվության վերահաշվարկի համար կիրառված ճշգրտումների աուդիտը:



**Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ**

Առևտրի առանցքային հարցեր

Առևտրի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների առևտրի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների առևտրի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված հարցը դիտարկվել մեր առևտրի ընթացքում, ներկայացված է այդ համատեքստում:

Մենք կատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարագրված են «Առևտրորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների առևտրի համար» բաժնում, այդ թվում՝ այդ հարցի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր առևտրը ներառել է ընթացակարգերի իրականացում՝ մշակված ի պատասխան ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի մեր գնահատմանը: Մեր առևտրական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում ստորև ներկայացված հարցը դիտարկելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ առևտրական կարծիք արտահայտելու համար:

Առևտրի առանցքային հարց

Ինչպես է այն դիտարկվել մեր առևտրի ընթացքում

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստը հանդիսանում է առանցքային դատողությունների առարկա՝ ինչպես հաճախորդներին տրված վարկերի էականության (Բանկի ընդհանուր ակտիվների 82.5%-ը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ), այնպես էլ ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի («ՖՀՄՍ 9») շրջանակներում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) գնահատման հետ կապված բարդությունների և գնահատման համար պահանջվող դատողությունների պատճառով:

Պորտֆելային հիմունքով ԱՎԿ հաշվարկը ենթադրում է բարդ վիճակագրական մոդելավորում պահանջող գնահատման մեթոդների և մասնագիտական դատողությունների կիրառում: Այս մեթոդներն օգտագործվում են դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը և դեֆոլտի արդյունքում առաջացող կորուստները գնահատելու համար՝ հիմք ընդունելով անցյալ ժամանակաշրջանների առկա տեղեկատվությունը, որը ճշգրտվում է ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությամբ, ներառյալ՝ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները: Պորտֆելային հիմունքով ԱՎԿ հաշվարկը մեծապես կախված է նախնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճի առկայության գնահատումից:

Առևտրի իրականացնելիս մենք առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել հետևյալին՝

- ▶ Վարկային ռիսկի մոդելների գնահատում և պորտֆելի հիմունքով ԱՎԿ սահմանելու համար կիրառվող ենթադրություններ;
- ▶ Բանկի՝ վարկային ռիսկի էական աճը բացահայտելու նկատմամբ ներքին հսկողության միջոցների թեստավորում:

Պորտֆելային հիմունքով հաշվարկված պահուստի թեստավորման նպատակով մենք գնահատել ենք դրա հիմքում ընկած վիճակագրական մոդելները, օգտագործված հիմնական ելակետային տվյալներն ու ենթադրությունները և ԱՎԿ հաշվարկում ներառված ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությունը, ներառյալ՝ մակրոտնտեսական ցուցանիշների վերանայված կանխատեսումները: Գործընթացներն իրականացնելիս մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել ոսկու գրավով ապահովված վարկերի գծով գրավադրված ոսկե իրերի առկայության և չափման վրա: Մենք մասնակցել ենք գրավի գծով գույքագրման գործընթացին, և, ընտրանքային հիմունքով, թեստավորել ենք գրավադրված ոսկե իրերի առկայությունը և ֆիզիկական բնութագրերը:



**Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ**

Աուդիտի առանցքային հարց

**Ինչպես է այն դիտարկվել մեր աուդիտի
ընթացքում**

**Հաճախորդներին տրված վարկերի գծով
արժեզրկման պահուստ**

Այդ գնահատումը Էապես կախված է վարկառուի ժամկետանց օրերի ցուցանիշից (ներառյալ այլ ֆինանսական հաստատություններում ժամկետանց օրերը) և վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում վարկի պայմանների վերանայումից:

Մոդելավորման տարբեր մեթոդների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ԱՎԿ Էականորեն տարբեր գնահատումների: Մասնավորապես, ԱՎԿ-ները զգայուն են ոսկու գրավի առկայության և գնահատման հանդեպ: Սա կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 9-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր» և Ծանոթագրություն 26-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

Մենք գնահատել ենք գրավադրված ոսկե իրերի ֆիզիկական բնութագրերի գնահատման գործընթացում ղեկավարության կողմից ներգրավված մասնագետի իրազեկությունն ու անկողմնակալությունը:

Մենք թեստավորել ենք վարկային ռիսկի գործոնների հաշվարկի հիմքում ընկած առանցքային վիճակագրական տվյալները, ինչպիսիք են՝ վարկերի ժամկետանց օրերը և հաճախորդներին տրված վարկերի՝ դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնման վիճակագրությունը: Մենք գնահատել ենք նաև հաշվետու ամսաթվի դրությամբ վարկային ռիսկի Էական աճը որոշելու համար ղեկավարության կողմից ընտրված չափանիշների կիրառման հետևողականությունը:

Մենք վերահաշվարկել ենք ԱՎԿ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Մենք նաև իրականացրել ենք ընթացակարգեր Բանկի՝ վարկային ռիսկին ենթարկվածությունը նկարագրող ֆինանսական հաշվետվությունների բացահայտումների նկատմամբ:

Բանկի 2022թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված այլ տեղեկատվություն

Այլ տեղեկատվությունը ներառում է Բանկի 2022թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Բանկի 2022թ. տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրելու կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:



**Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ**

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ այլ տեղեկատվությանը, երբ այն տրամադրվի մեզ, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և Խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Խորհուրդը պատասխանատու է Բանկի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանք խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- ▶ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:



Կառուցելով բարեկեցիկ աշխարհ

- ▶ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- ▶ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը:
- ▶ եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- ▶ գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Խորհրդին նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, սպառնալիքների վերացմանը անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:



**Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ**

Խորհրդին հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել կշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ, խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման նպատակով անցկացված աուդիտի ղեկավար գործընկեր է հանդիսանում Էրիկ Չայրապետյանը:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն
Աուդիտի բաժնի գործընկեր



Էրիկ Չայրապետյան

Պատասխանատու աուդիտոր

Ելենա Աղամյան

31 մայիսի, 2023թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2022թ.	2021թ. (վերադասարկարգված)
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	3,180,144	2,412,544
Պահանջներ բանկերի նկատմամբ	6	110,319	-
Ներդրումային արժեթղթեր	8	4,551,296	5,116,897
Հաճախորդներին տրված վարկեր	9	56,410,990	52,318,930
Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	10	2,690,069	1,687,181
Ոչ նյութական ակտիվներ	11	613,470	31,534
Ընթացիկ հարկային ակտիվներ		-	101,452
Այլ ակտիվներ	14	815,423	419,003
		68,371,711	62,087,541
Ընդամենը ակտիվներ			
Պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	7	2,549	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	15	582,925	-
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	16	7,765,422	7,301,491
Թողարկված պարտքային արժեթղթեր	17	1,451,539	413,487
Այլ փոխառու միջոցներ	18	3,333,190	27,623,994
Պարտավորություններ վարձակալության գծով	19	1,787,052	1,344,542
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով		1,504,320	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	2,260,052	2,678,897
Այլ պարտավորություններ	20	950,983	546,387
		19,638,032	39,908,798
Ընդամենը պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	21	30,100,000	7,000,000
Զբաղիված շահույթ		19,437,015	15,530,279
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	21	(803,336)	(351,536)
		48,733,679	22,178,743
Ընդամենը կապիտալ			
		68,371,711	62,087,541

Ստորագրվել և վավերացվել է Բանկի Տնօրինության կողմից՝

Գարեգին Դարբինյան



[Handwritten signature]

Գործադիր տնօրենի Ժ/Պ

Թաթուլ Թամրազյան

[Handwritten signature]

Գլխավոր հաշվապահ

31 մայիսի, 2023թ.

Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար***(հազար ՀՀ դրամ)*

	Ծան.	2022թ.	2021թ. (վերադասակարգված)
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	23	13,458,719	13,270,027
Տոկոսային ծախս	23	(2,421,795)	(2,938,079)
2ուտ տոկոսային եկամուտ		11,036,924	10,331,948
Վարկային կորուստների գծով ծախս	13	(663,007)	(2,473,015)
2ուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո		10,373,917	7,858,933
Միջնորդավճարների գծով եկամուտ	24	26,155	10,775
Միջնորդավճարների գծով ծախս	24	(156,641)	(17,113)
2ուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից		(1,200)	(7,888)
2ուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից		1,657,826	1,125,936
- Առք ու վաճառքի գործարքներից		986,780	767,868
- Արտարժույթի վերագնահատումից		671,046	358,068
Այլ եկամուտ		45,855	99,095
Ոչ տոկոսային եկամուտ		1,571,995	1,210,805
Անձնակազմի գծով ծախսեր	25	(3,393,873)	(2,445,764)
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	10,11	(417,348)	(297,308)
Այլ գործառնական ծախսեր	25	(1,010,906)	(514,280)
Ոչ տոկոսային ծախսեր		(4,822,127)	(3,257,352)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		7,123,785	5,812,386
Շահութահարկի գծով ծախս	12	(1,217,049)	(1,012,231)
Հաշվետու տարվա շահույթ		5,906,736	4,800,155
Այլ համապարփակ եկամուտ			
<i>Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ՝</i>			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն		(537,448)	(377,404)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի փոփոխություններ		(13,527)	47,015
Շահութահարկ՝ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	12	99,175	59,470
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ վնաս		(451,800)	(270,919)
Տարվա այլ համապարփակ վնաս հարկումից հետո		(451,800)	(270,919)
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		5,454,936	4,529,236

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն**2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար***(հազար ՀՀ դրամ)*

	<i>Բաժնետիրական կապիտալ</i>	<i>Ներդրումային արժեթղթերի վերազնա- հատման պահուստ</i>	<i>Զբաղիված շահույթ</i>	<i>Ընդամենը կապիտալ</i>
Մնացորդն առ 2021թ. հունվարի 1	7,000,000	(80,617)	10,730,124	17,649,507
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Հաշվետու տարվա շահույթ	-	-	4,800,155	4,800,155
Հաշվետու տարվա այլ համապարփակ վնաս	-	(270,919)	-	(270,919)
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	-	(270,919)	4,800,155	4,529,236
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,000,000	(351,536)	15,530,279	22,178,743
Հաշվետու տարվա շահույթ	-	-	5,906,736	5,906,736
Հաշվետու տարվա այլ համապարփակ վնաս	-	(451,800)	-	(451,800)
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	-	(451,800)	5,906,736	5,454,936
Պարտավորության փոխարկում սեփական կապիտալի (Ծան. 21)	21,200,000	-	-	21,200,000
Շահաբաժնի կապիտալացում (Ծան. 21)	1,900,000	-	(1,900,000)	-
Բանկի բաժնետերերին վճարված շահաբաժիններ (Ծան. 21)	-	-	(100,000)	(100,000)
Մնացորդն առ 2022թ. դեկտեմբերի 31	30,100,000	(803,336)	19,437,015	48,733,679

1-ից 30 ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2022թ.	2021թ. (վերադասա- կարգված)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		7,123,785	5,812,386
Ճշգրտումներ՝			
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ		417,348	297,308
Հիմնական միջոցների, ոչ կյուբական ակտիվների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների օտարումից օգուտ		(3,226)	-
Վարկային կորուստների գծով ծախս		663,007	2,473,015
Արտարժույթի վերագնահատումից օգուտ		(671,046)	(358,068)
Տոկոսային եկամուտ		(13,458,719)	(13,270,027)
Տոկոսային ծախս		2,421,795	2,938,079
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր՝ նախքան գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		(3,507,056)	(2,107,307)
Գործառնական ակտիվների (ած/սվազում)			
Հաճախորդներին տրված վարկեր		(5,927,564)	(7,606,393)
Այլ ակտիվներ		(387,155)	(204,022)
Պահանջներ բանկերի նկատմամբ		(118,781)	-
Գործառնական պարտավորությունների ած/սվազում			
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		-	(5,275,501)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		581,847	-
Այլ պարտավորություններ		612,027	(63,792)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր՝ նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը		(8,746,682)	(15,257,015)
Ստացված տոկոսներ		13,306,740	13,050,495
Վճարված տոկոսներ		(2,626,124)	(2,723,870)
Վճարված շահութահարկ		(34,635)	(271,493)
Գործառնական գործունեությունից ստացված/ գործառնական գործունեության համար (օգտագործված) դրամական հոսքեր		1,899,299	(5,201,883)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(742,949)	-
Ոչ կյուբական ակտիվների ձեռքբերում		(619,703)	(165,788)
Ներդրումային գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր		(1,362,652)	(165,788)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Բանկերից ստացված մուտքեր		42,008,865	23,326,124
Վարկերի մարում բանկերին		(39,424,030)	(18,366,598)
Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր	29	1,119,158	-
Այլ փոխառու միջոցներից մուտքեր	29	28,315,722	43,080,097
Այլ փոխառու միջոցների մարում	29	(30,772,415)	(41,611,081)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	29	(193,785)	(125,284)
Բանկի բաժնետերերին վճարված շահաբաժիններ	21	(100,000)	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր		953,515	6,303,258
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(722,837)	(130,152)
Ակնկալվող վարկային կորուստների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		275	(1,394)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		767,600	804,041
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում		2,412,544	1,608,503
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	5	3,180,144	2,412,544

1-ից 30 ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

(հազար ՀՀ դրամ)

1. Հիմնական գործունեության նկարագրություն

ա) Կազմակերպչական կառուցվածք և հիմնական գործունեություն

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն («Բանկ») նախկին «Ֆասթ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն է, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն 2011թ. հոկտեմբերին: Կազմակերպությունը վարկային կազմակերպության լիցենզիա է ստացել 2011թ. հոկտեմբերի 14-ին: Ունենալով ֆինանսական ոլորտում ավելի քան 28 տարվա փորձ և նպատակ ունենալով դառնալ բանկ՝ կազմակերպությունը վերջին տարիներին ակտիվորեն իրականացրել է լայնածավալ տրանսֆորմացիոն միջոցառումներ՝ ֆինանսական, մարդկային ռեսուրսների ինտեգրման, ինչպես նաև ռիսկերի կառավարման ուղղությամբ: ՀՀ Կենտրոնական բանկի 2022 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒԿ ՓԲԸ-ն ստացել է բանկային գործունեության լիցենզիա և այսուհետ կոչվում է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ: Բանկի գործունեությունը վերահսկվում է Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից (ԿԲ): Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ավանդների պետական ապահովագրման համակարգի անդամ:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մոտավորապես 750 աշխատակից (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 636 աշխատակից):

Բանկն ընդունում է բնակչությունից ավանդներ և տրամադրում է վարկեր, իրականացնում է փոխանցումներ Հայաստանում և արտերկրում, , իրականացնում է արտարժույթի փոխանակման գործարքներ և մատուցում է այլ բանկային ծառայություններ իր կորպորատիվ և ֆիզիկական անձ հաճախորդներին: Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0047, Նորք-Մարաշ, Գ. Յուզեփյան փ. 32/6:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝

Բաժնետեր	2022, %	2021, %
Վահե Բաղայան	50%	50%
Վիգեն Բաղայան	50%	50%
Ընդամենը	100%	100%

բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իր իրավական, հարկային և կարգավորվող դաշտերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից ու զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից ձեռնարկվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային միջոցառումների արդյունավետությունից:

Ուկրաինայի հետ պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ռուսաստանը և Ուկրաինան Հայաստանի առանցքային առևտրային գործընկերներն են: Ակնկալվում է, որ պատերազմը նշանակալի ազդեցություն կունենա Հայաստանի տնտեսության վրա:

Պատերազմի արդյունքում տեղի է ունեցել ոչ ռեզիդենտների (հատկապես Ռուսաստանից) ներհոսք Հայաստան՝ նպաստելով Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից դրամական միջոցների ներհոսքի և պլաստիկ քարտերով գործարքների աճի, ինչը դրական ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա՝ հանգեցնելով տնտեսության երկնիշ աճի և գնաճի բարձր մակարդակի: Բանկի ղեկավարությունը վերահսկում է տնտեսական իրավիճակը ընթացիկ պայմաններում: Զանի որ պատերազմը դեռևս շարունակվում է, հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել Բանկի գործունեության վրա վերջնական ազդեցությունը, քանի որ անորոշություն կա ընդհանուր տնտեսության վրա ազդեցության աստիճանի վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(հազար ՀՀ դրամ)

2. Պատրաստման հիմունքներ

ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Բանկի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն՝ մշակված և թողարկված Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների հորիզոնի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հրապարկված ֆինանսական հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (այսուհետ՝ «ՖՀՄՍԿ»):

բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիմունքով՝ բացառությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի և ածանցյալ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով:

գ) Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (այսուհետ՝ ՀՀ դրամ): Հանդիսանալով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթ՝ այն լավագույն կերպով արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական բովանդակությունը:

Հայաստանի Հանրապետության դրամը նաև տվյալ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: 2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ պաշտոնական փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլարի համար 393.57 ՀՀ դրամ և 480.14 ՀՀ դրամ և 1 Եվրոյի համար 420.06 ՀՀ դրամ և 542.61 ՀՀ դրամ, համապատասխանաբար:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով:

Վերադասակարգումներ

Որոշակի վերադասակարգումներ են կատարվել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններում՝ ընթացիկ տարում օգտագործված դասակարգմանը համապատասխանելու համար: Բացատրական ծանոթագրությունները, համապատասխանաբար, փոփոխվել են: Այս վերադասակարգումները որևէ ազդեցություն չեն ունեցել նախկինում ներկայացված զուտ շահույթի կամ սեփական կապիտալի վրա:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որոշ գումարներ վերադասակարգվել են:

	<i>Նախկինում ներկայացված</i>	<i>Վերադասա- կարգում</i>	<i>Վերադասա- կարգված</i>
Վարկեր բանկերից	8,776,965	(1,475,474)	7,301,491
Այլ փոխառու միջոցներ	26,156,702	1,467,292	27,623,994
Այլ պարտավորություններ	538,205	8,182	546,387
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	1,247,301	(1,247,301)	–
Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	439,880	1,247,301	1,687,181

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում որոշ գումարներ վերադասակարգվել են:

	<i>Նախկինում ներկայացված</i>	<i>Վերադասա- կարգում</i>	<i>Վերադասա- կարգված</i>
Այլ գործառնական ծախսեր	(811,588)	297,308	(514,280)
Մաշվածություն և ամորտիզացիա	–	(297,308)	(297,308)

Ինչպես նաև, Բանկը փոխել է ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում որոշակի ենթագումարների կազմը՝ հանգեցնելով համադրելի տեղեկատվության վերադասակարգման:

(հազար ՀՀ դրամ)

2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

Վերադասակարգումներ (շարունակություն)

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում որոշ գումարներ վերադասակարգվել են:

	Նախկինում ներկայացված	Վերադասա- կարգում	Վերադասա- կարգված
Մուտքեր բանկերից	42,219,867	(18,893,743)	23,326,124
Բանկերից ստացված վարկերի մարում	(41,433,600)	23,067,002	(18,366,598)
Մուտքեր այլ փոխառու միջոցներից	24,186,354	18,893,743	43,080,097
Այլ փոխառու միջոցների մարում	(18,544,079)	(23,067,002)	(41,611,081)

Այս վերադասակարգումները ազդեցություն չեն ունեցել գործառնական, ներդրումային և ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի ընդհանուր գումարների վրա:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

ա) Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

«Հղումներ հայեցակարգային հիմունքներին» (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ)

Փոփոխությունները փոխարինում են ՀՀՄՍԽ-ի Հայեցակարգային հիմունքների նախորդ տարբերակի հղմանը՝ միաժամանակ հղում կատարելով 2018 թվականի մարտին թողարկված ներկա տարբերակին՝ առանց դրա պահանջները Էականորեն փոփոխելու:

Փոփոխությունները բացառություն են ավելացնում ՖՀՄՍ 3 Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ ստանդարտում սահմանված ճանաչման սկզբունքին՝ խուսափելու համար «երկրորդ օրվա» հավանական շահույթի կամ վնասի խնդրից, որը բխում է այն պարտավորություններից և պայմանական պարտավորություններից, որոնք կներառվեն ՀՀՄՍ 37 Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ կամ ՖՀՄՍԿ 21 Պարտադիր վճարներ ստանդարտների շրջանակներում, եթե առաջնային առանձին: Բացառությունը պահանջում է, որ կազմակերպությունները կիրառեն ՀՀՄՍ 37-ում կամ ՖՀՄՍԿ 21-ում սահմանված չափանիշները, համապատասխանաբար, Հայեցակարգային հիմունքների փոխարեն՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ընթացիկ պարտավորության առկայությունը որոշելու նպատակով:

Փոփոխությունները նաև նոր պարբերություն են ավելացնում ՖՀՄՍ 3-ում պարզաբանելու, որ պայմանական ակտիվները չեն համապատասխանում ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչման պայմանին:

Անցումային դրույթների համաձայն՝ Բանկը կիրառում է փոփոխությունները առաջընթաց սկզբունքով, այսինքն՝ այն ձեռնարկատիրական գործունեության միավորումների նկատմամբ, որոնք առաջանում են տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբից հետո, երբ առաջին անգամ կիրառվում են փոփոխությունները (նախնական կիրառման ամսաթիվ):

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ ժամանակաշրջանի ընթացքում այս փոփոխությունների շրջանակներում չեն առաջացել պայմանական ակտիվներ կամ պայմանական պարտավորություններ:

Հիմնական միջոցներ – մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործելը – ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ

Այս փոփոխությունը չի թույլատրում կազմակերպություններին հիմնական միջոցների արժեքից նվազեցնել ակտիվը համապատասխան վայր և վիճակի բերելու ընթացքում, որն անհրաժեշտ է ղեկավարության կողմից նախանշված նպատակով այն գործարկելու համար, արտադրված միավորների վաճառքից ստացված մուտքերը: Փոխարենը, կազմակերպությունը ճանաչում է տվյալ միավորների վաճառքից մուտքերը և տվյալ միավորների արտադրման նպատակով ծախսումները շահույթում կամ վնասում:

Անցումային դրույթների համաձայն՝ Բանկը կիրառում է այս փոփոխությունները հետընթաց միայն հիմնական միջոցների այն միավորների նկատմամբ, որոնք մատչելի են օգտագործման համար ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո, երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է փոփոխությունը (սկզբնական կիրառման ամսաթիվ):

Այս փոփոխությունները Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ չի իրականացվել հիմնական միջոցներով արտադրված այդպիսի միավորների վաճառք, որոնք մատչելի են եղել ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

ա) Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ - Ֆինանսական պարտավորությունների ապահովման համար «10 տոկոս» թեստում ներառվող վճարներ

Փոփոխությունը պարզաբանում է այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ Էուլայան տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն փոխառուի և փոխատուի միջև վճարված կամ ստացված վճարները, այդ թվում՝ կամ փոխառուի, կամ փոխատուի կողմից մյուսի անունից վճարված կամ ստացված վճարները: Համանման փոփոխությունն չի առաջարկվում ՀՀՄՍ 39 *Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում* ստանդարտի համար:

Անցումային դրույթների համաձայն՝ Բանկը փոփոխությունը կիրառում է այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխված կամ փոխանակված են՝ կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար (սկզբնական կիրառման ամսաթիվ): Այս փոփոխությունները Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունն չեն ունեցել, քանի որ տվյալ ժամանակաշրջանում Բանկի ֆինանսական գործիքներում Էական փոփոխություններ չեն կատարվել:

Անբարենպաստ պայմանագրեր - Պայմանագրի կատարման ծախսեր – ՀՀՄՍ 37-ում փոփոխություններ

Պայմանագիրը համարվում է անբարենպաստ, եթե այդ պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու ակնուսափելի ծախսերը (այսինքն, այն ծախսերը, որոնք մասով Բանկը չի կարող խուսափել, քանի որ պայմանագիրն առկա է) գերազանցում են դրա շրջանակներում ակնկալվող տնտեսական օգուտները: Փոփոխությունները հստակեցնում են, որ պայմանագրի անբարենպաստ կամ վնասաբեր լինելը գնահատելիս, կազմակերպությունը պետք է ներառի այն ծախսումները, որոնք ուղղակիորեն առնչվում են ապրանքների կամ ծառայությունների մատուցման պայմանագրին, ներառյալ ինչպես լրացուցիչ ծախսերը (օրինակ՝ ուղղակի աշխատանքի և նյութերի ծախսերը), այնպես էլ պայմանագրային գործունեության հետ անմիջականորեն կապված ծախսերի բաշխումը (օրինակ՝ պայմանագրի կատարման համար օգտագործվող սարքավորումների մաշվածությունը և պայմանագրի կառավարման և վերահսկողության ծախսերը): Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն չեն առնչվում պայմանագրին և չեն ներառվում այդ ծախսերում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծախսերը հստակորեն գանձվում են պայմանագրի մյուս կողմից:

Այս փոփոխությունները որևէ Էական ազդեցություն չեն ունեցել Բանկի վրա:

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են ՀՀ դրամի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ՀՀ դրամի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույթով հաշվարկված տոկոսների ու վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Արտարժույթային գործարքների վերագնահատումից առաջացող օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես արտարժույթի վերագնահատման տարբերություններից օգուտ/(վնաս):

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, թղթակցային հաշիվները այլ բանկերում (տոստրո հաշիվներ) և ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները, ներառյալ ՀՀ դրամով պարտադիր պահուստները՝ զերծ պայմանագրային սահմանափակումներից:

Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ▶ ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ▶ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է նաև իրական արժեքի հեջի ճշգրտումներն արտացոլելու համար այն ամսաթվի դրությամբ, երբ սկսվում է համապատասխան ճշգրտման ամորտիզացիայի հաշվարկը:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 3(բ)(ii) կետում:

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտը ներառում է՝

- ▶ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- ▶ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկը ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական ակտիվներ

i. Ղասակարգում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ղասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ▶ ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ▶ ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այս պայմանների մանրամասները ներկայացվում են ստորև՝

Բանկի՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, հաճախորդներին տրված վարկերը և պահանջները բանկերի նկատմամբ:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը:

- ▶ պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ▶ ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը:
- ▶ բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ▶ ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՛ հավաքված դրամական հոսքերի վրա):
- ▶ նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվներ վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժամ:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այս պայմանը: Գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը:

- ▶ Պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- ▶ Լծակավորման հատկանիշը,
- ▶ Վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- ▶ Պայմանները, որոնք սահմանափակում են Բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածություններին), և
- ▶ Հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող

- ▶ ֆինանսական գործիքը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ▶ ֆինանսական գործիքի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները: Այսպես, ճանաչված ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը, որոնք նախկինում ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, այլ համապարփակ ֆինանսական արդյունքից դասակարգվում են շահույթ կամ վնաս:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների ԱՎԿ-ները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, որը մնում է իրական արժեքով: Փոխարենը, գումարը, որը հավասար է այն պահուստին, որը կառաջանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում որպես կուտակված արժեքի մասնաճանաչում կամ վնասում համապատասխան ծախսագրմամբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված վնասը ակտիվի ապաճանաչումից հետո վերադասակարգվում է շահույթի և վնասի կազմ:

Առևտրային նպատակով չչափվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այս բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Ընտրությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այնպես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների, դասում է ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

ii. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (կամ, ֆինանսական ակտիվի մասը կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մասը), երբ՝

- ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, սակայն պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց Էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով, ինչպես նաև
- Բանկը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցվել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Բանկը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, ո՛չ փոխանցել և ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը, ակտիվը ճանաչվում է այնքանով, որքանով Բանկը շարունակում է մասնակցություն ունենալ տվյալ ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում իրականացվող ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և փոխհատուցման առավելագույն գումար, որը կարող է պահանջվել Բանկից:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), Բանկի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Բանկը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով վաճառված օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ լրանում է դրա գործողության ժամկետը:

Եթե նույն վարկատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն Էականորեն փոփոխված են նախորդի համեմատ, նման փոխարինումը կամ փոփոխությունը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է շահույթում կամ վնասում:

iii. Հետզնման և հակադարձ հետզնման պայմանագրեր

Հետզնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեյտ») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսավորման գործառնություններ: Հետզնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր»: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների կազմում:

Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեյտ) արտացոլվում է բանկերի նկատմամբ պահանջների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեյտ պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

iv. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և Բանկը մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ: Հաշվանցում կատարելու իրավունքը չպետք է պայմանավորված լինի ապագա ժամանակաշրջանի դեպքերով և պետք է ունենա իրավական ուժ բոլոր ստորև ներկայացված դեպքերում՝

- բնականոն գործունեության ընթացքում,
- պարտականությունների չկատարման դեպքում,
- կազմակերպության կամ դրա որևէ գործընկերոջ վճարունակ չլինելու կամ լուծարման ժամանակ:

Սույն պայմանները, որպես կանոն, չեն տարածվում հաշվանցման գլխավոր համաձայնությունների վրա, և համապատասխան ակտիվներն ու պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են համախառն արժեքով:

v. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է, արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- ▶ վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ, և
- ▶ մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորուստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Բանկի կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Բանկը իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Բանկը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը՝ դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ▶ ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- ▶ գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ▶ ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է «միայն մայր գումարի և դրա գծով հաշվարկված տոկոսների վճարումներ» չափանիշի հետ անհամապատասխանության:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Եթե դրամական հոսքերի փոփոխությունը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա, որպես կանոն, փոփոխության նպատակն է առավելագույն չափով վերականգնել ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ` սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Բանկը մտադիր է այնպես փոփոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրս գրվի նախքան փոփոխությունը կատարելը (տես՝ ստորև դուրսգրման քաղաքականություն): Այս մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Բանկը իրականացնում է նաև որակական գնահատում, որպեսզի գնահատի փոփոխության նշանակալի լինելը:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես փոփոխումից օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում: Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Փոփոխման շրջանակում ցանկացած կրած ծախսում կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման փոփոխությունն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Բանկը հաշվառում է տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր փոփոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկը իրականացնում է փոփոխության՝ նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը:

Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ▶ ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- ▶ գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ▶ փոխարկման հնարավորության ներառում,
- ▶ ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերը (ներառյալ վճարվող և ստացվող այլ վճարների զուտ գումարները) սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջեխ ներկա արժեքը նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի գեղջված ներկա արժեքից:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Եթե ֆինանսական պարտավորության փոփոխությունը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, գեղջելով փոփոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացորդային ժամանակահատվածում: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Բանկը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «Վարկային կորուստների գծով ծախս» հոդվածում՝ ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ/պարտքերի գանձման միջոցներ՝ վճարման ենթակա գումարների վերադարձմանը վերաբերող Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Հաճախորդներին տրված վարկեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր» հոդվածը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող վարկերը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «ներդրումային արժեթղթեր» հոդվածը ներառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող Հայաստանի Հանրապետության պետական պարտքային արժեթղթերը:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Արժեքը ներառում է գնման գինը՝ ներառյալ ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և ուղղակիորեն վերագրելի այլ ծախսերը, ինչպես նաև այն բոլոր ծախսերը, որոնք կատարվել են ակտիվները աշխատանքային վիճակի և դրանց նպատակային օգտագործման համար անհրաժեշտ վայր հասցնելու համար: Շահագործման և նախաարտադրության ծախսերը ներառված չեն հիմնական միջոցների արժեքի մեջ:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Հիմնական միջոցների գծով հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ հիմնական միջոցի տարրի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կազմակերպություն կհոսեն սպասվածից ավելի մեծ գումարով: Վերանորոգումը և սպասարկումը ճանաչվում են ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Ակտիվների մաշվածության գումարը պետք է բաշխվի պարբերական հիմունքներով դրա օգտակար ծառայության ընթացքում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով առանձին ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողատարածքի գծով մաշվածությունն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- շենքեր 20 տարի
- համակարգիչներ և հաղորդակցության սարքավորումներ 1-8 տարի
- փոխադրամիջոցներ 8 տարի
- տնտեսական գույք և այլ հիմնական միջոցներ 8 տարի

Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի և լիցենզիաների ձեռքբերման և ներդրման ծախսումները կապիտալացվում են համապատասխան ոչ նյութական ակտիվի ինքնարժեքին:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները կազմում են 3-ից 10 տարի:

Ներքին ձևավորված ոչ նյութական ակտիվները, բացառությամբ կապիտալիզացված զարգացման ծախսերի, չեն կապիտալացվում, և դրանց հետ կապված ծախսերը արտացոլվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որում կատարվել են ծախսերը:

Հետազոտության և մշակման ծախսեր

Հետազոտության ծախսերը ծախսագրվում են՝ դրանց կատարման պահին: Առանձին ծրագրի մշակման ծախսերը ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվ, երբ Բանկը կարող է ցուցադրել.

- ▶ Ոչ նյութական ակտիվն այնպիսի ավարտուն վիճակի հասցնելու տեխնիկական իրագործելիությունը, որ ակտիվը հասանելի լինի օգտագործման կամ վաճառքի համար,
- ▶ Ակտիվն ավարտին հասցնելու և այն օգտագործելու կամ վաճառելու իր կարողությունն ու մտադրությունը,
- ▶ Այն, թե ինչպես է ակտիվը առաջացնելու ապագա տնտեսական օգուտներ,
- ▶ Ռեսուրսների առկայությունը՝ ակտիվն ավարտելու համար,
- ▶ Մշակման ընթացքում կատարվող ծախսերը արժանահավատորեն չափելու ունակությունը:

Մշակման ծախսերը որպես ակտիվ սկզբնական ճանաչումից հետո ակտիվը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Ակտիվների ամորտիզացիան սկսվում է, երբ մշակումն ավարտված է, և ակտիվը հասանելի է օգտագործման համար: Այն ամորտիզացվում է ապագա ակնկալվող օգուտի ժամանակաշրջանի ընթացքում:

Բռնագանձված ակտիվներ

Բանկը ճանաչում է բռնագանձված ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ ունի իրացման ամբողջական և վերջնական իրավունքներ գրավի նկատմամբ:

Բռնագանձված ակտիվները չափվում են հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչման պահին բռնագանձված ակտիվները չափվում են այն վարկի հաշվեկշռային արժեքով, որի գծով տեղի է ունեցել պարտագանձում ներառյալ գրավի առգրավման ընթացքում կրած ծախսումները: Իրական արժեքը՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, իրենից ներկայացնում է գրավի գնահատված վաճառքի գինը բնականոն գործունեության ընթացքում՝ հանած համապատասխան վաճառքի ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո բռնագանձված ակտիվները վերանայվում են վաճառքի համար պահվող դասակարգման չափանիշներին համապատասխանելու տեսանկյունից և համապատասխանաբար վերադասակարգվում են՝ չափանիշները բավարարելու դեպքում: Բռնագանձված ակտիվների օտարումից օգուտը և կորուստը ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ գործառնական եկամուտ» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են Լոնդոնի մետաղների բորսայի գներով, որոնք մոտավորապես համապատասխանում են իրական արժեքին:

Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Հայտանիշի առկայության դեպքում կամ ակտիվի արժեզրկման գծով տարեկան թեստավորման անհրաժեշտության դեպքում Բանկը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը գեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով գեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն Եական է, պահուստները որոշվում են՝ գեղչելով անկախվող ապագա դրամական հոսքերը գեղչման՝ մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը հատուկ ռիսկերը:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Բանկը բնականոն գործունեության ընթացքում արժուպային և կապիտալի շուկաներում օգտագործում է տարատեսակ ածանցյալ ֆինանսական գործիքներ: Այդ ֆինանսական գործիքները նախատեսված են առևտրի համար և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշման հիման վրա կամ գնորոշման մոդելներով, որոնք հիմնված են բազիսային գործիքների ընթացիկ շուկայական և պայմանագրային արժեքների և այլ գործոնների վրա: Դրական իրական արժեքով ածանցյալ ֆինանսական գործիքները արտացոլվում են ակտիվների կազմում, իսկ բացասական արժեք ունեցողները՝ պարտավորությունների կազմում: Նշված գործիքներից ստացված արդյունքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես առևտրական նպատակով պահվող ակտիվներից կամ արտարժուպային գործառնություններից գուտ շահույթ/(վնաս)՝ կախված ածանցյալ գործիքների բնույթից:

Ներկառուցված ածանցյալ գործիքը հիբրիդային գործիքի բաղադրիչ է, որը ներառում է նաև ոչ ածանցյալ հիմնական պայմանագիր, որի արդյունքում համակցված գործիքի դրամական հոսքերի մի մասը տատանվում է առանձին ածանցյալ գործիքի նման: Ներկառուցված ածանցյալ գործիքը առաջացնում է փոփոխություններ որոշ կամ բոլոր դրամական միջոցների հոսքերում, որոնք հակառակ դեպքում պահանջվում էին պայմանագրով, կախված սահմանված տոկոսադրույքից, ֆինանսական գործիքի գնից, ապրանքի գնից, արտարժույթի փոխարժեքից, գների ինդեքսից կամ դրույքից, վարկային վարկանշից կամ ինդեքսից կամ այլ փոփոխականից, պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այն հատուկ չէ պայմանագրի կողմի համար: Ֆինանսական գործիքին կցված, բայց այդ գործիքից անկախ՝ ըստ պայմանագրի փոխանցելի ածանցյալ գործիքը, կամ գործիքը, որի պայմանագրային կողմը տարբերվում է այդ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմից, չի հանդիսանում ներկառուցված ածանցյալ գործիք, այլ առանձին ածանցյալ գործիք է:

Պարտավորությունների և ոչ ֆինանսական «հիմնական» պայմանագրերի մեջ ներկառուցված ածանցյալ

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

գործիքները դիտարկվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և հաշվառվում են իրական արժեքով, եթե համապատասխանում են ածանցյալ գործիքի վերոնշյալ սահմանմանը, նրանց տնտեսական հատկանիշները և ռիսկերը սերտորեն կապված չեն «հիմնական» պայմանագրի հետ, և «հիմնական» պայմանագիրը չի համարվում առևտրային նպատակներով կնքված կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող: Ներկառուցված ածանցյալ գործիքները, որոնք առանձնացվել են «հիմնական»-ից, հաշվառվում են առևտրային պորտֆելում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են բիզնես մոդելի և SPPI-ի գնահատումների հիման վրա:

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները՝ զտած հարկերի ազդեցությամբ, ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններում:

Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ Եուրոյան ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունները ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ ապագայում կստացվի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվի ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ ապագայում կստացվի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Սեզմենտային հաշվետվություններ

Գործառնական սեզմենտը Բանկի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր, որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեզմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Դեկավարությունը գտնում է, որ Բանկը բաղկացած է մեկ գործառնական սեզմենտից՝ հիմք ընդունելով ՖՀՄՍ հաշվետվությունների արդյունքները: Բանկի եկամտի և ակտիվների մեծ մասը գտնվում է Հայաստանում: 2022 և 2021 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտաքին գործընկերոջից կամ հաճախորդից ստացված և Բանկի ընդհանուր հասույթի 10% և ավելի գերազանցող հասույթով որևէ գործարք չի գրանցվել:

Վարձակալություն

Պայմանագրի սկզբում Բանկը որոշում է, թե արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը: Գնահատելու համար, թե արդյոք պայմանագրով փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը, Բանկը օգտագործում է ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը:

Բանկը՝ որպես վարձակալ

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում, Բանկը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Բանկը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Բանկին չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Բանկը կիրառործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, ինչը կիրառվում է հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Բանկը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Բանկը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- ▶ հաստատուն վճարումները, ներառյալ ըստ էության հաստատուն վճարումները,
- ▶ վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- ▶ գումարները, որոնք, ինչպես ակնկալվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- ▶ գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների՝ Բանկի գնահատականի փոփոխություն, եթե Բանկը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Ներդրումային գույքի սահմանմանը չհամապատասխանող օգտագործման իրավունքի ձևով ակտիվները Բանկը ներկայացնում է հիմնական միջոցների կազմում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնում է առանձին:

Բանկը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների գծով: Այս վարձակալությունների գծով վարձավճարները Բանկը ճանաչում է որպես ծախս գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ

Ստորև նկարագրված են հրապարակված նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք Բանկի ֆինանսական հաշվետվությունների թողարկման ժամանակ դեռևս ուժի մեջ չեն եղել: Բանկը պատրաստվում է կիրառելիության դեպքում ընդունել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, երբ դրանք ուժի մեջ մտնեն:

ՖՀՄՍ 17 Ապահովագրության պայմանագրեր

2017թ. Մայիսին ՀՀՄՍ-ն թողարկեց ՖՀՄՍ 17 “Ապահովագրության պայմանագրեր”, համապարփակ հաշվապահական հաշվառման նոր ստանդարտ, որը նախատեսված է ապահովագրական պայմանագրերի համար՝ ներառելով ճանաչումը, չափումը, ներկայացումը և բացահայտումը: Ուժի մեջ մտնելուց հետո, ՖՀՄՍ 17-ը կփոխարինի ՖՀՄՍ 4 “Ապահովագրության պայմանագրեր” ստանդարտին, որը թողարկվել է 2005թ.: ՖՀՄՍ 17-ը կիրառելի է ապահովագրական պայմանագրերի բոլոր տեսակներին (ներառյալ՝ կյանքի ապահովագրություն, ոչ կյանքի ապահովագրություն, ուղղակի ապահովագրություն և վերաապահովագրություն), անկախ ապահովագրություն տրամադրող կազմակերպության տեսակից, ինչպես նաև կիրառելի է որոշակի երաշխիքների և հայեցողական մասնակցության հատկանիշներով ֆինանսական գործիքների դեպքում: Կիրառելի կլինեն որոշ բացառություններ: ՖՀՄՍ 17-ը սահմանում է հաշվապահական հաշվառման նոր պահանջներ ապահովագրական հատկանիշներով բանկային պրոդուկտների նկատմամբ, իսկ այդ պահանջները կարող են ազդել որոշելու վրա, թե որ գործիքները կամ դրանց բաղադրիչները կներառվեն ՖՀՄՍ 9-ի կամ ՖՀՄՍ 17-ի շրջանակներում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Կրեդիտ քարտեր և համանման պրոդուկտներ, որոնք ապահովագրական ծածկույթ են ապահովում. թողարկողներից շատերը կարող են շարունակել կիրառել առկա հաշվապահական մոտեցումը՝ որպես ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական գործիք: ՖՀՄՍ 17-ը իր շրջանակից բացառում է կրեդիտ քարտերի պայմանագրերը (և այլ նմանատիպ պայմանագրերը, որոնք տրամադրում են կրեդիտային կամ վճարային պայմանավորվածություններ), որոնք համապատասխանում են ապահովագրության պայմանագրի սահմանմանը, միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը հաճախորդի հետ պայմանագրի գինը սահմանելիս չի արտացոլում առանձին հաճախորդի հետ կապված ապահովագրական ռիսկի գնահատումը:

Երբ ապահովագրական ծածկույթը տրամադրվում է որպես կրեդիտ քարտի պայմանագրային պայմանների մաս, թողարկողը պարտավոր է՝

- Առանձնացնել ապահովագրության ծածկույթը և դրա նկատմամբ կիրառել ՖՀՄՍ 17,
- Այլ բաղադրիչների նկատմամբ գործադրել այլ կիրառելի ստանդարտներ (օրինակ՝ ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 15 - Հասույթ գնորդների հետ պայմանագրերից կամ ՀՀՄՍ 37 - Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ):

Վարկային պայմանագրերը, որոնք համապատասխանում են ապահովագրության սահմանմանը, բայց ապահովագրական իրադարձությունների փոխհատուցումը սահմանափակում են այն չափով, որն այնպես պահանջվում է ապահովագրի՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունը մարելու համար - այդպիսի վարկերի թողարկողները, օրինակ՝ մահվամբ կասեցվող վարկերը, ունեն տարբերակ կիրառելու ՖՀՄՍ 9-ը կամ ՖՀՄՍ 17-ը: Ընտրությունը կատարվում է պորտֆելի մակարդակով և համարվում է անփոփոխ:

ՖՀՄՍ 17-ը ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ պահանջելով համեմատական տվյալներ: Վաղ կիրառումը թույլատրելի է այն պայմանով, որ կազմակերպությունը նաև կիրառում է ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 15, ՖՀՄՍ 17 առաջին անգամ կիրառելու ամսաթվին կամ դրանից առաջ:

Ներկայումս Բանկը գտնվում է իր ֆինանսական հաշվետվությունների վրա ՖՀՄՍ 17-ի ընդունման ազդեցության գնահատման փուլում:

Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում – Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԻՆ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 8-ում, որտեղ ներկայացված է «հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումը: Փոփոխությունները պարզաբանում են հաշվապահական հաշվառման գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման տարբերությունը: Ինչպես նաև, դրանք պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպությունները օգտագործում չափման հիմունքները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում այդ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, եթե այդ փաստը բացահայտվում է:

Ակնկալվում է, որ փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԻՆ-ն հրապարակել է փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում («Եականության մասին դատողությունների կիրառում»), որտեղ ներկայացված են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «Եական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության հայեցակարգը՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

բ) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը: Զանի որ Գործնական Ցուցումներ 2-ի փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության Էականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույց, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա:

Բանկը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունը՝ որոշելու, թե ինչ ազդեցություն կունենան դրանք Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վրա:

Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)

2021 թվականի մայիսին Խորհուրդը հրապարակել է ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները, որոնք ներառում են ՀՀՄՍ 12-ի համաձայն սկզբնական ճանաչման բացառությունների շրջանակը, այն այլևս չի կիրառվում այն գործարքների մասով, որոնք հանգեցնում են հավասար հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների:

Փոփոխությունները պետք է կիրառվեն այն գործարքների համար, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: Ինչպես նաև, ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում պետք է ճանաչվեն նաև հետաձգված հարկային ակտիվը (եթե առկա է բավարար հարկվող շահույթ) և հետաձգված հարկային պարտավորությունը՝ վարձակալության և ապագործարկման պարտավորությունների հետ կապված բոլոր նվազեցվող և հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Բանկը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունը:

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ

ՀՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են ունենում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները՝ հիմնված պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք խելամուտ են համարվում տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Սույն ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Իրական արժեքի չափումը

Երբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները, որոնք արտացոլված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, չեն կարող ստացվել ակտիվ շուկաներից, դրանք որոշվում են գնահատման տարբեր մեթոդների կիրառմամբ, որոնք ներառում են գնահատման մոդելների օգտագործումը: Այս մոդելների ելակետային տվյալները վերցվում են դիտարկելի շուկաներից, հնարավորության դեպքում, բայց անհնարինության դեպքում, իրական արժեքները սահմանելու համար պահանջվում է գնահատում: Դատողությունները և գնահատումները ներառում են իրացվելիության և մոդելային մուտքերի նկատառումներ: Իրական արժեքի որոշման վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար տես Ծան. 27:

Հաճախորդների տրված վարկերի արժեզրկումից կորուստներ

ՀՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստի գնահատումը ֆինանսական ակտիվների բոլոր դասերի համար պահանջում է դատողություն, մասնավորապես՝ ապագա դրամական հոսքերի գումարի և ժամանակի և գրավի արժեքի գնահատումը՝ արժեզրկման գծով վնասների որոշման և վարկային ռիսկի զգալի աճի գնահատման ժամանակ: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Բացի այդ, խոշոր բիզնեսի խափանումները կարող են առաջացնել իրացվելիության խնդիրներ որոշ կազմակերպությունների և սպառողների համար:

Բանկի՝ ակնկալվող վարկային կորուստների հաշվարկները ելնում են բարդ մոդելներից, որոնց հիմքում ընկած են

(հազար ՀՀ դրամ)

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ (շարունակություն)

մի շարք ենթադրություններ՝ փոփոխական մուտքային տվյալների ընտրության և նրանց փոխկապակցվածության վերաբերյալ (տես Ծան. 26): ԱՎԿ մոդելների տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են՝

- ▶ Կիճակագրական մոդելներ դեֆոլտի հավանականությունը (PD), դեֆոլտի դեպքում գործիքի արժեքը (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD) խմբային հիմունքով գնահատելու համար,
- ▶ Ֆինանսական ակտիվների սեզոնականությունը, երբ դրանց ԱՎԿ-ն հաշվարկված է խմբային հիմունքով,
- ▶ ԱՎԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերը և մուտքային տվյալների ընտրությունը,
- ▶ Մակրոտնտեսական սցենարների և տնտեսագիտական մուտքային տվյալների միջև կապվածության որոշումը, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքները, և ազդեցությունը դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտի դեպքում գործիքի իրական արժեքի (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- ▶ Հեռանկարային մակրոտնտեսական սցենարների ընտրությունը և դրանց հավանականության կշիռը՝ տնտեսական տվյալները ԱՎԿ մոդելների մեջ արտացոլելու համար:

2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկված պահուստների գումարը կազմել է 2,729,952 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 3,812,656 հազար ՀՀ դրամ): Մանրամասները ներկայացված են Ծան. 9-ում:

5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են.

	2022	2021
Կանխիկ դրամական միջոցներ	2,266,322	1,499,695
Ընթացիկ հաշիվներ այլ բանկերում	665,675	914,243
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում՝ ներառյալ պարտադիր պահուստները (չսահմանափակված մաս, տես Ծան. 6)	249,266	-
Արժեզրկում	(1,119)	(1,394)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,180,144	2,412,544

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշիվների մնացորդները ներառում են պարտադիր պահուստներ 85,268 հազար ՀՀ դրամի չափով (2021թ.՝ զրո):

Բանկերը պարտավոր են ունենալ դեպոզիտային դրամական միջոցներ (պարտադիր պահուստ) ԿԲ-ում ՀՀ դրամով ներգրավված գումարների 4%-ի (2021: 4%) և արտարժույթով ներգրավված գումարների 18%-ի չափով (2021: 18%):

Բանկերը պարտավոր են արտարժույթով ներգրավված գումարների 6%-ը (2021՝ 8%) պահել ՀՀ ԿԲ-ում որպես ՀՀ դրամով դեպոզիտային միջոցներ և 12%-ը (2021՝ 10%)՝ արտարժույթով:

Ավելին, բանկերի՝ արտարժույթով պահուստավորված միջոցների ելքագրման հնարավորությունը սահմանափակված է: Հետևաբար, Բանկը արտարժույթով պահուստավորված միջոցները դասակարգում է որպես «Պահանջներ բանկերի նկատմամբ» (Ծանոթագրություն 6):

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ վերագրված են փուլ 1-ին: ԱՎԿ պահուստի փոփոխությունը տարվա ընթացքում հետևյալն է.

	2022	2021
ԱՎԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	1,394	1,034
ԱՎԿ փոփոխություններ	(275)	360
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,119	1,394

Դրամական միջոցների և դրանց համարժեքների որակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 26-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

(հազար ՀՀ դրամ)

6. Պահանջներ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պահանջները ներառում են.

	<u>2022</u>	<u>2021</u>
ՀՀ ԿԲ-ում արտարժույթով պարտադիր պահուստներ (Ծան. 5)	110,377	-
Արժեզրկում	(58)	-
	<u>110,319</u>	<u>-</u>

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ ԿԲ-ում պարտադիր պահուստները ներառում են արտարժույթով պահուստները՝ 110,377 հազար ՀՀ դրամի չափով (2021թ.՝ զրո) (տես Ծանոթագրություն 5):

Բանկերի նկատմամբ պահանջները ամբողջությամբ վերագրված են փուլ 1-ին: ԱՎԿ պահուստի փոփոխությունը տարվա ընթացքում հետևյալն է՝

	<u>2022</u>	<u>2021</u>
ԱՎԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	-	-
ԱՎԿ փոփոխություններ	58	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>58</u>	<u>-</u>

Բանկերի նկատմամբ պահանջների որակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 26-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

7. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Բանկն ածանցյալ ֆինանսական գործիքներն օգտագործում է առևտրային նպատակներով: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս որպես ակտիվներ և պարտավորություններ ներկայացված ածանցյալ ֆինանսական գործիքների իրական և անվանական արժեքները.

	<u>2022թ.</u>		<u>2021թ.</u>	
	<u>Անվանական արժեք</u>	<u>Իրական արժեք</u>	<u>Անվանական արժեք</u>	<u>Իրական արժեք</u>
Ակտիվներ				
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Ֆորվարդներ և սվոփեր - ՀՀ	-	-	-	-
	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>
Պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Ֆորվարդներ և սվոփեր - ՀՀ	1,967,850	2,549	-	-
	<u>1,967,850</u>	<u>2,549</u>	<u>-</u>	<u>-</u>

(հազար ՀՀ դրամ)

8. Ներդրումային արժեթղթեր

2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրումային արժեթղթերը ներառում են՝

	2022	2021
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր		
ՀՀ պետական արժեթղթեր	4,551,296	5,116,897
	4,551,296	5,116,897

Պարտքային գործիքների վարկային որակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 26-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ԱՎԿ-ների փոփոխությունները հետևյալն են՝

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	Փուլ 1	Ընդամենը
Իրական արժեքը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	5,116,897	5,116,897
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	463,460	463,460
Մարված ակտիվներ	(491,613)	(491,613)
Իրական արժեքի զուտ փոփոխություն	(537,448)	(537,448)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,551,296	4,551,296

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	Փուլ 1	Ընդամենը
ԱՎԿ պահուստ 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	65,610	65,610
ԱՎԿ փոփոխություն	(13,527)	(13,527)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	52,083	52,083

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	Փուլ 1	Ընդամենը
Իրական արժեքը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	5,519,123	5,519,123
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	466,878	466,878
Մարված ակտիվներ	(491,700)	(491,700)
Իրական արժեքի զուտ փոփոխություն	(377,404)	(377,404)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,116,897	5,116,897

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	Փուլ 1	Ընդամենը
ԱՎԿ պահուստ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	18,595	18,595
ԱՎԿ փոփոխություն	47,015	47,015
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	65,610	65,610

9. Հաճախորդներին տրված վարկեր

	2022	2021
Ոսկու գրավով ապահովված վարկեր	48,608,346	48,219,682
Հիփոթեքային վարկեր	7,426,959	5,460,079
Ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր	1,593,618	1,377,181
Կորպորատիվ վարկեր	1,512,019	1,074,644
Հաճախորդների տրված համախառն վարկեր	59,140,942	56,131,586
Արժեզրկման պահուստ	(2,729,952)	(3,812,656)
Հաճախորդների տրված զուտ վարկեր ամորտիզացված արժեքով	56,410,990	52,318,930

Բանկի գործունեությունը հիմնականում ուղղված է ֆիզիկական անձանց ոսկու գրավադրմամբ վարկեր տրամադրելուն:

(հազար ՀՀ դրամ)

9. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)**Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով վարկերի գծով արժեզրկման պահուստ**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը տարվա ընթացքում հետևյալն է՝

Հաճախորդների տրված վարկեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	28,413,792	15,171,928	12,545,866	56,131,586
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	45,339,913	-	-	45,339,913
Մարված ակտիվներ	(19,686,226)	(10,962,536)	(8,984,429)	(39,633,191)
Տեղափոխում փուլ 1	604,731	(604,731)	-	-
Տեղափոխում փուլ 2	(15,211,044)	18,226,528	(3,015,484)	-
Տեղափոխում փուլ 3	(4,598,071)	(3,190,488)	7,788,559	-
Վերականգնումներ	-	-	207,884	207,884
Դուրս գրված գումարներ	-	-	(2,038,650)	(2,038,650)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(626,595)	(154,045)	(85,960)	(866,600)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	34,236,500	18,486,656	6,417,786	59,140,942
Հաճախորդների տրված վարկեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ պահուստ 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	361,934	1,077,529	2,373,193	3,812,656
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	453,399	-	-	453,399
Մարված ակտիվներ	(251,526)	(745,093)	(831,767)	(1,828,386)
Տեղափոխում փուլ 1	42,949	(42,949)	-	-
Տեղափոխում փուլ 2	(193,758)	764,171	(570,413)	-
Տեղափոխում փուլ 3	(58,570)	(386,803)	445,373	-
Մոդելների, ելակետային տվյալների փոփոխություն և այլ շարժեր	(123,503)	176,381	1,970,958	2,023,836
Չեղչի ամորտիզացիա	-	-	66,569	66,569
Վերականգնումներ	-	-	207,884	207,884
Դուրս գրված գումարներ	-	-	(2,038,650)	(2,038,650)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	18,870	7,544	6,230	32,644
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	249,795	850,780	1,629,377	2,729,952

2022 թվականին Բանկը փոփոխել է 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համախառն հաշվեկշռային արժեքի և ԱՎԿ պահուստի տեղաշարժերի ներկայացումը, որպեսզի համապատասխանի ընթացիկ ժամանակաշրջանի ներկայացմանը:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը տարվա ընթացքում հետևյալն է՝

Հաճախորդների տրված վարկեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	27,578,055	9,519,440	12,612,794	49,710,289
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	49,125,297	-	-	49,125,297
Մարված ակտիվներ	(25,149,213)	(7,153,150)	(9,279,784)	(41,582,147)
Տեղափոխում փուլ 1	232,533	(231,861)	(672)	-
Տեղափոխում փուլ 2	(13,331,411)	14,138,392	(806,981)	-
Տեղափոխում փուլ 3	(9,710,256)	(1,052,854)	10,763,110	-
Վերականգնումներ	-	-	340,072	340,072
Դուրս գրված գումարներ	-	-	(1,045,226)	(1,045,226)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(331,213)	(48,039)	(37,447)	(416,699)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,413,792	15,171,928	12,545,866	56,131,586

(հազար ՀՀ դրամ)

9. Հաճախորդների տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

<i>Հաճախորդների տրված վարկեր</i>	<i>Փուլ 1</i>	<i>Փուլ 2</i>	<i>Փուլ 3</i>	<i>Ընդամենը</i>
ԱՎԿ պահուստ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	217,737	358,034	1,524,332	2,100,103
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	586,306	-	-	586,306
Մարված ակտիվներ	(198,561)	(269,036)	(1,121,518)	(1,589,115)
Տեղափոխում փուլ 1	23,937	(23,937)	-	-
Տեղափոխում փուլ 2	(171,895)	277,847	(105,952)	-
Տեղափոխում փուլ 3	(128,354)	(52,993)	181,347	-
Մոդելների, ելակետային տվյալների փոփոխություն և այլ շարժեր	32,764	787,614	2,600,138	3,420,516
Դուրս գրված գումարներ	-	-	340,072	340,072
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	-	-	(1,045,226)	(1,045,226)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	361,934	1,077,529	2,373,193	3,812,656

Գրավ և վարկային ռիսկը զսպող այլ գործիքներ

Դրահանջվող գրավի տեսակն ու չափը կախված է վարկառուի վարկային ռիսկի գնահատականից: Բանկի կողմից սահմանված են ապահովման միջոցների թույլատրելիության և գնահատման չափորոշիչներ:

Գրավի հիմնական տեսակներն են՝

- ▶ Ոսկի և թանկարժեք մետաղներ,
- ▶ Անշարժ գույք

Դեկավարությունը հետևում է գրավի շուկայական արժեքին և պահանջում է լրացուցիչ գրավ՝ դրա հիմքում ընկած պայմանագրի համաձայն՝ վարկի արժեզրկման պահուստի բավարարության ստուգման ընթացքում:

Ստորև աղյուսակը ներկայացնում է գրավի ընթացիկ իրական արժեքների և արժեզրկված ակտիվների (փուլ 3) վարկային ռիսկը զսպող այլ գործիքների վերլուծությունը՝

	<i>Վարկային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը</i>		<i>Բազային սցենարով պահվող գրավի առարկայի իրական արժեքը</i>					<i>Չուտ ենթարկվածություն</i>	<i>Համապատասխան ԱՎԿ</i>
	<i>Անշարժ գույք</i>	<i>Ոսկի</i>	<i>Այլ</i>	<i>Ավելցուկ գրավ</i>	<i>Ընդամենը գրավ</i>	<i>Չուտ ենթարկվածություն</i>			
2022թ. դեկտեմբերի 31									
Ոսկու գրավով ապահովված վարկեր	6,159,631	-	5,520,399	-	(180,323)	5,340,076	819,555	1,510,010	
Հիփոթեքային վարկեր	221,413	337,840	-	-	(166,555)	171,285	50,128	94,600	
Այլ կորպորատիվ վարկեր	4,482	8,000	-	-	(3,634)	4,366	116	2,088	
Ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր	32,260	4,000	-	7,479	(3,795)	7,684	24,576	22,679	
	6,417,786	349,840	5,520,399	7,479	(354,307)	5,523,411	894,375	1,629,377	
2021թ. դեկտեմբերի 31									
Ոսկու գրավով ապահովված վարկեր	12,325,573	-	13,470,596	-	(1,821,593)	11,649,003	676,570	2,294,014	
Հիփոթեքային վարկեր	146,256	311,942	-	-	(176,092)	135,850	10,406	36,992	
Այլ կորպորատիվ վարկեր	47,030	32,000	-	-	(1,573)	30,427	16,603	29,445	
Ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր	27,007	14,469	-	15,993	(10,712)	19,750	7,257	12,742	
	12,545,866	358,411	13,470,596	15,993	(2,009,970)	11,835,030	710,836	2,373,193	

(հազար ՀՀ դրամ)

9. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)**Գրավադրված ակտիվներ**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված 3,290,742 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 1,844,684 հազար ՀՀ դրամ) համախառն արժեքով վարկեր հանդիսանում են գրավ այլ փոխառու միջոցների համար (տես Ծանոթագրություն 18):

Հաճախորդներին տրված վարկերի համակենտրոնացում

2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի երրորդ կողմ հանդիսացող կազմակերպություններին տրամադրված վարկերի էական համակենտրոնացում:

Վարկերը տրամադրվել են հետևյալ հաճախորդներին՝

	2022	2021
Անհատներ	57,618,831	55,056,707
Մասնավոր ընկերություններ	1,522,111	613,949
Ֆինանսական հաստատություններ	-	460,930
Հաճախորդների տրված համախառն վարկեր	59,140,942	56,131,586
Նվազեցում՝ արժեզրկման պահուստ	(2,729,952)	(3,812,656)
Հաճախորդներին տրված վարկեր	56,410,990	52,318,930

Վարկերը հիմնականում տրամադրվում են ՀՀ հաճախորդներին՝ տնտեսության հետևյալ ոլորտներում գործող.

	2022	2021
Անհատներ	57,618,831	55,056,707
Առևտրային ընկերություններ	874,689	285,459
Ծառայությունների ոլորտ	350,459	520,720
Գյուղատնտեսություն և սննդի մշակում	116,221	191,564
Արտադրություն	131,628	59,774
Շինարարություն	34,887	3,096
Այլ	14,227	14,266
Հաճախորդներին տրված համախառն ակտիվներ	59,140,942	56,131,586
Նվազեցում՝ արժեզրկման պահուստ	(2,729,952)	(3,812,656)
Հաճախորդներին տրված վարկեր	56,410,990	52,318,930

(հազար ՀՀ դրամ)

10. Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հիմնական միջոցների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների շարժը հետևյալն է՝

	Հող և շենքեր	Վարձա- կալված գույքի բարելա- վում	Համակար- գիչներ և հաղորդակ ցույթյան սարքավոր ումներ	Փոխադրա- միջոցներ	Տնտեսա- կան գույք	Հիմնա- կան միջոց- ներ	Օգտա- գործման իրավուն- քի ձևով ակտիվ- ներ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	130,130	93,671	370,550	168,167	398,151	1,160,669	1,601,372	2,762,041
Ավելացում	-	104,038	234,548	-	407,739	746,325	636,295	1,382,620
Օտարում և դուրսգրում	-	-	(12,799)	-	(2,468)	(15,267)	-	(15,267)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	130,130	197,709	592,299	168,167	803,422	1,891,727	2,237,667	4,129,394
Կուտակված մաշվածություն և արժեզրկում								
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	39,108	27,162	324,310	150,966	179,243	720,789	354,071	1,074,860
Մաշվածության ծախս	6,556	6,735	81,392	3,356	58,993	157,032	222,548	379,580
Օտարում և դուրսգրում	-	-	(12,646)	-	(2,469)	(15,115)	-	(15,115)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	45,664	33,897	393,056	154,322	235,767	862,706	576,619	1,439,325
Չուտ հաշվեկշռային արժեք								
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	84,466	163,812	199,243	13,845	567,655	1,029,021	1,661,048	2,690,069
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ								
	Հող և շենքեր	Վարձա- կալված գույքի բարելա- վում	Համակար- գիչներ և հաղորդակ ցույթյան սարքավոր ումներ	Փոխադրա- միջոցներ	Տնտեսա- կան գույք	Հիմնա- կան միջոց- ներ	Օգտա- գործման իրավուն- քի ձևով ակտիվ- ներ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	130,130	91,223	329,981	168,167	298,319	1,017,820	1,162,883	2,180,703
Ավելացում	-	3,147	40,569	-	101,699	145,415	438,489	583,904
Օտարում և դուրսգրում	-	(699)	-	-	(1,867)	(2,566)	-	(2,566)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	130,130	93,671	370,550	168,167	398,151	1,160,669	1,601,372	2,762,041
Կուտակված մաշվածություն և արժեզրկում								
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	32,588	22,385	264,697	144,033	143,415	607,118	188,947	796,065
Մաշվածության ծախս	6,520	5,090	59,613	6,933	36,994	115,150	165,124	280,274
Օտարում և դուրսգրում	-	(313)	-	-	(1,166)	(1,479)	-	(1,479)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	39,108	27,162	324,310	150,966	179,243	720,789	354,071	1,074,860
Չուտ հաշվեկշռային արժեք								
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	91,022	66,509	46,240	17,201	218,908	439,880	1,247,301	1,687,181

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ներառում են միայն շենքեր:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվները կազմում են 557,143 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 506,381 հազար ՀՀ դրամ):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված տեղադրման փուլում գտնվող ակտիվները կազմում են 148,156 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 53,507 հազար ՀՀ դրամ):

(հազար ՀՀ դրամ)

11. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվների շարժը հետևյալն է՝

	<i>Արտոնագրեր</i>	<i>Համակարգ- չային ծրագրեր</i>	<i>Մշակման ծախսեր</i>	<i>Ընդամենը</i>
Սկզբնական արժեք				
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	55,679	12,230	-	67,909
Ավելացումներ	60,655	353,613	205,436	619,704
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	116,334	365,843	205,436	687,613
Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում				
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	27,210	9,165	-	36,375
Ամորտիզացիայի գծով ծախս	26,068	11,700	-	37,768
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	53,278	20,865	-	74,143
Չուտ հաշվեկշռային արժեք				
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,469	3,065	-	31,534
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	63,056	344,978	205,436	613,470

	<i>Արտոնագրեր</i>	<i>Համակարգչա- յին ծրագրեր</i>	<i>Ընդամենը</i>
Սկզբնական արժեք			
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	49,290	11,965	61,255
Ավելացումներ	21,238	265	21,503
Օտարումներ և դուրսգրումներ	(14,849)	-	(14,849)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	55,679	12,230	67,909
Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում			
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,525	7,665	34,190
Ամորտիզացիայի գծով ծախս	15,534	1,500	17,034
Օտարումներ և դուրսգրումներ	(14,849)	-	(14,849)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	27,210	9,165	36,375
Չուտ հաշվեկշռային արժեք			
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,765	4,300	27,065
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,469	3,065	31,534

Մշակման ծախսերը ներառում են Բանկի կողմից մշակված մոբայլ բանկինգ հավելվածին և օնլայն բանկային համակարգին առնչվող ծախսերը, որոնք դեռ հասանելի չեն օգտագործման համար:

12. Հարկում

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է հետևյալ հոդվածներից՝

	<i>2022</i>	<i>2021</i>
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	1,478,479	-
Նախորդ ժամանակաշրջանում պակաս ներկայացված գումար	58,239	11,349
Հետաձգված հարկային (փոխհատուցում) /ծախս՝ ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(319,669)	1,000,882
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,217,049	1,012,231

2022 թվականի համար ընթացիկ շահութահարկի և հետաձգված հարկի դրույքաչափը կազմում է 18% (2021թ.՝ 18%):

(հազար ՀՀ դրամ)

12. Հարկում (շարունակություն)

Շահութահարկի արդյունավետ դրույքաչափը տարբերվում է շահութահարկի՝ օրենքով սահմանված դրույքաչափից: Օրենքով սահմանված դրույքաչափի վրա հիմնված շահութահարկի գծով ծախսի համադրումը փաստացի ծախսի հետ հետևյալն է.

	2022	2021
Շահույթ նախքան հարկումը	7,123,785	5,812,386
Օրենքով սահմանված հարկի դրույքաչափ	18%	18%
Շահութահարկի գծով տեսական ծախս՝ օրենքով սահմանված դրույքաչափով	1,282,281	1,046,229
Չվազեցվող ծախսեր	19,557	-
Հարկերից ազատված եկամուտ	(109,438)	(45,347)
Նախորդ ժամանակաշրջանում պակաս ներկայացված գումար	58,239	11,349
Հետագա ժամանակաշրջաններ տեղափոխված օգտագործված հարկային վնասներ, որոնք նախկինում չեն ճանաչվել	(33,590)	-
Շահութահարկի գծով ծախս	1,217,049	1,012,231

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները 2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց շարժը համապատասխան տարիների համար ներկայացված է ստորև՝

	<i>Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում</i>			<i>Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում</i>			
	2021թ. հունվարի 1	<i>Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում</i>	<i>Այլ համապարփակ եկամտի կազմում</i>	2021թ. դեկտեմբերի 31	<i>Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում</i>	<i>Այլ համապարփակ եկամտի կազմում</i>	2022 թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)							
Ներդրումային արժեթղթեր	17,696	-	59,470	77,166	4,824	99,176	181,166
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	-	-	(37)	-	(37)
Հաճախորդներին տրված վարկեր	(1,800,938)	(1,038,600)	-	(2,839,538)	286,309	-	(2,553,229)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(175,308)	(49,206)	-	(224,514)	(74,933)	-	(299,447)
Այլ ակտիվներ	(922)	(4,068)	-	(4,990)	(5,504)	-	(10,494)
Այլ փոխառու միջոցներ	-	-	-	-	6,776	-	6,776
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	203	-	203
Վարձակալության գծով պարտավորություններ	185,641	56,422	-	242,063	79,645	-	321,708
Այլ պարտավորություններ	36,346	980	-	37,326	55,976	-	93,302
Հետագա ժամանակաշրջաններ տեղափոխված հարկային վնաս	-	33,590	-	33,590	(33,590)	-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ, զուտ	(1,737,485)	(1,000,882)	59,470	(2,678,897)	319,669	99,176	(2,260,052)

(հազար ՀՀ դրամ)

13. Վարկային կորուստների գծով ծախս

Ստորև աղյուսակը ներկայացնում է ֆինանսական գործիքների գծով ԱՎԿ ծախսերը՝ գրանցված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար.

	Ծան.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	275	-	-	275
Պահանջներ բանկերի նկատմամբ	6	58	-	-	58
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	9	(78,370)	568,712	(1,139,191)	(648,849)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	8	13,527	-	-	13,527
Այլ ֆինանսական ակտիվներ	14	2,166	-	-	2,166
Ֆինանսական երաշխիքներ	20	(30,184)	-	-	(30,184)
Ընդամենը վարկային կորստի գծով ծախս		(92,528)	568,712	(1,139,191)	(663,007)

Ստորև աղյուսակը ներկայացնում է ֆինանսական գործիքների գծով ԱՎԿ ծախսերը՝ գրանցված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար.

	Ծան.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	(360)	-	-	(360)
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	9	(420,509)	(518,578)	(1,478,620)	(2,417,707)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	8	(47,015)	-	-	(47,015)
Այլ ֆինանսական ակտիվներ	14	(7,933)	-	-	(7,933)
Ընդամենը վարկային կորստի գծով ծախս		(475,817)	(518,578)	(1,478,620)	(2,473,015)

14. Այլ ակտիվներ

Այլ ակտիվները բաղկացած են հետևյալ հոդվածներից.

	2022	2021
Այլ դեբիտորական պարտքեր	185,446	143,042
Նվազեցում՝ այլ ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստ	(8,531)	(10,701)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	176,915	132,341
Կանխավճարներ	440,126	112,533
Բռնագանձված ակտիվներ	110,443	121,945
Հարկերի կանխավճարներ, բացառությամբ շահութահարկի	54,862	18,109
Այլ ոչ ֆինանսական ակտիվներ	33,077	34,075
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	638,508	286,662
Ընդամենը այլ ակտիվներ	815,423	419,003

2022 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար այլ ֆինանսական ակտիվների գծով ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

	Փուլ 1	Ընդամենը
ԱՎԿ պահուստ 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	10,697	10,697
ԱՎԿ փոփոխություններ	(2,166)	(2,166)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,531	8,531

2021 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար այլ ֆինանսական ակտիվների գծով ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

	Փուլ 1	Ընդամենը
ԱՎԿ պահուստ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	2,768	2,768
ԱՎԿ փոփոխություններ	7,933	7,933
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,701	10,701

(հազար ՀՀ դրամ)

15. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները ներառում են՝

	<u>2022</u>	<u>2021</u>
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
Մանրածախ	176,428	-
Կորպորատիվ	87,806	-
Ժամկետային ավանդներ		
Մանրածախ	222,789	-
Կորպորատիվ	95,902	-
Ընդամենը	<u>582,925</u>	<u>-</u>

Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները ներառում են հաշիվներ և ավանդներ հետևյալ հաճախորդների գծով՝

	<u>2022</u>	<u>2021</u>
Անհատներ	344,249	-
Ֆինանսական հաստատություններ	95,902	-
Այլ կազմակերպություններ	83,799	-
Աշխատակիցներ	54,968	-
Մասնավոր ընկերություններ	4,007	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	<u>582,925</u>	<u>-</u>

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 464,729 հազար ՀՀ դրամի (79.7%) ընթացիկ հաշիվները և ավանդները ներգրավված են Բանկի ամենամեծ տասը հաճախորդներից (2021թ.՝ զրո):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի հաճախորդներ, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10% (2021թ.՝ զրո):

ՀՀ օրենսդրության համաձայն՝ Բանկը պարտավոր է հետ վճարել ավանդները ավանդատուի պահանջով: Այն դեպքում, երբ ժամկետային ավանդը ավանդատուի պահանջով հետ է վերադարձվում միևնույն ժամկետի ավարտը, դրա մասով տոկոսը վճարվում է ցպահանջ ավանդների տոկոսադրույքի հիման վրա, եթե պայմանագրում այլ տոկոսադրույք նախատեսված չէ:

16. Պարտավորություններ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պարտավորությունները ներառում են՝

	<u>2022</u>	<u>2021</u>
Վարկեր բանկերից	7,765,422	7,301,491
Ընդամենը	<u>7,765,422</u>	<u>7,301,491</u>

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի ՀՀ 6 վեց առևտրային բանկերից վարկեր (2021թ.՝ 3 բանկ):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերի նկատմամբ պարտավորությունները ներառում են ՀՀ դրամով արտահայտված վարկեր 762,009 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով (2021թ.՝ 1,333,184 հազար ՀՀ դրամ) և տարեկան 12.5% տոկոսադրույքով (2021թ.՝ 12.5%) և ԱՄՆ դոլարով արտահայտված վարկեր 7,003,413 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով (2021թ.՝ 5,968,307 հազար ՀՀ դրամ) և 6.5-8.0% տարեկան տոկոսադրույքով (2021թ.՝ 6.6-8.0%):

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված վարկերի մարման ժամկետները 2023-2024թթ. են:

17. Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերը ներառում են՝

	<u>2022</u>	<u>2021</u>
ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր՝ ԱՄՆ դոլարով	938,276	-
ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր՝ ՀՀ դրամով	513,263	413,487
Թողարկված պարտքային արժեթղթեր	<u>1,451,539</u>	<u>413,487</u>

2022 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում Բանկը թողարկել է ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով պարտատոմսեր՝ համապատասխանաբար, 500,000 հազար ՀՀ դրամ և 1,501 հազար ԱՄՆ դոլար անվանական արժեքներով:

(հազար ՀՀ դրամ)

17. Թողարկված պարտքային արժեթղթեր (շարունակություն)

ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերն ունեն 11.5% տարեկան տոկոսադրույք, իսկ ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերը՝ 6.25 և 6.5% տարեկան տոկոսադրույք: Այս պարտատոմսերի մարման ժամկետներն են՝ 2023-2024թթ.:

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը ցուցակված են ՀՀ ֆոնդային բորսայում:

18. Այլ փոխառու միջոցներ

Այլ փոխառու միջոցները ներառում են՝

	2022	2021
Վարկեր վերաֆինանսավորող վարկային կազմակերպություններից	2,660,114	1,467,292
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	535,696	187,340
Փոխառություններ առևտրային կազմակերպություններից	128,034	160,693
Փոխառություններ բաժնետերերից և այլ կապակցված կողմերից	-	25,797,989
Փոխառություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններից	9,346	10,680
Այլ փոխառու միջոցներ	3,333,190	27,623,994

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այլ փոխառու միջոցներ վարկատուներից, որոնց մնացորդ գերազանցում է սեփական կապիտալի 10%-ը: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի այլ փոխառու միջոցներ երեք վարկատուներից, որոնց մնացորդ գերազանցել է սեփական կապիտալի 10%-ը: Այդ մնացորդների համախառն արժեքը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 25,797,989 հազար ՀՀ դրամ:

Այլ փոխառու միջոցների շրջանակներում չկան պարտքային պարտադիր պայմաններ, որոնց Բանկը պարտավոր է բավարարել:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերը՝ 3,290,742 հազար ՀՀ դրամ համախառն արժեքով (2021թ.՝ 1,844,684 հազար ՀՀ դրամ), հանդիսանում են որպես գրավ վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունից ներգրավված ապահովված փոխառությունների դիմաց, որոնց հաշվեկշռային արժեքը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 3,195,810 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 1,654,632 հազար ՀՀ դրամ) (տես Ծանոթագրություն 9):

19. Վարձակալության գծով պարտավորություններ

Ստորև ներկայացվում է վարձակալության գծով պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և շարժը ժամանակաշրջանի ընթացքում

	2022	2021
Հունվարի 1-ի դրությամբ	1,344,542	1,031,337
Ավելացումներ	636,295	438,489
Տոկոսի հաշվեգրում	156,362	111,186
Վճարումներ	(350,147)	(236,470)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,787,052	1,344,542

2022 թվականի ընթացքում Բանկի՝ վարձակալությունների գծով դրամական միջոցների ընդհամենը արտահոսքը կազմել է 381,471 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 259,451 հազար ՀՀ դրամ):

2022 թվականին Բանկի օգտագործման իրավունքի ձևով ակտիվների՝ ընդամենը ոչ դրամական միջոցներով ավելացումները կազմել են 636,295 հազար ՀՀ դրամ և վարձակալության գծով պարտավորությունների ավելացումը՝ 636,295 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 438,489 հազար ՀՀ դրամ յուրաքանչյուր հոդվածի համար):

20. Այլ պարտավորություններ

	2022	2021
Կրեդիտորական պարտքեր	316,021	264,044
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցների նկատմամբ	498,440	210,054
Պահուստ երաշխիքների գծով	30,184	-
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	844,645	474,098
Շահութահարկից բացի այլ հարկային պարտավորություններ	106,338	72,289
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	106,338	72,289
Ընդամենը այլ պարտավորություններ	950,983	546,387

(հազար ՀՀ դրամ)

21. Սեփական կապիտալ

Թողարկված կապիտալ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետիրական կապիտալը կազմում է 30,100,000 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 7,000,000 հազար ՀՀ դրամ): Հայտարարված, թողարկված և շրջանառվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 1,400,000 սովորական բաժնետոմսից (2021թ.՝ 1,400,000), որոնց յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 21,500 դրամ (2021թ.՝ 5,000 դրամ):

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

2022թ. հուլիսի 4-ին Բանկի բաժնետերերը հաստատել են բաժնետիրական կապիտալի ավելացումը 23,100,000 հազար ՀՀ դրամով՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված կապիտալի նվազագույն չափի պահանջներին համապատասխանելու նպատակով: Բաժնետիրական կապիտալի համալրումն իրականացվել է 1,900,000 հազար ՀՀ դրամի շահաբաժինների կապիտալացման և բաժնետերերից 21,200,000 հազար ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով այլ փոխառու միջոցների՝ սեփական կապիտալի փոխարկման գործարքի միջոցով: Բաժնետիրական կապիտալի ավելացումն իրականացվել է առկա բաժնետոմսերի անվանական արժեքի՝ 5,000 դրամից 21,500 դրամի բարձրացմամբ:

Պահուստների բնույթը և նպատակը

Ներդրումային արժեթղթերի գծով վերազնահատման պահուստ

Ներդրումային արժեթղթերի գծով վերազնահատման պահուստը բաղկացած է իրական արժեքի կուտակային գուտ փոփոխությունից՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ Բանկի չբաշխված շահույթի առավելագույն չափով:

2022թ. ապրիլի 5-ին կայացած բաժնետերերի ժողովին Բանկը հայտարարել է շահաբաժիններ սովորական բաժնետոմսերի գծով՝ 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 2,000,000 հազար ՀՀ դրամ ընդհանուր արժեքով (1,429 ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի համար): 100,000 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով շահաբաժինները վճարվել են կանխիկ՝ 2022 թվականի ընթացքում, իսկ 1,900,000 հազար ՀՀ դրամի չափով՝ կապիտալացվել՝ Բանկի բաժնետիրական կապիտալի ավելացման նպատակով:

22. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

Գործառնական միջավայր

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ղատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է տնտեսական գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

Հարկում

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և ենթակա տարընթերցումների տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են որոնք իրավասու են կիրառել տույժեր, տուգանքներ և տուկոսային վճարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

(հազար ՀՀ դրամ)

22. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ (շարունակություն)

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Սակայն, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել, և ֆինանսական վիճակի վրա ազդեցությունը կարող է եսկան լինել, եթե տվյալ մարմինները կարողանան պարտադրել իրենց մեկնաբանությունները:

Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

Ղեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պայմանական և պայմանագրային պարտավորությունները հետևյալն են՝

	<u>2022</u>	<u>2021</u>
Վարկերին առնչվող պարտավորություններ		
Ֆինանսական երաշխիքներ	754,600	1,142,735
Պայմանական պարտավորություններ	<u>754,600</u>	<u>1,142,735</u>

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Ֆինանսական երաշխիքներ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ պահուստ 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Նոր երաշխիքներ	30,184	-	-	30,184
Ժամկետը սպառված երաշխիքներ	-	-	-	-
Տեղափոխում Փուլ 1	-	-	-	-
Տեղափոխում Փուլ 2	-	-	-	-
Տեղափոխում Փուլ 3	-	-	-	-
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա	-	-	-	-
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	-	-	-	-
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	-	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>30,184</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>30,184</u>

23. Չուտ տոկոսային եկամուտ

Չուտ տոկոսային եկամուտը ներառում է՝

	<u>2022</u>	<u>2021</u>
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Հաճախորդներին տրված վարկեր	12,991,619	12,802,909
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,633	321
	<u>12,995,252</u>	<u>12,803,230</u>
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Ներդրումային արժեթղթեր	463,467	466,797
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	<u>13,458,719</u>	<u>13,270,027</u>
Տոկոսային ծախս		
Այլ փոխառու միջոցներ	1,326,165	2,204,699
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	840,885	287,599
Վարձակալության գծով պարտավորություններ	156,362	111,186
Թողարկված պարտքային արժեթղթեր	68,443	27,351
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	26,780	298,549
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	1,814	-
Այլ	1,346	8,695
Տոկոսային ծախս	<u>2,421,795</u>	<u>2,938,079</u>
Չուտ տոկոսային եկամուտ	<u>11,036,924</u>	<u>10,331,948</u>

(հազար ՀՀ դրամ)

24. Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ

Միջնորդավճարների գծով զուտ եկամուտը ներառում է՝

	2022	2021
Երաշխիքներ	19,929	7,213
Ապահովագրություն	2,815	1,059
Այլ	3,411	2,503
Միջնորդավճարների գծով եկամուտ	26,155	10,775
Հաշվարկային գործառնություններ	115,939	-
Դրամային գործառնություններ	10,838	12,170
Արժեթղթերի գծով գործառնություններ	8,041	-
Հաշիվների սպասարկման վճար	7,834	967
Վճարային քարտերի սպասարկման վճար	6,027	-
Դրամական փոխանցումներ	5,149	777
Այլ	2,813	3,199
Միջնորդավճարների գծով ծախս	156,641	17,113
Միջնորդավճարների գծով զուտ ծախս	(130,486)	(6,338)

25. Անձնակազմի և այլ գործառնական ծախսեր

Անձնակազմի և այլ գործառնական ծախսերը ներառում են՝

	2022	2021
Աշխատավարձ և պարգևավճարներ	3,191,875	2,332,983
Պարտադիր կենսաթոշակային վճարումներ	155,842	95,699
Անձնակազմի ապահովագրություն	46,156	17,082
Անձնակազմի գծով ծախսեր	3,393,873	2,445,764

Այլ գործառնական ծախսեր

	2022	2021
Վերանորոգում և սպասարկում	129,061	48,104
Գրասենյակային ծախսեր	121,242	44,020
Մարքեթինգ և գովազդ	108,323	55,919
Անվտանգություն	100,730	77,734
Բարեգործություն	94,013	40,000
Մասնագիտական ծառայություններ	84,856	41,868
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր, բացառությամբ շահութահարկի	42,821	34,387
Անդամավճարներ	38,141	3,088
Հաղորդակցություն	35,657	29,285
Ժամանց	32,711	10,754
Վարկերի տրամադրման և հավաքագրման գծով ծախսեր	31,577	91,265
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	31,324	22,981
Ներկայացուցչական ծախսեր	30,978	-
Ֆինանսական հաշտարարի գծով ծախսեր	30,819	-
Գործուղման և համանման ծախսեր	21,052	8,437
Ավանդների ապահովագրման ծախսեր	16,000	-
Անձնակազմի վերապատրաստում	7,344	915
Այլ	54,257	5,523
Այլ գործառնական ծախսեր	1,010,906	514,280

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար Բանկը ճանաչել է 24,058 հազար դրամի չափով վարձավճարի գծով ծախս կարճաժամկետ վարձակալությունից և 7,266 հազար դրամի չափով՝ փոքրարժեք ակտիվների վարձակալությունից (2021թ.՝ 18,050 հազար դրամի չափով վարձավճարի գծով ծախս կարճաժամկետ վարձակալությունից և 4,931 հազար դրամի չափով՝ փոքրարժեք ակտիվների վարձակալությունից):

(հազար ՀՀ դրամ)

26. Ռիսկերի կառավարում

Ներածություն

Բանկի գործունեությանը բնորոշ են բազմազան ֆինանսական ռիսկեր, որոնց կառավարման համար Բանկը մշակում և ներդնում է ռիսկերի կառավարման մեխանիզմներ և ներքին վերահսկողության համակարգ: Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերն են վարկային, իրացվելիության և շուկայական ռիսկերը: Շուկայական ռիսկն իր հերթին ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և գնային ռիսկերը: Բանկի գործունեությանը բնորոշ է նաև գործառնական ռիսկը: Ռիսկերի կառավարումը ներառում է ռիսկերի հայտնաբերման, չափման և մոնիտորինգի շարունակական գործընթաց ռիսկերի սահմանաչափերի և ներքին վերահսկողության համակարգի շրջանակներում: Ռիսկերի կառավարման գործընթացը վճռորոշ նշանակություն ունի Բանկի շահութաբերության մշտական մակարդակի պահպանման համար, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների շրջանակներում առաջացող ռիսկերի համար:

Ռիսկերի կառավարման գործառնությունը ներառում է նաև բիզնես ռիսկերը, ինչպիսիք են շրջակա միջավայրի, տեխնոլոգիաների և տնտեսական ոլորտների փոփոխությունները՝ դրանց հետ կապված տարբեր ստորաբաժանումների ներգրավմամբ:

Ռիսկերի կառավարման համակարգ

Ռիսկերի բացահայտման և վերահսկման վերջնական պատասխանատվությունը կրում է Բանկի խորհուրդը, սակայն ռիսկերի կառավարման և մոնիտորինգի համար պատասխանատու են առանձին ստորաբաժանումներ:

Բանկի խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության և ռիսկերի կառավարման քաղաքականության համար:

Բանկի ղեկավարություն/գլխավոր գործադիր տնօրեն

Բանկի ղեկավարությունը/գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկողության համար:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման վարչությունը պատասխանատու է Խորհրդի կողմից հաստատված ռազմավարության և ռիսկերի կառավարման քաղաքականության ներքո ռիսկերի կառավարման ընթացակարգերի մշակման և իրականացման համար, այդ ընթացակարգերի համաձայն ռիսկերի հայտնաբերման, գնահատման և շարունակական մոնիտորինգի համար, ներառյալ սահմանված կարգով համապատասխանության վերահսկումը ռիսկերի սահմանաչափերի նկատմամբ ինչպես նաև նոր գործընթացների և պրոդուկտների ռիսկերի գնահատման համար:

Հետևյալ բաժինը ևս ապահովում է ռիսկերի հաշվետվությունների ներկայացումը իրավասու կառավարման մարմիններին, Բանկի խորհրդին և ղեկավարությանը:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողով

Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովը պատասխանատու է Բանկի ակտիվների կառավարման և պարտավորությունների ու ընդհանուր ֆինանսական կառուցվածքի կառավարման համար: Այն նաև պատասխանատու է ֆինանսավորման և իրացվելիության ռիսկերի համար:

(հազար ՀՀ դրամ)

26. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ներածություն (շարունակություն)

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը և արդյունավետությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի խորհրդին կից գործող ներքին աուդիտի հանձնաժողովին:

Ռիսկերի չափման և հաշվետվությունների համակարգ

Տարատեսակ ռիսկերի վերլուծության և գնահատման ժամանակ Բանկը կիրառում է վիճակագրական մոդելներ, զգայունության վերլուծություններ, վերլուծում ռիսկի տարբեր ցուցանիշների դինամիկան և անհրաժեշտության դեպքում ձեռնարկում համապատասխան միջոցներ: Մոդելները հետագայում ստուգվում են վավերականության նպատակներով: Բանկը նաև կիրառում է վատագույն դեպքերի սցենարները, որոնք տեղի կունենան, երբ ծայրահեղ իրադարձությունները, որոնք քիչ հավանական են, իրականում տեղի կունենան:

Ռիսկերի մոնիտորինգը և վերահսկումը հիմնականում իրականացվում է Բանկի կողմից հաստատված սահմանաչափերի հիման վրա: Այս սահմանները արտացոլում են Բանկի ռազմավարությունը և շուկայական միջավայրը, ինչպես նաև ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել՝ տնտեսության ընտրված հատվածների վրա լրացուցիչ շեշտադրումով: Բացի այդ, Բանկը դիտարկում է գնահատում և ռիսկերի կլանման կարողությունները և ռիսկերի ընդհանուր մակարդակը բոլոր տեսակի ռիսկերի և գործունեության ուղղությունների համար:

Վարկային ռիսկի մասին տեղեկատվությունը, որը վերաբերում է բիզնեսի բոլոր ուղղություններին, վերլուծվում և մշակվում է ռիսկերը վաղաժամ վերլուծելու, վերահսկելու և հայտնաբերելու համար: Այս տեղեկատվությունը ներկայացվում է Բանկի ղեկավարությանը: Ներկայացված հաշվետվությունը ներառում է ընդհանուր վարկային ռիսկի ենթարկվածության վերլուծություն, վարկերի համակենտրոնացման սահմանաչափերի մոնիտորինգի արդյունքներ, GAP վերլուծություն, VaR գնահատում, իրացվելիության գործակիցներ, սթրես-թեստ վերլուծություն, ընդհանուր ռիսկի «ախորժակի» վերահսկում և ռիսկի պորտֆելի փոփոխություններ: Եռամսյակային կտրվածքով խորհրդին առընթեր Ռիսկերի կառավարման և համապատասխանության կոմիտեին է ներկայացվում հաճախորդների ռիսկերի, տնտեսության և բիզնես ուղղությունների վերաբերյալ մանրամասն հաշվետվություն:

Ռիսկերի մեղմացում

Որպես ռիսկերի մեղմացման ուղղված միջոցառումների մաս, Բանկն օգտագործում է ածանցյալ և այլ գործիքներ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունից առաջացող ռիսկերի կառավարման նպատակով:

Բանկը լայնորեն կիրառում է գրավը վարկային ռիսկի նվազեցման նպատակով:

Ռիսկի կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն աշխարհագրական շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, որի հետևանքով տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխությունները պայմանագրային պարտավորությունների կատարման նրանց ունակության վրա նույն կերպ են ազդում: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ և սահմանաչափեր՝ ուղղված պորտֆելների առավելագույն դիվերսիֆիկացմանը: Այդ չափանիշները ենթակա են շարունակական մոնիթորինգի և ներքին հաշվետվողականության:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկն այն ռիսկն է, որի պատճառով Բանկը կարող է կրել վնասներ՝ հաճախորդների կամ գործընկերների կողմից պարտավորությունների չկատարման դեպքում: Բանկը իրականացնում է վարկային ռիսկի վերահսկում և կառավարում սահմանելով ռիսկի այն սահմանաչափը, որը պատրաստ է ընդունել անհատական գործընկերների և աշխարհագրական ու տնտեսական համակենտրոնացումների համար, ինչպես նաև դիտարկելով զգայունությունը նման սահմանաչափերի նկատմամբ:

(հազար ՀՀ դրամ)

26. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Բանկը հաստատել է վարկային որակի ստուգման գործընթաց՝ ապահովելու գործընկերների վարկունակության հնարավոր փոփոխությունների վաղ բացահայտումը, ներառյալ գրավների պարբերաբար վերանայումը:

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների համար հաշվեկշռային արժեքը արտացոլում է ընթացիկ վարկային ռիսկը, բայց ոչ առավելագույն ռիսկը, որը կարող է առաջանալ ապագայում արժեքի փոփոխությունից:

Արժեզրկման գնահատում

Բանկը ԱՎԿ-ն հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու ակնկալվող դրամական միջոցների պակասորդները, զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական միջոցների պակասորդը բանկին պայմանագրով վճարման ենթակա դրամական միջոցների հոսքերի և բանկի ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունն է: ԱՎԿ հաշվարկի մեխանիզմները ներկայացված են ստորև, և դրանց հիմնական տարրերը հետևյալն են՝

- PD Դեֆոլտի հավանականությունը որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:
- EAD Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դա ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, բաց թողնված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:
- LGD Դեֆոլտի դեպքում կորստի չափը դա դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս:

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային վնաս կամ ԱՎԱՎԿ), եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային վնասի վրա (12ամսվա ԱՎԿ): 12ամսվա ԱՎԿ-ն ԱՎԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱՎԱՎԿ-ն, այնպես էլ 12ամսվա ԱՎԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Բանկը քաղաքականություն է սահմանել՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին իրականացնել գնահատում՝ արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, հաշվի առնելով ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտ տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Բանկը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

- Փուլ 1: Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
- Փուլ 2: Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Բանկը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
- Փուլ 3: Վարկերը համարվում են արժեզրկված:
- POCI: Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

(հազար ՀՀ դրամ)

26. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Դեֆոլտի սահմանումը

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով առկա է դեֆոլտ և, հետևաբար այն դասում է որպես Փուլ 3-ին պատկանող ֆինանսական գործիք (այսինքն՝ վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՎԿ հաշվարկի նպատակով, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուն 91 օրով ուշացնում է պայմանագրային վճարումների կատարումը:

Ֆինանսական գործիքը նաև համարվում է արժեզրկված՝ հիմք ընդունելով սահմանված այլ քանակական և որակական գործոններ, ինչպիսիք են, վերանայման կարգավիճակը և ֆինանսական մոնիտորիգի արդյունքները:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել վճարման քիչ հավանականությունը: Նման դեպքերում Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ դեֆոլտի ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող վարկային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է:

Ըստ Բանկի քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «վերականգնված», և հետևաբար վերադասակարգված Փուլ 3-ից, եթե առնվազն վեց անընդմեջ ամիսների ընթացքում դեֆոլտի սահմանված չափանիշներից ոչ մեկը առկա չի եղել: Ակտիվի՝ վերականգնվելուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է վերականգնման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է վարկային ռիսկի զգալի աճ:

Դեֆոլտի հավանականության գնահատման գործընթացը

Հաճախորդներին տրված վարկեր

Խմբավորում

Հաճախորդներին տրված վարկերի, որոնք պատկանում են Փուլ 1-ին և Փուլ 2-ին, ինչպես նաև անհատապես ոչ Եական Փուլ 3-ին պատկանող վարկերի համար, Բանկը հաշվարկում է ԱՎԿ պորտֆելի մակարդակով: Բանկն առանձնացնում է պորտֆելների հետևյալ տեսակները.

- ▶ Ոսկու գրավով ապահովված վարկեր
- ▶ Հիփոթեքային վարկեր,
- ▶ Սպառողական վարկեր,
- ▶ Կորպորատիվ վարկեր.

Հաճախորդներին տրված վարկերի գծով դեֆոլտի հավանականությունը հիմնվում է անցյալ ժամանակաշրջանների տեղեկությունների վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցներով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ առկա տեղեկությունները: Հավանականությունները հաշվարկվում են որպես 12 ամիս ժամանակաշրջանի ընթացքում դեֆոլտ կատեգորիաների միջև փոխանցվող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերի նկատմամբ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Դեֆոլտի հավանականությունը հաշվարկելիս Բանկը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ունեն Եական ազդեցություն դեֆոլտի հավանականության վրա՝ հաշվարկված ըստ ժամանակային շարքերի ռեգրեսիայի վերլուծության:

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը՝ մեծացնելու իր վարկի գումարը դեֆոլտի մոտենալու դեպքում, այնպես էլ հնարավոր վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար Բանկը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր դեֆոլտի հավանականությունը 12ամսվա հաշվարկելու նպատակով: Փուլ 2, Փուլ 3 և ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) դասին պատկանող ֆինանսական ակտիվների համար դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

(հազար ՀՀ դրամ)

26. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Դեֆոլտի ժամանակ կորստի չափը

Բանկը դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու նպատակով օգտագործում է դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ պատմական տվյալները բոլոր դեֆոլտի ենթարկված վարկերի կտրվածքով: Դեֆոլտի հավանականության գնահատման համար օգտագործված նախնական խմբավորումը այնուհետև բաժանվում է ըստ գրավի տեսակների խմբերի՝ հաշվարկելու դեֆոլտի ժամանակ կորստի չափը: Դրամական հոսքերի մասին ողջ տեղեկատվությունը հավաքվում է այդ խմբերով՝ դեֆոլտի ամսաթվից հետո: Տվյալ շրջանակներում հաշվի են առնվում հավաքագրման քաղաքականության ցանկացած փոփոխություն: Հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը և զեղչվում դեֆոլտի ամսաթվի դրությամբ՝ միջին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ, յուրաքանչյուր LGD խմբի գծով: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է բոլոր տեսակի դրամական ներհոսքերը ժամկետանց վարկերի գծով (վարկերի մարումից ստացված միջոցներ, երաշխավորից ստացված միջոցներ, գրավի առարկայի վաճառքից ստացված միջոցներ և այլն):

Վարկային ռիսկի զգալի աճ

Բանկը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր: Բանկը որպես հիմնական հայտանիշ է օգտագործում վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Բանկը համարում է, որ վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչման պահից հետո, եթե պայմանագրային վճարումները ուշացվել են ավելի քան 30 օրով:

Վարկային ռիսկի աճը գնահատելիս Բանկի ղեկավարությունը նաև առաջնորդվում է հետևյալ գործոններով՝

- ▶ ՀՀ այլ ֆինանսական հաստատություններում տվյալ վարկառուի ժամկետանց օրերի քանակը,
- ▶ Վարկառուի ֆինանսական վիճակի զգալի վատթարացումը,
- ▶ Վարկային պայմանների վերանայում վարկառուի ֆինանսական վիճակի զգալի վատթարացման արդյունքում,
- ▶ Վարկառուի գործունեության ֆինանսական մոնիտորինգի արդյունքները:

Կանխատեսվող տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

ԱՎԿ մոդելներում Բանկը հիմնվում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

- ▶ ՀՆԱ-ի տարեկան աճ, %,
- ▶ ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք (ժամանակաշրջանի վերջի դրությամբ),
- ▶ ՀՀ ԿԲ-ում զուտ պետական հաշիվների փոփոխություն, միլիարդ դրամ,
- ▶ Գործազրկության մակարդակ, %:

(հազար ՀՀ դրամ)

26. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Կանխատեսվող տեղեկատվությունը Բանկը ստանում է արտաքին աղբյուրներից (Տնտեսական վերլուծական ստորաբաժանում, Համաշխարհային բանկի տվյալների բազա, ինչպես նաև ՀՀ Կառավարության կողմից կատարված կանխատեսումներ): Սույն աղյուսակը ներկայացնում է հիմնական կանխատեսվող տնտեսական փոփոխականների/ենթադրությունների արժեքները ԱՎԿ հաշվարկների համար յուրաքանչյուր տնտեսական սցենարի համար:

Հիմնական գործոնները	ԱՎԿ սցենար	Որոշված հավանականությունը, %	2023թ.	2024թ.	2025թ.
ՀՆԱ տարեկան աճ, %	Լավատեսական	15%	7.50%	6.90%	7.10%
	Բազիսային	70%	4.40%	3.80%	4.00%
	Վատատեսական	15%	0.50%	0.10%	0.10%
ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք	Լավատեսական	15%	418	445	460
	Բազիսային	70%	438	465	490
	Վատատեսական	15%	458	485	520
ՀՀ ԿԲ-ում զուտ պետական հաշիվների փոփոխություն, միլիարդ դրամ	Լավատեսական	15%	(448)	(429)	(447)
	Բազիսային	70%	(373)	(354)	(372)
	Վատատեսական	15%	(298)	(279)	(297)
Գործազրկության մակարդակ, %	Լավատեսական	15%	14.0%	13.9%	13.8%
	Բազիսային	70%	16.0%	17.9%	19.8%
	Վատատեսական	15%	19.0%	23.9%	28.8%

Ֆինանսական ակտիվների դասերի վարկային որակական վերլուծություն

Բանկը չունի ներքին վարկանիշային համակարգ հաճախորդներին տրված վարկերի վարկային որակի գնահատման նպատակով և կառավարում է վարկային ռիսկը ըստ ժամկետանց օրերի:

(հազար ՀՀ դրամ)

26. Ռիսկերի կառավարում (շարունակություն)**Վարկային ռիսկ (շարունակություն)**

Ստորև աղյուսակը տրամադրում է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված համախառն վարկերի վարկային որակի վերաբերյալ 2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	2022թ. դեկտեմբերի 31			Ընդամենը վարկեր
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
Ոսկու գրավով ապահովված վարկեր				
– ոչ ժամկետանց	24,562,625	9,085,242	817,639	34,465,506
– մինչև 30 օր ժամկետանց	32,069	3,753,155	298,088	4,083,312
– 30-89 օր ժամկետանց	–	5,015,624	667,123	5,682,747
– 90-179 օր ժամկետանց	–	–	3,169,621	3,169,621
– 180-270 օր ժամկետանց	–	–	767,681	767,681
– ավելի քան 270 օր ժամկետանց	–	–	439,479	439,479
Ընդամենը համախառն ոսկու գրավով ապահովված վարկեր	24,594,694	17,854,021	6,159,631	48,608,346
Վարկային կորստի պահուստ	(189,177)	(764,427)	(1,510,010)	(2,463,614)
Ընդամենը զուտ ոսկու գրավով ապահովված վարկեր	24,405,517	17,089,594	4,649,621	46,144,732
Հիփոթեքային և անշարժ գույքի գրավով ապահովված այլ վարկեր				
– ոչ ժամկետանց	6,742,699	430,628	136,532	7,309,859
– մինչև 30 օր ժամկետանց	–	32,219	58,377	90,596
– 30-89 օր ժամկետանց	–	–	–	–
– 90-179 օր ժամկետանց	–	–	19,761	19,761
– 180-270 օր ժամկետանց	–	–	6,743	6,743
Ընդամենը համախառն հիփոթեքային և անշարժ գույքի գրավով ապահովված այլ վարկեր	6,742,699	462,847	221,413	7,426,959
Վարկային կորստի պահուստ	(13,149)	(33,321)	(94,600)	(141,070)
Ընդամենը զուտ հիփոթեքային և անշարժ գույքի գրավով ապահովված այլ վարկեր	6,729,550	429,526	126,813	7,285,889
Այլ կորպորատիվ վարկեր				
– ոչ ժամկետանց	1,393,449	15,819	4,482	1,413,750
– մինչև 30 օր ժամկետանց	–	12,444	–	12,444
– 30-89 օր ժամկետանց	–	85,825	–	85,825
– 90-179 օր ժամկետանց	–	–	–	–
– 180-270 օր ժամկետանց	–	–	–	–
Ընդամենը համախառն առևտրային վարկեր	1,393,449	114,088	4,482	1,512,019
Վարկային կորստի պահուստ	(21,739)	(36,828)	(2,088)	(60,655)
Ընդամենը զուտ առևտրային վարկեր	1,371,710	77,260	2,394	1,451,364
Ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր				
– ոչ ժամկետանց	1,505,368	42,895	10,106	1,558,369
– մինչև 30 օր ժամկետանց	290	5,718	3,173	9,181
– 30-89 օր ժամկետանց	–	7,087	10,195	17,282
– 90-179 օր ժամկետանց	–	–	2,484	2,484
– 180-270 օր ժամկետանց	–	–	6,302	6,302
Ընդամենը համախառն ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր	1,505,658	55,700	32,260	1,593,618
Վարկային կորստի պահուստ	(25,730)	(16,204)	(22,679)	(64,613)
Ընդամենը զուտ ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր	1,479,928	39,496	9,581	1,529,005
Ընդամենը հաճախորդներին տրված համախառն վարկեր	34,236,500	18,486,656	6,417,786	59,140,942
Վարկային կորստի պահուստ	(249,795)	(850,780)	(1,629,377)	(2,729,952)
Ընդամենը հաճախորդներին տրված զուտ վարկեր	33,986,705	17,635,876	4,788,409	56,410,990

(հազար ՀՀ դրամ)

26. Ռիսկերի կառավարում (շարունակություն)**Վարկային ռիսկ (շարունակություն)**

	2021թ. դեկտեմբերի 31			Ընդամենը վարկեր
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
Ոսկու գրավով ապահովված վարկեր				
– ոչ ժամկետանց	21,454,449	10,285,013	1,175,900	32,915,362
– մինչև 30 օր ժամկետանց	42,271	2,114,662	2,803,046	4,959,979
– 30-89 օր ժամկետանց	–	1,997,714	4,926,019	6,923,733
– 90-179 օր ժամկետանց	–	–	2,481,196	2,481,196
– 180-270 օր ժամկետանց	–	–	347,152	347,152
– ավելի քան 270 օր ժամկետանց	–	–	592,260	592,260
Ընդամենը համախառն ոսկու գրավով ապահովված վարկեր	21,496,720	14,397,389	12,325,573	48,219,682
Վարկային կորստի պահուստ	(277,385)	(988,681)	(2,294,014)	(3,560,080)
Ընդամենը զուտ ոսկու գրավով ապահովված վարկեր	21,219,335	13,408,708	10,031,559	44,659,602
Հիփոթեքային և անշարժ գույքի գրավով ապահովված այլ վարկեր				
– ոչ ժամկետանց	4,737,942	488,408	84,615	5,310,965
– մինչև 30 օր ժամկետանց	–	57,959	8,244	66,203
– 30-89 օր ժամկետանց	–	29,514	10,300	39,814
– 90-179 օր ժամկետանց	–	–	26,107	26,107
– 180-270 օր ժամկետանց	–	–	16,990	16,990
Ընդամենը համախառն հիփոթեքային և անշարժ գույքի գրավով ապահովված այլ վարկեր	4,737,942	575,881	146,256	5,460,079
Վարկային կորստի պահուստ	(19,446)	(64,688)	(36,992)	(121,126)
Ընդամենը զուտ հիփոթեքային և անշարժ գույքի գրավով ապահովված այլ վարկեր	4,718,496	511,193	109,264	5,338,953
Այլ կորպորատիվ վարկեր				
– ոչ ժամկետանց	896,790	52,119	–	948,909
– մինչև 30 օր ժամկետանց	–	–	490	490
– 30-89 օր ժամկետանց	–	78,705	–	78,705
– 90-179 օր ժամկետանց	–	–	46,540	46,540
– 180-270 օր ժամկետանց	–	–	–	–
Ընդամենը համախառն առևտրային վարկեր	896,790	130,824	47,030	1,074,644
Վարկային կորստի պահուստ	(12,081)	(7,045)	(29,445)	(48,571)
Ընդամենը զուտ առևտրային վարկեր	884,709	123,779	17,585	1,026,073
Ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր				
– ոչ ժամկետանց	1,281,955	48,708	7,746	1,338,409
– մինչև 30 օր ժամկետանց	385	6,588	687	7,660
– 30-89 օր ժամկետանց	–	12,538	3,361	15,899
– 90-179 օր ժամկետանց	–	–	6,117	6,117
– 180-270 օր ժամկետանց	–	–	9,096	9,096
Ընդամենը համախառն ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր	1,282,340	67,834	27,007	1,377,181
Վարկային կորստի պահուստ	(53,022)	(17,115)	(12,742)	(82,879)
Ընդամենը զուտ ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր	1,229,318	50,719	14,265	1,294,302
Ընդամենը հաճախորդներին տրված համախառն վարկեր	28,413,792	15,171,928	12,545,866	56,131,586
Վարկային կորստի պահուստ	(361,934)	(1,077,529)	(2,373,193)	(3,812,656)
Ընդամենը հաճախորդներին տրված զուտ վարկեր	28,051,858	14,094,399	10,172,673	52,318,930

(հազար ՀՀ դրամ)

26. Ռիսկերի կառավարում (շարունակություն)**Վարկային ռիսկ (շարունակություն)***Ֆինանսական ակտիվների դասերի վարկային որակական վերլուծություն*

2022թ. դեկտեմբերի 31

	Ծան.		Բարձր դաս	Ստանդարտ դաս	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	5	Փուլ 1	–	914,941	914,941
Պահանջներ բանկերի նկատմամբ	6	Փուլ 1	–	110,377	110,377
Ներդրումային արժեթղթեր	8	Փուլ 1	–	4,551,296	4,551,296
Ընդամենը			–	5,576,614	5,576,614

2021թ. դեկտեմբերի 31

	Ծան.		Բարձր դաս	Ստանդարտ դաս	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	6	Փուլ 1	–	914,243	914,243
Ներդրումային արժեթղթեր	8	Փուլ 1	–	5,116,897	5,116,897
Ընդամենը			–	6,031,140	6,031,140

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Բանկի վարկանիշային համակարգի և գործընկերների արտաքին վարկանիշների վերլուծությունը՝ ըստ դրամական միջոցների և դրանց համարժեքների, բանկերի նկատմամբ պահանջների և ներդրումային արժեթղթերի 2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2022թ.

Միջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ

	Նկարագրություն	PD
Aaa-ից A3	Բարձր դաս	0-0.09%
Baa1-ից B3	Ստանդարտ դաս	0.1-4.3%
Caa1-ից Ca	Ստանդարտից ցածր դաս	16.3%
C	Արժեզրկված	100%

2021թ.

Միջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ

	Նկարագրություն	PD
Aaa-ից A3	Բարձր դաս	0-0.06%
Baa1-ից B3	Ստանդարտ դաս	0.06-3.3%
Caa1-ից Ca	Ստանդարտից ցածր դաս	9.7%
C	Արժեզրկված	100%

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Բանկը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ: Այդ ռիսկի զգալի նպատակով դեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրներ՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի: Ղեկավարությունն իրականացնում է նաև ակտիվների կառավարում հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

(հազար ՀՀ դրամ)

26. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում (շարունակություն)

Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան: Ղեկտեմբերի 31-ի դրությամբ այդ հարաբերակցությունները կազմել են՝

	<i>Սահմանա- յին արժեք</i>	<i>2022թ. դեկտեմբերի 31-ի դրու- թյամբ, %</i>	<i>2021թ. դեկտեմբերի 31-ի դրու- թյամբ, %</i>
Ն2.1 – Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ ընդհանուր ակտիվներ)	նվ. 15%	15.18%	–
Ն2.2 – Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ ցպահանջ պարտավորություններ)	նվ. 60%	1418.14%	–

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չզեղչված պարտավորությունների հիման վրա: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Այնուամենայնիվ, Բանկը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Բանկը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Բանկի կողմից՝ անցյալ ժամանակաշրջանների ներդրումների պահանջների տեղեկատվության հիման վրա:

<i>2022թ. դեկտեմբերի 31</i>	<i>Առևտրային ածանցյալ գործիքներ</i>	<i>Մինչև 3 ամիս</i>	<i>3-12 ամիս</i>	<i>1-5 տարի</i>	<i>Ավելի քան 5 տարի</i>	<i>Ընդամենը</i>
Ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	2,549	–	–	–	–	2,549
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	–	1,475,591	3,446,707	3,368,717	–	8,291,015
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	–	264,474	339,375	806	–	604,655
Թողարկված պարտքային արժեթղթեր	–	34,808	409,970	1,162,657	–	1,607,435
Այլ փոխառու միջոցներ	–	69,109	338,101	1,854,614	2,392,231	4,654,055
Վարձակալության գծով պարտավորություններ	–	59,554	325,986	1,312,358	876,665	2,574,563
Այլ ֆինանսական պարտավորություններ	–	844,645	–	–	–	844,645
Ֆինանսական երաշխավորություն	–	815,800	–	–	–	815,800
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	2,549	3,563,981	4,860,139	7,699,152	3,268,896	19,394,717

(հազար ՀՀ դրամ)

26. Ռիսկերի կառավարում (շարունակություն)**Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում (շարունակություն)**

2021թ. դեկտեմբերի 31	Առևտրային ածանցյալ գործիքներ			1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
	Մինչև 3 ամիս	3-12 ամիս				
Ֆինանսական պարտավորություն- ներ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ Թողարկված պարտքային արժեթղթեր	-	145,177	3,890,950	4,112,860	-	8,148,987
Այլ փոխառու միջոցներ	-	13,208	12,994	427,119	-	453,321
Վարձակալության գծով պարտավորություններ	-	61,882	990,116	24,217,479	12,546,132	37,815,609
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	68,529	206,942	971,973	616,503	1,863,947
Ֆինանսական երաշխավորություն	-	474,098	-	-	-	474,098
Երաշխավորություն	-	1,142,735	-	-	-	1,142,735
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	-	1,905,629	5,101,002	29,729,431	13,162,635	49,898,697

Հաճախորդներից ներգրավված միջոցների մեջ ներառված են ֆիզիկական անձանց կողմից ներդրված ժամկետային ավանդները: ՀՀ օրենսդրության համաձայն ֆիզիկական անձից կարող են ցանկացած պահի ետ պահանջել իրենց ժամկետային ավանդները: Այս ավանդները դասակարգված են վերոնշյալ աղյուսակում իրենց մարման ժամկետների համաձայն:

Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն

Ստորև աղյուսակը ներկայացնում է ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ դրանց ակնկալվող վերակազմումների կամ մարման:

	2022թ.			2021թ.		
	Մեկ տարվա ընթացքում	Ավելի քան մեկ տարի	Ընդամենը	Մեկ տարվա ընթացքում	Ավելի քան մեկ տարի	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,180,144	-	3,180,144	2,412,544	-	2,412,544
Պահանջներ բանկերի նկատմամբ	110,319	-	110,319	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	17,069,826	39,341,164	56,410,990	9,326,546	42,992,384	52,318,930
Ներդրումային արժեթղթեր	-	4,551,296	4,551,296	466,965	4,649,932	5,116,897
Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	2,690,069	2,690,069	-	1,687,181	1,687,181
Ոչ կուրսական ակտիվներ	-	613,470	613,470	-	31,534	31,534
Ընթացիկ շահութահարկի գծով ակտիվներ	-	-	-	101,452	-	101,452
Այլ ակտիվներ	170,212	645,211	815,423	139,257	279,746	419,003
Ընդամենը	20,530,501	47,841,210	68,371,711	12,446,764	49,640,777	62,087,541
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	4,502,769	3,262,653	7,765,422	3,711,291	3,590,200	7,301,491
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	2,549	-	2,549	-	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ Թողարկված պարտքային արժեթղթեր	582,125	800	582,925	-	-	-
Այլ փոխառու միջոցներ	359,829	1,091,710	1,451,539	12,566	400,921	413,487
Վարձակալության գծով պարտավորություններ	210,596	3,122,594	3,333,190	150,965	27,473,029	27,623,994
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ	267,611	1,519,441	1,787,052	193,897	1,150,645	1,344,542
Հետաձգված հարկային պարտավորություններ	1,504,320	-	1,504,320	-	-	-
Այլ պարտավորություններ	-	2,260,052	2,260,052	-	2,678,897	2,678,897
Այլ պարտավորություններ	950,983	-	950,983	546,387	-	546,387
Ընդամենը	8,380,782	11,257,250	19,638,032	4,615,106	35,293,692	39,908,798
Չուս	12,149,719	36,583,960	48,733,679	7,831,658	14,347,085	22,178,743

(հազար ՀՀ դրամ)

26. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Բանկի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների՝ ներառյալ արտարժույթի փոխարժեքի և տոկոսադրույքների, սեփական կապիտալի արժեքի փոփոխության արդյունքում:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը Բանկի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է ժամանակաշրջանի զուտ տոկոսային եկամտի վրա՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հիման վրա, և զուտ առևտրային եկամտի վրա՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող առևտրային գործիքների հիման վրա: Կապիտալի զգայունությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

Արժույթ	Բազիսային կետերի ավելացում 2022թ.	Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2022թ.	Կապիտալի զգայունություն 2022թ.
ՀՀ դրամ	3.18%	-	(702,300)
Արժույթ	Բազիսային կետերի նվազում 2022թ.	Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2022թ.	Կապիտալի զգայունություն 2022թ.
ՀՀ դրամ	3.18%	-	1,006,300
Արժույթ	Բազիսային կետերի ավելացում 2021թ.	Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2021թ.	Կապիտալի զգայունություն 2021թ.
ՀՀ դրամ	1.50%	-	(471,500)
Արժույթ	Բազիսային կետերի նվազում 2021թ.	Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2021թ.	Կապիտալի զգայունություն 2021թ.
ՀՀ դրամ	1.50%	-	567,922

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Ղեկավարությունը սահմանել է սահմանաչափեր արտարժույթային ռիսկերի համար՝ հիմնված ԿԲ կարգավորումների վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(հազար ՀՀ դրամ)

26. Ռիսկերի կառավարում (շարունակություն)**Շուկայական ռիսկ (շարունակություն)**

	<u>ԱՄՆ դոլար</u>	<u>Եվրո</u>	<u>Այլ արժույթ</u>	<u>Ընդամենը</u>
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	263,875	253,260	1,372,107	1,889,242
Պահանջներ բանկերի նկատմամբ	110,319	-	-	110,319
Հաճախորդներին տրված վարկեր	5,270,308	-	-	5,270,308
Ընդամենը ակտիվներ	5,644,502	253,260	1,372,107	7,269,869
Պարտավորություններ				
Պարտավորությունների բանկերի նկատմամբ	7,003,413	-	-	7,003,413
Պարտավորություններ հաճախորդներին նկատմամբ	92,727	3,329	9,187	105,243
Թողարկված պարտքային արժեթղթեր	938,277	-	-	938,277
Այլ պարտավորություններ	266	24	1	291
Ընդամենը պարտավորություններ	8,034,683	3,353	9,188	8,047,224
Չուտ դիրք	(2,390,181)	249,907	1,362,919	(777,355)
Ածանցյալների ազդեցությունը	1,967,850	-	-	1,967,850
Չուտ դիրք ներառյալ ածանցյալները	(422,331)	249,907	1,362,919	1,190,495

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը ըստ արտարժույթների 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	<u>ԱՄՆ դոլար</u>	<u>Եվրո</u>	<u>Այլ արժույթ</u>	<u>Ընդամենը</u>
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	162,804	93,406	546,908	803,118
Հաճախորդներին տրված վարկեր	8,088,461	-	-	8,088,461
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	-	-	-
Այլ ֆինանսական ակտիվներ	-	423	84,649	85,072
Ընդամենը ակտիվներ	8,251,265	93,829	631,557	8,976,651
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	5,968,307	-	-	5,968,307
Թողարկված պարտքային արժեթղթեր	413,487	-	-	413,487
Այլ փոխառու միջոցներ	16,331,260	-	-	16,331,260
Վարձակալության գծով պարտավորություններ	-	-	-	-
Այլ ֆինանսական պարտավորություններ	91	-	3	94
Ընդամենը պարտավորություններ	22,713,145	-	3	22,713,148
Չուտ դիրք	(14,461,880)	93,829	631,554	(13,736,497)

(հազար ՀՀ դրամ)

26. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ (շարունակություն)

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են այն արժույթները, որոնցով 2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի Էական արժույթային դիրքեր՝ դրամական ակտիվների և պարտավորությունների գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է ՀՀ դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը ֆինանսական արդյունքների վրա (կախված արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից), երբ բոլոր այլ փոփոխականները մնում են կայուն: Բացասական գումարները արտացոլում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը:

Ղեկավարությունը սահմանել է ռիսկի սահմանաչափեր արտարժույթային և տոկոսադրույքների ռիսկերի համար:

Արժույթ	Արտարժույթի փոփոխության % 2022թ.	Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2022թ.	Արտարժույթի փոփոխության % 2021թ.	Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2021թ.
ԱՄՆ դոլար	12.62%	(53,298)	5.00%	(723,094)
ԱՄՆ դոլար	(12.62%)	53,298	(5.00%)	723,094
Եվրո	21.31%	53,255	8.50%	7,975
Եվրո	(21.31%)	(53,255)	(8.50%)	(7,975)

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, ոչ բավարար կամ ձախողված ներքին գործընթացների, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ հանգեցնել ֆինանսական վնասների: Բանկը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգը, հնարավոր ռիսկերի որոշումը և դրանց արձագանքելը կարող են լինել արդյունավետ գործիքներ ռիսկերի կառավարման գործում:

Գործառնական ռիսկի կառավարման շրջանակներում Բանկը որդեգրել է պաշտպանության երեք ուղղություններ՝ պաշտպանության առաջին ուղղությունը ապահովվում է հաճախորդներին սպասարկող անձնակազմի և գործառնական ղեկավարության կողմից, պաշտպանության երկրորդ ուղղությունը ապահովվում է ռիսկերի կառավարման և համապատասխանության գործառնական կողմից և երրորդ պաշտպանության ուղղությունը ապահովվում է ներքին աուդիտի գործառնական կողմից:

Գործառնական ռիսկերի կառավարման համակարգը ներառում է հետևյալ հիմնական տարրերը՝ ռիսկերի քարտեզագրում, միջադեպերի վերլուծություն և մշտական վերահսկողության գործառնական: Վերահսկողությունները ներառում են պարտականությունների արդյունավետ տարանջատում, հասանելիության, թույլտվության և համադրման ընթացակարգեր, անձնակազմի կրթում և գնահատման գործընթացներ:

27. Իրական արժեքի չափում

Իրական արժեքի չափման գործընթաց

Իրական արժեքի գնահատումները նպատակ ունեն մոտավոր սահմանել այն գինը, որը կստացվեր ակտիվը վաճառելու համար կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար շուկայի մասնակիցների միջև կանոնավոր գործարքի ժամանակ չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ դատողությունների կիրառումը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես իրացվելի ակտիվների անհապաղ վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Բանկի ղեկավարությունը սահմանում է Բանկի ակտիվների (ներառյալ ածանցյալ գործիքների) իրական արժեքի չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը: Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են զեղչված դրամական հոսքերի մեթոդների հիման վրա, որոնք հիմնված են հաշվետու ամսաթվի դրությամբ նմանատիպ գործիքների գնահատված ապագա դրամական հոսքերի և զեղչման դրույքների վրա:

(հազար ՀՀ դրամ)

27. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքի չափման գործընթաց (շարունակություն)

2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի ֆինանսական գործիքներ, ինչպիսիք են՝ հաճախորդներին տրված վարկերը, պահանջներ բանկերի նկատմամբ, այլ ֆինանսական ակտիվները, պարտավորություններ բանկերի նկատմամբ, այլ փոխառու միջոցներ, վարձակալության գծով պարտավորություններ և այլ ֆինանսական պարտավորություններ, որոնց իրական արժեքը հիմնված է գնահատման մեթոդների վրա՝ կիրառելով ոչ շուկայական նշանակալի դիտարկելի ելակետային տվյալներ:

Իրական արժեքի հիերարխիա

Բանկն օգտագործում է հետևյալ հիերարխիան՝ ըստ գնահատման մեթոդների ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու և բացահայտելու նպատակով՝

- Մակարդակ 1 – նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):
- Մակարդակ 2 – մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- Մակարդակ 3 – ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Իրական արժեքի բացահայտման նպատակով Բանկը սահմանել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հինք ընդունելով ակտիվի կամ պարտավորության բնույթը, բնութագրերը, ռիսկերը և իրական արժեքի հիերարխիայի մակարդակը, ինչպես նկարագրված է վերևում:

	Իրական արժեքի չափում			Ընդամենը
	Ակտիվ շուկաներում գնանշվող գներ (Մակարդակ1)	Նշանակալի դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ2)	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ3)	
2022թ. դեկտեմբերի 31				
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ ճահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ				
- Աճանցյալ ֆինանսական գործիքներ	-	2,549	-	2,549
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային գործիքներ	-	4,551,296	-	4,551,296
Ակտիվներ, որոնք համար իրական արժեքը բացահայտված է				
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,180,144	-	-	3,180,144
- Պահանջներ բանկերի նկատմամբ	-	-	110,319	110,319
- Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	176,915	176,915
- Հաճախորդներին տրված վարկեր	-	-	52,987,417	52,987,417
Պարտավորություններ, որոնք համար իրական արժեքը բացահայտված է				
- Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	582,925	-	582,925
- Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,477,310	-	1,477,310
- Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	-	7,822,723	7,822,723
- Այլ փոխառու միջոցներ	-	-	3,243,878	3,243,878
- Վարձակալության գծով պարտավորություններ	-	-	1,787,052	1,787,052
- Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	844,645	844,645

(հազար ՀՀ դրամ)

27. Իրական արժեքի չափում (շարունակություն)**Իրական արժեքի հիերարխիա (շարունակություն)**

	Իրական արժեքի չափում			Ընդամենը
	Ակտիվ շուկաներում գնանշվող գներ (Մակարդակ1)	Նշանակալի դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ2)	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ3)	
2021թ. դեկտեմբերի 31				
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային գործիքներ	-	5,116,897	-	5,116,897
Ակտիվներ, որոնք համար իրական արժեքը բացահայտված է				
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,412,544	-	-	2,412,544
- Պահանջներ բանկերի նկատմամբ	-	-	-	-
- Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	132,341	132,341
- Հաճախորդներին տրված վարկեր	-	-	49,745,502	49,745,502
Պարտավորություններ, որոնք համար իրական արժեքը բացահայտված է				
- Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	-	-	-
- Թողարկված պարտքային արժեթղթեր	-	419,884	-	419,884
- Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	-	7,376,162	7,376,162
- Այլ փոխառու միջոցներ	-	-	30,743,440	30,743,440
- Վարձակալության գծով պարտավորություններ	-	-	1,344,542	1,344,542
- Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	474,098	474,098

(հազար ՀՀ դրամ)

27. Իրական արժեքի չափում (շարունակություն)**Իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը**

Ստորև ներկայացվում է Բանկի ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքների և իրական արժեքների համեմատությունն ըստ դասերի, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն հաշվառվում իրական արժեքով: Այլուսակը չի ներառում ոչ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները:

	Հաշվեկշռային արժեք 2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	Իրական արժեքը 2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	Չճանաչված օգուտ/(վնաս) 2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	Հաշվեկշռային արժեք 2021 թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	Իրական արժեքը 2021 թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	Չճանաչված օգուտ/(վնաս) 2021 թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,180,144	3,180,144	-	2,412,544	2,412,544	-
Պահանջներ բանկերի նկատմամբ	110,319	110,319	-	-	-	-
Ներդրումային արժեթղթեր	4,551,296	4,551,296	-	5,116,897	5,116,897	-
Հաճախորդներին տրված վարկեր	56,410,990	52,987,417	3,423,573	52,318,930	49,745,502	2,573,428
Այլ ֆինանսական ակտիվներ	176,915	176,915	-	132,341	132,341	-
Ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	2,549	2,549	-	-	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	582,925	582,925	-	-	-	-
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	7,765,422	7,822,723	(57,301)	7,301,491	7,376,162	(74,671)
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,451,539	1,477,310	(25,771)	413,487	419,884	(6,397)
Այլ փոխառու միջոցներ	3,333,190	3,243,878	89,312	27,623,994	30,743,440	(3,119,446)
Վարձակալության գծով պարտավորություններ	1,787,052	1,787,052	-	1,344,542	1,344,542	-
Այլ ֆինանսական պարտավորություններ	844,645	844,645	-	474,098	474,098	-
Ընդամենը իրական արժեքի չճանաչված փոփոխություն	80,196,986	76,767,173	3,429,813	97,138,324	97,765,410	(627,086)

Գնահատման մեթոդներ և ենթադրություններ

Հետևյալը նկարագրում է այն մեթոդները և ենթադրությունները, որոնք օգտագործվում են ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով չչափվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները որոշելու նպատակով և այն հոդվածները, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվում իրական արժեքով, բայց որոնց իրական արժեքը բացահայտվում է:

Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտ է իրենց հաշվեկշռային արժեքին

Այն ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, որոնք իրացվելի են կամ ունեն կարճ ժամկետայնություն (երեք ամսից պակաս), ենթադրվում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են իրական արժեքին: Այս ենթադրությունը կիրառվում է նաև առանց որոշակի մարման ժամկետ ունեցող ցպահանջ ավանդների և խնայողական հաշիվների նկատմամբ:

(հազար ՀՀ դրամ)

27. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Գնահատման մեթոդներ և ենթադրություններ (շարունակություն)

Ակտիվներ, որոնք իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համար, որոնք իրացվելի են կամ ունեն կարճաժամկետ մարման ժամկետ (երեք ամսից պակաս), ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին: Այս ենթադրությունը կիրառվում է նաև ցպահանջ ավանդների և խնայողական հաշիվների նկատմամբ՝ առանց որոշակի ժամկետայնության:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Հաճախորդներին տրված վարկերի, այլ փոխառու միջոցների, բանկերի նկատմամբ պարտավորությունների և վարձակալության գծով պարտավորությունների իրական արժեքը գնահատվում է ապագա դրամական միջոցների հոսքերի գեղջմամբ՝ հիմնվելով գործող տոկոսադրույքների վրա՝ կիրառելի պարտքի համար նմանատիպ պայմաններով, վարկային ռիսկով և մարման ժամկետով:

Ածանցյալ գործիքներ

Ածանցյալ գործիքները, որոնք գնահատվում են շուկայի դիտարկելի ելակետային տվյալների միջոցով գնահատման մեթոդի կիրառմամբ, հիմնականում տոկոսադրույքի, արտարժույթային սվոփ և ֆորվարդային պայմանագրեր են: Գնահատման առավել հաճախ կիրառվող մեթոդները ներառում են ֆորվարդային գնագոյացման և սվոփ մոդելներ՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկները: Մոդելները ներառում են տարբեր ելակետային տվյալներ, ներառյալ պայմանագրային կողմի վարկային որակը, արտարժույթի սիոթ փոխարժեքները, ֆորվարդային տոկոսադրույքները և տոկոսադրույքների կորերը:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Ներդրումային արժեթղթերը չափվում են գնահատման մեթոդի կամ գնագոյացման մոդելների կիրառմամբ և բաղկացած են հիմնականում ՀՀ պետական պարտքային արժեթղթերից: Այս արժեթղթերը գնահատվում են եկամտաբերության կորերի միջոցով, որոնք ներառում են շուկայում դիտարկելի և Կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալները:

28. Կապակցված կողմերի բացահայտումներ

ՀՀՍՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումներ» ստանդարտի համաձայն կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն ունի վերահսկել կամ նշանակալի ձևով ազդել մյուս կողմի գործառնական և ֆինանսական որոշումների վրա: Յուրաքանչյուր կապակցված կողմի առումով ուշադրություն է դարձվում կապակցվածության եռության և ոչ պարզապես իրավաբանական ձևի վրա:

Կապակցված կողմերը կարող են իրականացնել այնպիսի գործարքներ, որոնք չկապակցված կողմերի միջև կարող են չկատարվել, և կապակցված կողմերի միջև իրականացվող գործարքների գներն ու պայմանները կարող են տարբերվել ոչ կապակցված կողմերի հետ գործարքների գներից և պայմաններից:

(հազար ՀՀ դրամ)

28. Կապակցված կողմերի բացահայտումներ (շարունակություն)

Կապակցված կողմերի միջև գործարքների մնացորդները հետևյալն են.

	2022			2021		
	Բաժնետերեր	Առանցքային դեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ	Այլ կապակցված կողմեր	Բաժնետերեր	Առանցքային դեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ	Այլ կապակցված կողմեր
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ						
Վարկերի մնացորդը հունվարի 1-ի դրությամբ, համախառն	-	81	459,671	-	-	441,978
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	-	42,165	-	-	136	56,300
Տարվա ընթացքում մարված վարկեր	-	(18,444)	(432,695)	-	(55)	(38,607)
Այլ շարժ	-	-	(26,976)	-	-	-
Վարկերի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ, համախառն	-	23,802	-	-	81	459,671
Նվազեցում՝ արժեզրկման գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	(1,195)	-	-	(2)	(9,219)
Վարկերի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ, զուտ	-	22,607	-	-	79	450,452
Ընթացիկ հաշիվներ						
Հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-	-	-
Տարվա ընթացքում բացված ընթացիկ հաշիվներ	121,082	5,337	-	-	-	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	121,082	5,337	-	-	-	-
Այլ փոխառու միջոցներ						
հունվարի 1-ի դրությամբ	9,468,427	-	16,329,564	13,682,602	-	12,367,959
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	27,211,757	-	-	31,822,190	-	11,080,938
Տարվա ընթացքում մարված վարկեր	(15,481,250)	-	(16,278,719)	(36,038,984)	-	(6,983,778)
Պարտավորության փոխարկում սեփական կապիտալի (Ծան. 21)	(21,200,000)	-	-	-	-	-
Այլ շարժ	1,066	-	(50,845)	2,619	-	(135,555)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	9,468,427	-	16,329,564
Վարձակալության գծով պարտավորություններ						
Հունվարի 1-ի դրությամբ	506,786	77,338	691,087	454,119	40,521	112,096
Ավելացումներ տարվա ընթացքում	13,690	454,041	168,185	109,961	48,690	607,123
Տոկոսների հաշվեգրում	51,244	26,296	75,415	51,304	5,236	30,007
Վճարումներ տարվա ընթացքում	(116,652)	(53,573)	(126,096)	(108,598)	(17,109)	(58,139)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	455,068	504,102	808,591	506,786	77,338	691,087
Այլ ակտիվներ	-	-	128,234	-	-	3,744
Ֆինանսական երաշխավորություն	-	-	734,400	-	-	1,142,735
Շահույթի կամ վնասի մասին հաշվետվություն						
Տոկոսային եկամուտ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույթով	-	2,943	16,400	-	3	38,539
Վարկային կորստի գծով ծախս վարկերի համար	-	(1,822)	9,219	-	(4)	815
Տոկոսային ծախս ավանդների և ընթացիկ հաշիվների գծով	(100)	(4)	-	-	-	-
Տոկոսային ծախս այլ փոխառու միջոցների գծով	-	-	(358,758)	-	-	(998,732)
Տոկոսային ծախս վարձակալության գծով պարտավորությունների մասով	(51,244)	(26,296)	(75,415)	(51,304)	(5,236)	(30,007)

(հազար ՀՀ դրամ)

28. Կապակցված կողմերի բացահայտումներ (շարունակություն)

Այլ կապակցված կողմերը ներառում են կազմակերպություններ, որոնց վերահսկող բաժնետոմսերը պատկանում են Բանկի բաժնետերերին և նրանց ընտանիքի անդամներին:

Դեկավար անձնակազմի գծով կատարված հատուցումները հետևյալն են՝

	<u>2022</u>	<u>2021</u>
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	369,257	209,619
Ընդամենը առանցքային ղեկավար անձնակազմի հատուցում	<u>369,257</u>	<u>209,619</u>

29. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն

	<i>Ծան.</i>	<i>Թողարկված պարտքային արժեթղթեր</i>	<i>Այլ փոխառու միջոցներ</i>	<i>Վարձակալության գծով պարտավորություններ</i>	<i>Ֆինանսավորման գործունեության կից ընդամենը պարտավորություններ</i>
Հաշվեկշռային արժեք 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,18,19	450,032	27,194,885	1,031,337	28,676,254
Թողարկումից մուտքեր		-	43,080,097	-	43,080,097
Մարումներ		-	(41,611,081)	(125,284)	(41,736,365)
Արտարժույթային փոխարկումներ		(36,265)	(1,096,967)	-	(1,133,232)
Անկանխիկ գործարքներ		-	-	438,489	438,489
Այլ		(280)	57,060	-	56,780
Հաշվեկշռային արժեք 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,18,19	413,487	27,623,994	1,344,542	29,382,023
Թողարկումից մուտքեր		1,119,158	28,315,722	-	29,434,880
Մարումներ		-	(30,772,415)	(193,785)	(30,966,200)
Արտարժույթային փոխարկումներ		(101,444)	(405,773)	-	(507,217)
Անկանխիկ գործարքներ		-	(21,200,000)	636,295	(20,563,705)
Այլ		20,338	(228,338)	-	(208,000)
Հաշվեկշռային արժեք 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,18,19	<u>1,451,539</u>	<u>3,333,190</u>	<u>1,787,052</u>	<u>6,571,781</u>

«Այլ» տողում ներառված է տարվա ընթացքում թողարկված պարտքային արժեթղթերի, այլ փոխառու միջոցների և վարձակալության գծով պարտավորությունների գծով վճարված և հաշվեգրված տոկոսների զուտ ազդեցությունը: Բանկը դասակարգում է վճարված տոկոսները որպես դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից:

Անկանխիկ գործարքները կազմված են վարձակալության գծով պարտավորությունների ավելացումներից և փոխառու միջոցները Բանկի բաժնետիրական կապիտալի փոխարկման գործարքից (Ծան. 18, 19 և 21):

30. Կապիտալի համարժեքություն

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է վերահսկողի կողմից սահմանված պահանջներին, և որ Բանկն ապահովում է ամուր վարկային վարկանիշ և ուժեղ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

(հազար ՀՀ դրամ)

30. Կապիտալի համարժեքություն (շարունակություն)

Բանկը որպես կապիտալ ճանաչում է ՀՀ օրենսդրությամբ բանկերի կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են 1988թ. Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը, ինչպես նաև հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նվազագույն մակարդակը կազմել է 12%: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում է սահմանված մակարդակին:

«Ֆասթ Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

**2021թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն.....	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն.....	8
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	9
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն.....	10
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	12



«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական Եզրակացություն

«Ֆասթ Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ֆասթ Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ի (Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների Էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԻ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի Էթիկայի պահանջների, և կատարել ենք Էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԻ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 3-ին, որտեղ նշվում է, որ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար ներկայացված համադրելի տեղեկատվությունը վերահաշվարկվել է: Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հարցի առնչությամբ:

Համադրելի տեղեկատվությանը վերաբերող այլ հանգամանք

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի շրջանակում մենք աուդիտի ենք ենթարկել Ծանոթագրություն 3-ում նշված ճշգրտումները, որոնք կատարվել են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար և 2020թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված համադրելի տեղեկատվությունը վերահաշվարկելու համար: Մեր կարծիքով Ծանոթագրություն 3-ում ներկայացված ճշգրտումները տեղի են և կիրառվել են համապատասխան կերպով:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

Հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ

Տեղեկատվությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 11-ում և Ծանոթագրություն 20-ի (բ) կետում:

Աուդիտի առանցքային հարց	Աուդիտի առանցքային հարցի հետ կապված իրականացված աուդիտորական ընթացակարգեր
<p>Հաճախորդներին տրված վարկերը կազմում են ընդհանուր ակտիվների 84.1%-ը և ներառում են ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը, որը կանոնավոր հիմունքով գնահատվում է և զգայուն է կիրառված ենթադրությունների նկատմամբ:</p> <p>Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման մոդելը ղեկավարությունից պահանջում է կատարել մասնագիտական դատողություններ և ենթադրություններ հետևյալ առանցքային հարցերի հետ կապված.</p> <ul style="list-style-type: none"> - պարտքային ռիսկի նշանակալի աճի և պարտազանցման ռեպերի ժամանակին բացահայտում հաճախորդներին տրված վարկերի հետ կապված (բաշխում 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի միջև՝ ՖՅՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» (այսուհետ՝ ՖՅՄՍ 9) համաձայն), - պարտազանցման տեղի ունենալու հավանականության և պարտազանցման ռեպերում առաջացող կորստի գնահատում: 	<p>Մենք վերլուծել ենք ակնկալվող պարտքային կորուստների գնահատման վերաբերող Կազմակերպության մեթոդաբանության և քաղաքականության առանցքային դրույթները ՖՅՄՍ 9-ի պահանջների հետ համապատասխանության տեսանկյունից՝ գործընթացում ներգրավելով նաև ֆինանսական ռիսկերի կառավարման գծով մասնագետներին:</p> <p>Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հետ կապված ղեկավարության կողմից կատարված մասնագիտական դատողությունների և ենթադրությունների տեղի ունեցող վերլուծելու համար իրականացրել ենք հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.</p> <ul style="list-style-type: none"> - հաճախորդներին տրված վարկերի համար ստուգել ենք ժամկետանց օրերի հաշվարկը վերահսկող համակարգի կառուցվածքը և գործառնական արդյունավետությունը և վարկերի բաշխումը փուլերի միջև, - գնահատել ենք պարտազանցման ռեպերում առաջացող կորստի հաշվարկի համար օգտագործվող հիմնական ենթադրությունները, համեմատել ենք գրավադրված ոսկե իրերի արժեքները հասանելի շուկայական տեղեկատվության հետ և համեմատել

<p>Հաճախորդներին տրված վարկերի մեծ ծավալի և անկապվող պարտքային կորուստների ժամկետների և գումարների գնահատման բարդության և սուբյեկտիվության պատճառով, այս հարցը դիտարկվում է որպես աուդիտի առանցքային հարց:</p>	<p>Ենթ գրավադրված ոսկե իրերի նկատմամբ կիրառվող գեղջման ժամկետը Կազմակերպության անցյալ ժամանակաշրջանների տվյալների հետ,</p> <ul style="list-style-type: none"> - ընտրանքային կարգով համեմատել ենք ելակետային տվյալները հիմքում ընկած փաստաթղթերի հետ: - գնահատել ենք նաև, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունների բացահայտումներն ըստ պատշաճի արտացոլում են Կազմակերպության ենթարկվածությունը պարտքային ռիսկին:
--	--

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՅՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով Էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ Կազմակերպությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձից պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են Էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի Էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են Էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Կազմակերպության կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և կիրառելի լինելու դեպքում, ռիսկերը վերացնելու կամ անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տեղեկացված հարցերից մենք ընտրում ենք այն հարցերը, որոնք առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք ներկայացնում ենք այս հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող նորմերով արգելվում է հարցի հրապարակային բացահայտումը, կամ երբ խիստ հազվագյուտ դեպքերում, մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացնել աուդիտորական եզրակացությունում, քանի որ ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ըստ ողջամիտ ակնկալիքների կարող են գերակշռել ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան

Ղեկավար գործընկեր, «ԲԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

KPMG Armenia LLC

«ԲԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՍՊԸ
17 հունիսի 2022թ.




	Ծնթգ.	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ Վերահաշվարկված
Արդյունավետ տոկոսադրույքի մեղձորով հաշվարկված տոկոսային եկամուտ	5	13,270,027	10,912,499
Տոկոսային ծախս	5	(2,938,079)	(2,604,067)
Չուտ տոկոսային եկամուտ		10,331,948	8,308,432
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ		10,775	1,880
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս		(17,113)	(13,923)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ ծախս		(6,338)	(12,044)
Չուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	6	1,125,936	474,699
Չուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով		(7,888)	-
Չուտ այլ գործառնական եկամուտ		99,095	32,156
Գործառնական եկամուտ		11,542,753	8,803,244
Չուտ արժեզրկման վերականգնում/(արժեզրկում)ից կորուստներ) ֆինանսական գործիքների գծով	7	(2,473,015)	(448,693)
Անձնակազմի գծով ծախսեր		(2,445,764)	(2,107,635)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	8	(811,588)	(755,123)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		5,812,386	5,491,793
Շահութահարկի գծով ծախս	9	(1,012,231)	(961,567)
Շահույթ տարվա համար		4,800,155	4,530,226
Այլ համապարփակ վնաս՝ առանց շահութահարկի			
<i>Հորվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>			
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.			
- իրական արժեքի զուտ փոփոխություն	11	(270,919)	(80,617)
<i>Ընդամենը հորվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>			
		(270,919)	(80,617)
Այլ համապարփակ վնաս տարվա համար՝ առանց շահութահարկի		(270,919)	(80,617)
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		4,529,236	4,449,609

8-ից 67-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. հունիսի 17-ին և ստորագրվել են վերջինիս անունից

Դանիել Ազատյան
 Գործադիր տնօրեն



Լիլիա Մովսիսյան
 Գլխավոր հաշվապահ



	Ծնթգ.	2021թ.	2020թ.	2019թ.
		հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
		Վերահաշվարկված	Վերահաշվարկված	Վերահաշվարկված
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	2,412,544	1,608,503	2,015,248
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր				
– Կազմակերպության կողմից պահվող	11	5,116,897	-	-
– Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	11	-	5,519,123	-
Հանախորդներին տրված վարկեր	12	52,318,930	47,610,186	39,117,823
Ընթացիկ հարկային ակտիվ		101,452	-	152,289
Հիմնական միջոցներ	13	439,880	410,702	357,633
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	14	1,247,301	973,936	749,993
Ոչ նյութական ակտիվներ		31,534	27,065	31,192
Այլ ակտիվներ	15	419,003	234,526	179,958
Ընդամենը ակտիվներ		62,087,541	56,384,041	42,604,136
ՊԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Այլ փոխառություններ	16	26,156,702	26,406,209	17,988,955
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		-	5,275,501	-
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ	17	8,776,965	3,193,158	8,753,592
Թողարկված պարտքային արժեթղթեր	18	413,487	450,032	599,148
Հետաձգված հարկային պարտավորություններ	9	2,678,897	1,737,485	956,487
Վարձակալության գծով պարտավորություններ	14	1,344,542	1,031,337	775,581
Ընթացիկ հարկային պարտավորություններ		-	162,869	-
Այլ պարտավորություններ	19	538,205	477,943	330,475
Ընդամենը պարտավորություններ		39,908,798	38,734,534	29,404,238
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ				
Բաժնետիրական կապիտալ	20	7,000,000	7,000,000	7,000,000
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ		(351,536)	(80,617)	-
Զբաղիված շահույթ		15,530,279	10,730,124	6,199,898
Ընդամենը սեփական կապիտալ		22,178,743	17,649,507	13,199,898
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		62,087,541	56,384,041	42,604,136

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ Վերահաշվարկված
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Շահույթ նախքան հարկումը	5,812,386	5,491,793
<i>Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով.</i>		
Ամորտիզացիայի և մաշվածության մասհանումներ	289,053	247,219
Ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով ծախս	2,473,015	448,693
Օգուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	(358,068)	(89,987)
Տոկոսային եկամուտ	(13,270,027)	(10,912,499)
Տոկոսային ծախս	2,938,079	2,604,067
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվների/պարտավորությունների փոփոխությունները	(2,115,562)	(2,210,714)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում		
Հանախորդներին տրված վարկեր	(7,606,393)	(8,193,811)
Այլ ակտիվներ	(204,022)	(54,568)
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)		
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(5,275,501)	5,275,501
Այլ պարտավորություններ	(55,537)	147,468
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը	(15,257,015)	(5,036,124)
Վճարված շահութահարկ	(271,493)	(152,288)
Ստացված տոկոսներ	13,050,495	9,127,498
Վճարված տոկոսներ	(2,723,870)	(506,365)
Գործառնական գործունեության համար (օգտագործված)/ գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր	(5,201,883)	3,585,009
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	-	(5,411,356)
Հիմնական միջոցների և ոչ կյուբական ակտիվների ձեռքբերում	(165,788)	(155,275)
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր	(165,788)	(5,566,631)
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերից	24,186,354	16,316,998
Վարկերի մարում ֆինանսական կազմակերպություններից	(18,544,079)	(22,173,909)
Մուտքեր վարկերից և փոխառություններից	42,219,867	21,635,719
Վարկերի և փոխառությունների մարում	(41,433,600)	(13,973,569)
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	450,311
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	-	(670,143)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(125,284)	(100,142)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր	6,303,258	1,485,265
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	935,587	(496,357)
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(130,152)	90,656
Ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,394)	(1,044)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	1,608,503	2,015,248
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	10 2,412,544	1,608,503

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. (ըստ նախորդ ֆինանսական հաշվետվությունների)	7,000,000	-	4,474,674	11,474,674
Վերահաշվարկի ճշգրտումներ (Ծնթզ. 3)	-	-	1,725,224	1,725,224
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. (վերահաշվարկված)	7,000,000	-	6,199,898	13,199,898
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք				
Շահույթ տարվա համար (ըստ նախորդ ֆինանսական հաշվետվությունների)	-	-	3,293,597	3,293,597
Վերահաշվարկի ճշգրտումներ (Ծնթզ. 3)	-	-	1,236,629	1,236,629
Շահույթ տարվա համար (վերահաշվարկված)	-	-	4,530,226	4,530,226
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք				
- Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	(80,617)	-	(80,617)
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	(80,617)	-	(80,617)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար (վերահաշվարկված)	-	(80,617)	4,530,226	4,449,609
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ. (վերահաշվարկված)	7,000,000	(80,617)	10,730,124	17,649,507
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	7,000,000	(80,617)	10,730,124	17,649,507
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք				
Շահույթ տարվա համար	-	-	4,800,155	4,800,155
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք				
- Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	(270,919)	-	(270,919)
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	(270,919)	-	(270,919)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	-	(270,919)	4,800,155	4,529,236
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	7,000,000	(351,536)	15,530,279	22,178,743

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Ֆասթ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն (Կազմակերպություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն 2011թ. հոկտեմբերին: Կազմակերպության հիմնական գործունեությունը վարկերի տրամադրումն է փոքր և միջին ձեռնարկություններին և ֆիզիկական անձանց: Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Կազմակերպությունը վարկային կազմակերպության լիցենզիա է ստացել 2011թ. հոկտեմբերի 14-ին:

Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0047, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան փ. 32/6:

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում գտնվող 28 մասնաճյուղի միջոցով:

Կազմակերպության հավասար բաժնեմասով սեփականատերերն են Վահե Բադալյանը և Վիգեն Բադալյանը:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 24-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Կազմակերպության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: COVID-19 համավարակն ավելի մեծացրեց Հայաստանի Հանրապետությունում գործունեության իրականացման պայմանների հետ կապված անորոշությունը:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Այսպես գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով:

(զ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը կատարել է դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 4 (ե) (i),
- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի ան սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն և հաստատում – Ծանոթագրություն 21 (բ):

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. ելակետային տվյալների որոշում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի համար, այդ թվում՝ ապագայամետ տեղեկատվության ներառումը – Ծանոթագրություն 21 (բ),
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի գնահատում – Ծանոթագրություն 25:

(ե) Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի փոփոխություններ

Գործող ստանդարտների մի շարք փոփոխություններ ուժի մեջ են մտել 2021թ. հունվարի 1-ից, սակայն նշանակալի ազդեցություն չունեն Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Նախորդ տարվա տեղեկատվության վերահաշվարկ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս դեկավարությունը վերահաշվարկել է հաճախորդներին տրված վարկերի մնացորդներին վերաբերող նախորդ տարվա տվյալները հետևյալ հանգամանքներից ելնելով.

ա) 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Կազմակերպությունը կիրառել է 12 ամիս գեղջման ժամանակահատված ոսկու գրավի համար (որն օգտագործվել է պարտագանգման դեպքում առաջացող կորստի հաշվարկում): Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Կազմակերպությունը հետընթաց ճշգրտել է այդ ենթադրությունը, քանի որ նախկինում վաճառել է առգրավված ոսկու գրավն առգրավումից հետո միջինը 2 ամսվա ընթացքում, և այդ տեղեկատվությունը հասանելի էր 2020թ. և 2019թ. ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Բացի այդ ոսկու գրավը վերագնահատվել էր համապատասխանաբար 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շուկայական գներն արտացոլելու համար: Նախկինում օգտագործվում էր գրավի սկզբնական արժեքը (արժեքը վարկի տրամադրման պահին), ինչը կարող էր հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների ոչ ճշգրիտ հաշվարկի:

Արդյունքում 2020թ-ին և 2019թ-ին ակնկալվող պարտքային կորուստներն ավել են ներկայացրել համապատասխանաբար 3,612,016 հազար դրամով և 2,103,932 հազար դրամով:

Ստորև ներկայացված է վերահաշվարկի ազդեցությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա:

հազ. դրամ	Հաճախորդներին տրված վարկեր	Հետաձգված հարկային պարտավորություններ	Զբաղիված շահույթ
Մնացորդը ըստ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների	43,998,170	1,087,322	7,768,271
Ուղղման ազդեցությունն ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի վրա	3,612,016	650,163	2,961,853
Վերահաշվարկված մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	47,610,186	1,737,485	10,730,124
Մնացորդը ըստ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների	37,013,891	577,779	4,474,674
Ուղղման ազդեցությունն ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի վրա	2,103,932	378,708	1,725,224
Վերահաշվարկված մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	39,117,823	956,487	6,199,898

Ստորև ներկայացված է վերահաշվարկի ազդեցությունը 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության վրա:

հազ. դրամ	Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստ	Շահութահարկի գծով ծախս	Շահույթ տարվա համար
Գումարը ըստ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների Ուղղման ազդեցությունն ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի վրա	(1,956,777)	(690,112)	3,293,597
Վերահաշվարկված գումարը 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	(448,693)	(961,567)	4,530,226

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում ՀՀ դրամի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ՀՀ դրամի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույթով հաշվարկված տոկոսների ու վնասումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված փոխարժեքային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները և այլ բանկերում պահվող օգտագործման սահմանափակում չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը գեղջում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Կազմակերպությունը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է նաև իրական արժեքի հեջի ճշգրտումներն արտացոլելու համար այն ամսաթվի դրությամբ, երբ սկսվում է համապատասխան ճշգրտման ամորտիզացիայի հաշվարկը:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 4 (ե) (iv) կետում:

Ներկայացում

Ծահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Ծահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

(դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Կազմակերպությունը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

i. Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորդված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները:

- արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
- ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
- արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և վնասներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Կազմակերպությունը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այս բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Ծահարաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահարաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Կազմակերպությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այսպես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Բիզնես մոդելի գնահատում

Կազմակերպությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը:

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների

ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:

- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Կազմակերպության ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՛ հավաքված դրամական հոսքերի վրա):
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Կազմակերպության առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվներ վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Կազմակերպությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այս պայմանը: Գնահատումն իրականացնելիս Կազմակերպությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Կազմակերպության պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեզրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
- հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Կազմակերպությունը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների, դասում է ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

ii. Ապահանջում

Ֆինանսական ակտիվներ

Կազմակերպությունն ապահանջում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Կազմակերպությունը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապահանջելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապահանջված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապահանջման ժամանակ, ինչպես ներկայացված է Ծանոթագրություն 4 (ե) (i) կետում: Ապահանջման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Կազմակերպության կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Կազմակերպությունն իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապահանջվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Կազմակերպությունը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Կազմակերպությունը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունն ապահանջում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

iii. Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում՝ «փոխառություններ և կազմակերպությունների այլ մնացորդներ» հոդվածում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ՝ «կազմակերպություններին տրված վարկեր» հոդվածում: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

iv. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է գուտ գումարն միայն այն դեպքում, երբ Կազմակերպությունը տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ: Կազմակերպությունը տվյալ պահին ունի հաշվանցում կատարելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, եթե այդ իրավունքը կախված չէ ապագա դեպքերից և իրագործելի է թե՛ բնականոն գործունեության և թե՛ Կազմակերպության և բոլոր պայմանագրային կողմերի կողմից պարտագանցման, լուծարման կամ սնանկացման դեպքում:

v. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Կազմակերպությունը գնահատում է, արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորուստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե թխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Կազմակերպության կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Կազմակերպությունն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Կազմակերպությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Կազմակերպությունը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Կազմակերպությունը կիրառում է կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Կազմակերպությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանության:

Եթե դրամական հոսքերի փոփոխությունը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն փոփոխության նպատակն է առավելագույն չափով հետ ստանալ/վերականգնել ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Կազմակերպությունը մտադիր է այնպես փոփոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրսգրվի նախքան փոփոխությունը կատարելը (տես՝ ստորև դուրսգրման քաղաքականություն): Այս մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Կազմակերպությունն իրականացնում է նաև որակական գնահատում գնահատելու համար փոփոխության նշանակալի լինելը:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Կազմակերպությունը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես փոփոխումից օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում: Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Փոփոխման շրջանակում ցանկացած կրած ծախսում կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման փոփոխությունն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Կազմակերպությունը հաշվառում է տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր փոփոխված ֆինանսական պարտավորությունը:

Կազմակերպությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Կազմակերպությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության փոփոխությունը չի բավարարում ապահանջման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով փոփոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացորդային ժամանակահատվածում: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

vi. Արժեզրկում

Տես նաև Ծանոթագրություն 21 (բ):

Կազմակերպությունը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվների համար:

Կազմակերպությունը չի կիրառում ցածր պարտքային ռիսկի հետ կապված պարզեցում որևէ ֆինանսական գործիքի գծով:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվն ապահանջելու անհրաժեշտությունը (տես Ծանոթագրություն 4 (ե) (ii)), և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապահանջմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում (տես Ծանոթագրություն 21 (բ)):
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապահանջմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապահանջման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը գեղջվում է ապահանջման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից (որոնք դիտարկվում են որպես 3-րդ փուլի ֆինանսական ակտիվներ): Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտագանցումը կամ ժամկետանց դառնալը,
- Կազմակերպության կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Կազմակերպությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կդառնա անվճարունակ,
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, ֆիզիկական անձանց տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Պետական պարտատոմսերում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Կազմակերպությունը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկունակության վարկանիշային գործակալությունների գնահատումները:
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանակությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով:
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը: Սա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- *ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,*
- *էրբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Կազմակերպությունը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին՝ Կազմակերպությունը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և*
- *իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:*

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Կազմակերպությունը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ/պարտքերի գանձման միջոցներ՝ վճարման ենթակա գումարների վերադարձման Կազմակերպության ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

(գ) Հաճախորդներին տրված վարկեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր» հոդվածը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերը (տես Ծանոթագրություն 4 (ե) (i)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(ե) Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «ներդրումային արժեթղթեր» հոդվածը ներառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերը (տես Ծանոթագրություն 4 (ե) (i)):

(ը) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով առանձին ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- շենքեր 20 տարի
- համակարգիչներ և հաղորդակցության սարքավորումներ 1 տարի
- փոխադրամիջոցներ 8 տարի
- տնտեսական գույք և այլ հիմնական միջոցներ 8 տարի

(թ) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման և ներդրման ծախսումները կապիտալացվում են համապատասխան ոչ նյութական արժեքի ինքնարժեքին:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները կազմում են 3-ից 10 տարի:

(ժ) Առգրավված ակտիվներ

Կազմակերպությունը ճանաչում է առգրավված ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ ունի իրացման ամբողջական և վերջնական իրավունքներ գրավի նկատմամբ:

Առգրավված ակտիվները չափվում են հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչման պահին առգրավված ակտիվները չափվում են այն վարկի հաշվեկշռային արժեքով, որի գծով տեղի է ունեցել պարտագանցում՝ ներառյալ գրավի առգրավման ընթացքում կրած ծախսումները: Իրական արժեքը՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, իրենից ներկայացնում է գրավի գնահատված վաճառքի գինը բնականոն գործունեության ընթացքում՝ հանած համապատասխան վաճառքի ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո առգրավված ակտիվները վերանայվում են վաճառքի համար պահվող դասակարգման չափանիշներին համապատասխանելու տեսանկյունից և համապատասխանաբար վերադասակարգվում են՝ չափանիշները բավարարելու դեպքում:

Առգրավված ակտիվների օտարումից օգուտը և կորուստը ճանաչվում են գուտ հիմունքով «Այլ գործառնական եկամուտ» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(հ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը գեղջվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով գեղջման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(լ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Կազմակերպությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են գեղջելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը գեղջման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը հատուկ ռիսկերը:

(խ) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները, ներառյալ հարկերը, ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

(ii) Ծահաբաժիններ

Ծահաբաժիններ հայտարարելու և վճարելու Կազմակերպության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(ծ) Հարկում

Ծահույթահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ծահույթահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահույթահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով կիրառելով այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Կազմակերպությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Կազմակերպության գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Զճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Կազմակերպությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

(կ) Սեզմենտային հաշվետվություններ

Գործառնական սեզմենտը Կազմակերպության բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր, որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեզմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Ղեկավարությունը գտնում է, որ Կազմակերպությունը բաղկացած է մեկ գործառնական սեզմենտից:

(h) Վարձակալություն

Պայմանագրի սկզբում Կազմակերպությունը որոշում է, թե արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը: Գնահատելու համար, թե արդյոք պայմանագրով փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը, Կազմակերպությունն օգտագործում է ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը:

(i) Կազմակերպությունը՝ որպես վարձակալ

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում, Կազմակերպությունը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Կազմակերպությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Կազմակերպությանը չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Կազմակերպությունը կիրառորձի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Կազմակերպության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Կազմակերպությունը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Կազմակերպությունը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես ակնկալվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Կազմակերպությունը խելամտորեն համոզված է, որ կիրառորձի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Կազմակերպությունը խելամտորեն համոզված է, որ կիրառորձի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Կազմակերպությունը խելամտորեն համոզված է, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Կազմակերպության գնահատականի փոփոխություն, եթե Կազմակերպությունը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գրո:

Ներդրումային գույքի սահմանմանը չհամապատասխանող օգտագործման իրավունքի ձևով ակտիվները Կազմակերպությունը ներկայացնում է հիմնական միջոցների կազմում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորությունների կազմում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Կազմակերպությունը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների, այդ թվում՝ բանկոմատների գծով: Այս վարձակալությունների գծով վարձավճարները Կազմակերպությունը ճանաչում է որպես ծախս գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում:

(ձ) Հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ

Մի շարք նոր ստանդարտներ և ստանդարտների փոփոխություններ գործում են 2021թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Կազմակերպությունը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

(i) Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՄ 37 փոփոխություններ)

Փոփոխությունները հստակեցնում են, թե որ ծախսումներն է Կազմակերպությունը ներառում պայմանագրի կատարման ծախսումները որոշելիս՝ պայմանագրի անբարենպաստ լինելը գնահատելու համար: Փոփոխությունները գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ փոփոխություններն առաջին անգամ կիրառելու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար: Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ փոփոխությունների կիրառման կուտակային հետևանքը ճանաչվում է որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների սկզբնական մնացորդի ճշգրտում՝ ըստ կիրառելիության: Համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում: Կազմակերպությունը որոշել է, որ առկա բոլոր պայմանագրերը կավարտվեն մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելը:

(ii) Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՄ 12 փոփոխություններ)

Փոփոխությունները սահմանափակում են սկզբնական ճանաչման ժամանակ կիրառվող բացառության շրջանակը՝ բացառելու համար այն գործարքները, որոնք առաջացնում են հավասար և հաշվանցվող ժամանակավոր տարբերություններ, օրինակ՝ վարձակալության և շահագործումից հանելու պարտավորությունների դեպքում: Փոփոխությունները գործում են 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վարձակալությանը և շահագործումից հանելու պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է ճանաչվեն ներկայացված ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբից՝ ցանկացած կուտակային հետևանքը ճանաչելով որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների ճշգրտում այդ ամսաթվի դրությամբ: Բոլոր մյուս գործարքների համար փոփոխությունները կիրառվում են այն գործարքների նկատմամբ, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբից հետո:

Փոփոխություններն ազդեցություն չեն ունենա Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

(iii) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- COVID-19 հետ կապված զիջումներ վարձակալության գծով 2021թ. հունիսի 30-ից հետո ընկած ժամամասնակաշրջանների համար (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- ՖՀՄՍ տարեկան կատարելագործումներ, 2018-2020թթ. ժամամասնակաշրջան
- Հիմնական միջոցներ. Մուտքեր նախքան նպատակային օգտագործումը (ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ)
- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» և ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխություններ
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործանական առաջարկներ 2 փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ)

5 Չուտ տոկոսային եկամուտ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	12,800,135	10,565,471
Ներդրումային արժեթղթեր	466,797	344,410
Այլ	3,095	2,618
	13,270,027	10,912,499
Տոկոսային ծախս		
Այլ փոխառություններ	2,132,418	1,927,784
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	359,880	365,814
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	298,549	193,218
Վարձակալության գծով պարտավորություններ	111,186	79,681
Թողարկված պարտքային արժեթղթեր	27,351	36,965
Այլ	8,695	605
	2,938,079	2,604,067
Չուտ տոկոսային եկամուտ	10,331,948	8,308,432

6 Չուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Օգուտ սփոթ գործարքներից	767,868	384,712
Օգուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	358,068	89,987
	1,125,936	474,699

7 Չուտ արժեզրկման վերականգնում/(արժեզրկումից կորուստներ) ֆինանսական գործիքների գծով

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ Վերահաշվարկված
Հանախորդներին տրված վարկեր	(2,417,707)	(429,675)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	(47,019)	(18,595)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(360)	(1,004)
Այլ ֆինանսական ակտիվներ	(7,929)	581
	(2,473,015)	(448,693)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է հանախորդներին տրված վարկերի սկզբնական և վերջնական համախառն մնացորդների համադրումն ըստ ֆինանսական գործիքների դասերի 2021թ. համար:

հազ. դրամ	2021թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Հանախորդներին տրված՝ ամորտիզացված արժեքով չափվող վարկեր				
Մնացորդը առ 1 հունվարի	27,578,055	9,519,440	12,612,794	49,710,289
Տեղափոխում 1-ին փուլ	232,533	(231,861)	(672)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(13,331,411)	14,138,392	(806,981)	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(9,710,256)	(1,052,854)	10,763,110	-
Ամբողջությամբ կամ մասնակիորեն մարված ֆինանսական ակտիվներ	(25,408,479)	(10,254,610)	(12,571,029)	(48,234,118)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	43,213,637	-	-	43,213,637
Ակտիվի գուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	5,839,713	3,053,421	3,253,798	12,146,932
Դուրսգրումներ	-	-	(705,154)	(705,154)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	28,413,792	15,171,928	12,545,866	56,131,586

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է հաճախորդներին տրված վարկերի սկզբնական և վերջնական համախառն մնացորդների համադրումն ըստ ֆինանսական գործիքների դասերի 2020թ. համար:

հազ. դրամ	2020թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Հաճախորդներին տրված՝ ամորտիզացված արժեքով չափվող վարկեր				
Մնացորդը առ 1 հունվարի	25,514,764	5,843,524	9,019,592	40,377,880
Տեղափոխում 1-ին փուլ	1,168,359	(897,023)	(271,336)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(8,340,407)	8,727,067	(386,661)	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(10,943,174)	(38,434)	10,981,609	-
Ամբողջությամբ կամ մասնակիորեն մարված ֆինանսական ակտիվներ	(19,995,430)	(4,115,693)	(6,600,130)	(30,711,253)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	40,173,943	-	-	40,173,942
Դուրսգրումներ	-	-	(130,280)	(130,280)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	27,578,055	9,519,440	12,612,794	49,710,289

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումն ըստ ֆինանսական գործիքների դասերի 2021թ. համար:

հազ. դրամ	2021թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Հաճախորդներին տրված՝ ամորտիզացված արժեքով չափվող վարկեր				
Մնացորդը առ 1 հունվարի	217,737	358,034	1,524,332	2,100,103
Տեղափոխում 1-ին փուլ	23,937	(23,937)	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(171,895)	277,847	(105,952)	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(128,354)	(52,993)	181,347	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(165,797)	518,578	1,478,620	1,831,401
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	586,306	-	-	586,306
Դուրսգրումներ	-	-	(705,154)	(705,154)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	361,934	1,077,529	2,373,193	3,812,656

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումն ըստ ֆինանսական գործիքների դասերի 2020թ. համար:

հազ. դրամ	2020թ. (վերահաշվարկված)			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Հաճախորդներին տրված՝ ամորտիզացված արժեքով չափվող վարկեր				
Մնացորդը առ 1 հունվարի	111,292	95,626	1,053,139	1,260,057
Տեղափոխում 1-ին փուլ	13,457	(11,008)	(2,449)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(168,439)	200,523	(32,083)	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(209,489)	(10,218)	219,706	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(297,552)	83,110	416,381	201,939
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	768,387	-	-	768,387
Դուրսգրումներ	-	-	(130,280)	(130,280)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	217,656	358,033	1,524,414	2,100,103

8 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա	289,053	247,219
Նվիրատվություններ	40,000	138,500
Անվտանգության ծառայություն	77,734	75,109
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	44,020	66,154
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	91,265	41,755
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	48,104	35,330
Գովազդ և շուկայավարում	55,919	32,719
Մասնագիտական ծառայություններ	41,868	32,070
Հաղորդակցության և տեղեկատվական ծառայություններ	29,285	26,470
Զինոսհատուցվող հարկեր և տուրքեր՝ բացառությամբ շահութահարկի	34,387	17,762
Վարձակալության գծով ծախսեր	22,981	15,761
Այլ	36,972	26,274
	811,588	755,123

* 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա մաշվածության և ամորտիզացիայի կազմում ներառված 165,124 հազար դրամ գումարը (2020թ-ին՝ 131,990 հազար դրամ) վերաբերում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ամորտիզացիային ՖՀՄՍ 16-ի «Վարձակալություններ» պահանջների համաձայն (տես Ծանոթագրություն 14):

9 Շահութահարկի գծով ծախս

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ Վերահաշվարկված
Ընթացիկ հարկի գծով ծախս	-	(162,873)
Նախորդ ժամանակաշրջանում պակաս ներկայացված	(11,349)	-
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների փոփոխություններ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման հետևանքով	(1,000,882)	(798,694)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	(1,012,231)	(961,567)

2021թ-ին ընթացիկ հարկի կիրառելի դրույքաչափը կազմում է 18% (2020թ-ին՝ 18%):

Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2021թ. հազ. դրամ	%	2020թ. հազ. դրամ Վերահաշվարկված	%
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	5,812,386		5,491,793	
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	(1,046,229)	(18.0)	(988,523)	(18.0)
Նախորդ ժամանակաշրջանում պակաս ներկայացված	(11,349)	(0.2)	-	-
Հարկումից ազատված եկամուտ	45,347	0.8	26,956	0.5
	(1,012,231)	(17.4)	(961,567)	(17.3)

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև ներկայացված են ժամանակավոր տարբերությունների փոփոխությունները 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.
Ներդրումային արժեթղթեր	17,696		59,470	77,166
Հաճախորդներին տրված վարկեր	(1,800,938)	(1,038,600)	-	(2,839,538)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(175,308)	(49,206)	-	(224,514)
Այլ ակտիվներ	(922)	(4,068)	-	(4,990)
Վարձակալության գծով պարտավորություններ	185,641	56,422	-	242,063
Այլ պարտավորություններ	36,346	980	-	37,326
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	-	33,590	-	33,590
	(1,737,485)	(1,000,882)	59,470	(2,678,897)

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. Վերահաշ- վարկված	Շահույթում կամ վնասում ճանաչված Վերահաշ- վարկված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ. Վերահաշ- վարկված
Ներդրումային արժեթղթեր	-		17,696	17,696
Հաճախորդներին տրված վարկեր	(1,415,180)	(385,758)	-	(1,800,938)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	17,740	(193,048)	-	(175,308)
Այլ ակտիվներ	(1,346)	424	-	(922)
Վարձակալության գծով պարտավորություններ	(13,134)	198,775	-	185,641
Այլ պարտավորություններ	26,797	9,549	-	36,346
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	428,636	(428,636)	-	-
	(956,487)	(798,694)	17,696	(1,737,485)

(բ) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկ

Ստորև ներկայացված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաղադրիչներին վերաբերող հարկի հետևանքները 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	2021թ.			2020թ.		
	Գումարը նախքան հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը առանց հարկի	Գումարը նախքան հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը առանց հարկի
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն	(330,389)	59,470	(270,919)	(98,313)	17,696	(80,617)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	(330,389)	59,470	(270,919)	(98,313)	17,696	(80,617)

10 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Կանխիկ դրամական միջոցներ դրամարկղում	1,499,695	1,573,377
Նոստրո հաշիվներ բանկերում		
– Ba1-ից Ba3 վարկանիշով	157,725	16,009
– վարկանիշ չունեցող *	756,518	20,121
Ընդամենը նոստրո հաշիվներ բանկերում	914,243	36,130
Ընդամենը համախառն դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,413,938	1,609,507
Պարտքային կորստի պահուստ	(1,394)	(1,004)
Ընդամենը զուտ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,412,544	1,608,503

* Ղեկավարության գնահատմամբ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկանիշ չունեցող բանկերի վարկանիշը, որտեղ պահվում են նոստրո հաշիվները, մոտավորապես համապատասխանու է «Moody's» վարկանիշային գործակալության B2 վարկանիշին (2020թ. դեկտեմբերի 31-ին դրությամբ՝ B2):

Պարտքային որակը բացահայտելիս Կազմակերպությունն օգտագործում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշերը:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի բանկերում տեղաբաշխված միջոցներ (2020թ-ին նման միջոցներ չկային), որոնց մնացորդները գերազանցում են Կազմակերպության սեփական կապիտալի 10%-ը:

11 Ներդրումային արժեթղթեր

(ա) Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Կազմակերպության կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
– ՀՀ կառավարության արժեթղթեր	5,116,897	-
Ընդամենը Կազմակերպության կողմից պահվող արժեթղթեր	5,116,897	-
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված արժեթղթեր		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
– ՀՀ կառավարության արժեթղթեր	-	5,519,123
Ընդամենը վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված արժեթղթեր	-	5,519,123
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	5,116,897	5,519,123

Ներդրումային արժեթղթերն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և ունեն Ba1-ից Ba3 վարկանիշ ըստ «Moody's» վարկանիշային գործակալության:

Կազմակերպությունը վաճառում է արժեթղթեր հետզնման պայմանագրերի շրջանակում և ձեռք է բերում արժեթղթեր վերավաճառքի պայմանագրերի շրջանակում:

Հետզնման պայմանագրերի շրջանակում վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմերին, որի դիմաց Կազմակերպությունը ստանում է դրամական միջոցներ: Պայմանագրային կողմերը կարող են վերագրավադրել կամ վերավաճառվել այս ֆինանսական ակտիվները Կազմակերպության կողմից պարտագանցման բացակայության դեպքում, սակայն պայմանագրային կողմը պարտավոր է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ժամկետի ավարտին: Կազմակերպությունը որոշել է, որ պահպանում է այս արժեթղթերի հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, այդ իսկ պատճառով, չի ապահանջել դրանք: Ստացված դրամական միջոցները ճանաչվում են որպես ֆինանսական ակտիվ, իսկ գրավի ձեռքբերման գինը մարելու պարտականության գծով ճանաչվում է ֆինանսական պարտավորություն և ներառվում է «հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ» հոդվածում:

Այս գործարքներն իրականացվում են փոխատվության, արժեթղթերի փոխառության և փոխատվություն ստանդարտ գործառնություններին բնորոշ պայմաններով:

12 Հաճախորդներին տրված վարկեր

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ Վերահաշվարկված	2019թ. հազ. դրամ Վերահաշվարկված
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով չափվող վարկեր			
Ոսկու գրավով վարկեր	48,219,682	39,255,574	30,992,689
Հիփոթեքային վարկեր	5,460,079	5,444,495	4,878,349
Ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր	1,377,181	512,401	601,694
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	55,056,942	45,212,470	36,472,732
Իրավաբանական անձանց տրված ամորտիզացված արժեքով չափվող վարկեր			
Առևտրային վարկեր	1,074,644	4,497,819	3,905,148
Ընդամենը իրավաբանական անձանց տրված ամորտիզացված արժեքով չափվող վարկեր	1,074,644	4,497,819	3,905,148
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով չափվող համախառն վարկեր	56,131,586	49,710,289	40,377,880
Պարտքային կորստի պահուստ	(3,812,656)	(2,100,103)	(1,260,057)
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով չափվող գուտ վարկեր	52,318,930	47,610,186	39,117,823

(ա) Հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	31 դեկտեմբերի 2021թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	վարկեր
				հազ. դրամ
Ոսկու գրավով վարկեր				
– ոչ ժամկետանց	21,454,449	10,285,013	1,175,900	32,915,362
– մինչև 30 օր ժամկետանց	42,271	2,114,662	2,803,046	4,959,979
– 30-89 օր ժամկետանց	-	1,997,714	4,926,019	6,923,733
– 90-179 օր ժամկետանց	-	-	2,481,196	2,481,196
– 180-270 օր ժամկետանց	-	-	347,152	347,152
– ավելի քան 270 օր ժամկետանց	-	-	592,260	592,260
Ընդամենը համախառն ոսկու գրավով վարկեր	21,496,720	14,397,389	12,325,573	48,219,682
Պարտքային կորստի պահուստ	(277,385)	(988,681)	(2,294,014)	(3,560,080)
Ընդամենը զուտ ոսկու գրավով վարկեր	21,219,335	13,408,708	10,031,559	44,659,602
Հիփոթեքային և անշարժ գույքի գրավով այլ վարկեր				
– ոչ ժամկետանց	4,737,942	488,408	84,615	5,310,965
– մինչև 30 օր ժամկետանց	-	57,959	8,244	66,203
– 30-89 օր ժամկետանց	-	29,514	10,300	39,814
– 90-179 օր ժամկետանց	-	-	26,107	26,107
– 180-270 օր ժամկետանց	-	-	16,990	16,990
Ընդամենը համախառն հիփոթեքային և անշարժ գույքի գրավով այլ վարկեր	4,737,942	575,881	146,256	5,460,079
Պարտքային կորստի պահուստ	(19,446)	(64,688)	(36,992)	(121,126)
Ընդամենը զուտ հիփոթեքային և անշարժ գույքի գրավով այլ վարկեր	4,718,496	511,193	109,264	5,338,953
Առևտրային վարկեր				
– ոչ ժամկետանց	896,790	52,119	-	948,909
– մինչև 30 օր ժամկետանց	-	-	490	490
– 30-89 օր ժամկետանց	-	78,705	-	78,705
– 90-179 օր ժամկետանց	-	-	46,540	46,540
– 180-270 օր ժամկետանց	-	-	-	-
Ընդամենը համախառն առևտրային վարկեր	896,790	130,824	47,030	1,074,644
Պարտքային կորստի պահուստ	(12,081)	(7,045)	(29,445)	(48,571)
Ընդամենը զուտ առևտրային վարկեր	884,709	123,779	17,585	1,026,073

	31 դեկտեմբերի 2021թ.			Ընդամենը վարկեր հազ. դրամ
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	
Ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր				
- ոչ ժամկետանց	1,281,955	48,708	7,746	1,338,409
- մինչև 30 օր ժամկետանց	385	6,588	687	7,660
- 30-89 օր ժամկետանց	-	12,538	3,361	15,899
- 90-179 օր ժամկետանց	-	-	6,117	6,117
- 180-270 օր ժամկետանց	-	-	9,096	9,096
Ընդամենը համախառն ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր վարկեր	1,282,340	67,834	27,007	1,377,181
Պարտքային կորստի պահուստ	(53,022)	(17,115)	(12,742)	(82,879)
Ընդամենը գուտ ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր	1,229,318	50,719	14,265	1,294,302
Ընդամենը հաճախորդներին տրված համախառն վարկեր	28,413,792	15,171,928	12,545,866	56,131,586
Պարտքային կորստի պահուստ	(361,934)	(1,077,529)	(2,373,193)	(3,812,656)
Ընդամենը հաճախորդներին տրված գուտ վարկեր	28,051,858	14,094,399	10,172,673	52,318,930

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	31 դեկտեմբերի 2020թ. (Վերահաշվարկված)			Ընդամենը վարկեր հազ. դրամ
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	
Ոսկու գրավով վարկեր				
- ոչ ժամկետանց	19,046,629	2,638,757	4,389,560	26,074,946
- մինչև 30 օր ժամկետանց	66,342	2,571,871	1,557,065	4,195,278
- 30-89 օր ժամկետանց	-	3,175,098	3,436,529	6,611,627
- 90-179 օր ժամկետանց	-	-	1,904,768	1,904,768
- 180-270 օր ժամկետանց	-	-	146,872	146,872
- ավելի քան 270 օր ժամկետանց	-	-	322,083	322,083
Ընդամենը համախառն ոսկու գրավով վարկեր	19,112,971	8,385,726	11,756,877	39,255,574
Պարտքային կորստի պահուստ	(94,105)	(197,990)	(1,248,383)	(1,540,478)
Ընդամենը գուտ ոսկու գրավով վարկեր	19,018,866	8,187,736	10,508,494	37,715,096
Հիփոթեքային և անշարժ գույքի գրավով այլ վարկեր				
- ոչ ժամկետանց	4,759,907	334,557	59,659	5,154,123
- մինչև 30 օր ժամկետանց	-	19,185	1,677	20,862
- 30-89 օր ժամկետանց	-	72,919	-	72,919
- 90-179 օր ժամկետանց	-	-	46,863	46,863
- 180-270 օր ժամկետանց	-	-	149,727	149,727
Ընդամենը համախառն հիփոթեքային և անշարժ գույքի գրավով այլ վարկեր	4,759,907	426,661	257,926	5,444,494
Պարտքային կորստի պահուստ	(67,314)	(106,089)	(91,311)	(264,714)
Ընդամենը գուտ հիփոթեքային և անշարժ գույքի գրավով այլ վարկեր	4,692,593	320,572	166,615	5,179,780

31 դեկտեմբերի 2020թ. (Վերահաշվարկված)

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Առևտրային վարկեր				
– ոչ ժամկետանց	3,265,533	175,645	229,448	3,670,626
– մինչև 30 օր ժամկետանց	1,921	173,051	54,034	229,006
– 30-89 օր ժամկետանց	-	301,772	156,405	458,177
– 90-179 օր ժամկետանց	-	-	90,736	90,736
– 180-270 օր ժամկետանց	-	-	49,274	49,274
Ընդամենը համախառն առևտրային վարկեր	3,267,454	650,468	579,897	4,497,819
Պարտքային կորստի պահուստ	(46,284)	(47,165)	(172,972)	(266,421)
Ընդամենը զուտ առևտրային վարկեր	3,221,170	603,303	406,925	4,231,398
Ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր				
– ոչ ժամկետանց	436,855	30,655	9,316	476,826
– մինչև 30 օր ժամկետանց	868	12,331	1,707	14,906
– 30-89 օր ժամկետանց	-	13,599	1,704	15,303
– 90-179 օր ժամկետանց	-	-	341	341
– 180-270 օր ժամկետանց	-	-	5,026	5,026
Ընդամենը համախառն ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր	437,723	56,585	18,094	512,402
Պարտքային կորստի պահուստ	(9,953)	(6,789)	(11,748)	(28,490)
Ընդամենը զուտ ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր	427,770	49,796	6,346	483,912
Ընդամենը հաճախորդներին տրված համախառն վարկեր	27,578,055	9,519,440	12,612,794	49,710,289
Պարտքային կորստի պահուստ	(217,656)	(358,033)	(1,524,414)	(2,100,103)
Ընդամենը հաճախորդներին տրված զուտ վարկեր	27,360,399	9,161,407	11,088,380	47,610,186

(բ) Պարտքային կորստի պահուստի գնահատման համար կիրառված հիմնական ենթադրություններ և դատողություններ

Պարտքային կորստի պահուստի գնահատման համար կիրառված հիմնական ենթադրությունները և դատողությունները ներկայացված են Ծանոթագրություն 21 (բ) կետում:

(գ) Գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների վերլուծություն

(i) Հաճախորդներին տրված վարկեր

Հաճախորդներին տրված վարկերը ենթակա են պարտքային առումով գնահատման և արժեզրկման ստուգման անհատական հիմունքով: Հաճախորդի ընդհանուր վճարունակությունը վերջինիս տրամադրված վարկի պարտքային որակի կարևոր ցուցանիշ է: Այնուամենայնիվ, գրավը տալիս է լրացուցիչ ապահովվածություն, և Կազմակերպությունը որպես կանոն գրավ է պահանջում վարկատուներից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների (առանց արժեզրկման) վերաբերյալ՝ ըստ գրավի տեսակների:

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ Վերահաշվարկված
Ոսկի	34,628,525	30,423,024
Անշարժ գույք	6,230,510	4,940,928
Անձնական երաշխավորություններ	877,716	823,204
Փոխադրամիջոցներ	19,378	97,607
Այլ գրավ	127,197	77,748
Առանց գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների	262,931	159,066
Ընդամենը հաճախորդներին տված՝ արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	42,146,257	36,521,577
Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր		
Ոսկե իրեր	10,031,559	10,915,646
Այլ գրավ	141,114	172,963
Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր	10,172,673	11,088,609
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	52,318,930	47,610,186

Ղեկավարության գնահատմամբ գրավի իրական արժեքը, ներառյալ 3-րդ փուլ դասված վարկերի համար, պակաս չէ վարկերի հաշվեկշռային արժեքներից:

(դ) Գրավադրված ակտիվներ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,125,629 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 985,747 հազար դրամ) ծառայում են որպես գրավ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի և փոխառությունների համար:

(ե) Խոշոր ակտիվներ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի փոխառուներ կամ կապակցված փոխառուների խմբեր (2020թ-ին՝ բացակայում էին), որոնց վարկերի մնացորդները գերազանցում են Կազմակերպության սեփական կապիտալի 10%-ը:

(զ) Հաճախորդներին տրված վարկերի աշխարհագրական վերլուծություն

Վարկերը տրվել են Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին:

(է) Վարկերի մարման ժամկետներ

Վարկային պորտֆելը կազմող վարկերի մարման ժամկետների վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև պայմանագրով նախատեսված վարկերի մարման ժամկետը մնացած ժամանակահատվածը:

13 Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Ծեփեր	Վարձակալ- ված գույքի բարելավում	Համակար- գիչներ և հաղորդակ- ցության սարքավորում- ներ	Փոխադրա- միջոցներ	Տնտեսական գույք և այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	130,130	91,223	329,981	168,167	298,319	1,017,820
Ավելացումներ	-	3,147	40,569	-	101,699	145,415
Օտարումներ/դուրսգրումներ	-	(699)	-	-	(1,867)	(2,566)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	130,130	93,671	370,550	168,167	398,151	1,160,669
Մաշվածություն						
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	32,588	22,385	264,697	144,033	143,415	607,118
Տարվա մաշվածություն	6,520	5,090	59,469	6,933	36,994	115,006
Օտարումներ/դուրսգրումներ	-	(313)	144	-	(1,166)	(1,335)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	39,108	27,162	324,310	150,966	179,243	720,789
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2021թ.	91,022	66,509	46,240	17,201	218,908	439,880
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	130,130	91,223	249,944	148,947	254,712	874,956
Ավելացումներ	-	-	87,627	19,220	48,428	155,275
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	(7,590)	-	(4,821)	(12,411)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	130,130	91,223	329,981	168,167	298,319	1,017,820
Մաշվածություն						
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	26,235	17,981	221,235	136,965	114,907	517,323
Տարվա մաշվածություն	6,353	4,404	50,097	7,068	32,413	100,335
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	(6,635)	-	(3,905)	(10,540)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	32,588	22,385	264,697	144,033	143,415	607,118
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2020թ.	97,542	68,838	65,284	24,134	154,904	410,702

14 Վարձակալություն

Կազմակերպությունը վարձակալում է ակտիվներ, մասնավորապես, հաճախորդների սպասարկման կենտրոնների տարածքները, որոնց վարձակալության ժամկետը որպես կանոն կազմում է 5-ից 10 տարի: Ստորև ներկայացված է այն վարձակալությունների մասին տեղեկատվությունը, որոնց շրջանակում Կազմակերպությունը հանդես է գալիս որպես վարձակալ:

(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	973,936	749,993
Ավելացումներ օգտագործման իրավունքի ձևով ակտիվներին	438,489	355,933
Ժամանակաշրջանի մաշվածության գումար	(165,124)	(131,990)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	1,247,301	973,936

(բ) Վարձակալության գծով պարտավորություններ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	1,031,337	775,582
Տոկոսային ծախս	111,186	79,699
Ավելացումներ	438,489	355,933
Վարձավճարներ	(236,470)	(179,841)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	1,344,542	1,031,337

(գ) Ծահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն	164,690	131,990
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ	111,186	79,699

(դ) Գրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Ընդամենը գրամական միջոցների արտահոսք վարձակալությունների գծով		
Հիմնական գումարի վճարում	125,284	100,142
Տոկոսային ծախսի վճարում	111,186	79,699

15 Այլ ակտիվներ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Այլ դերիտորական պարտքեր	143,042	37,473
Պարտքային կորստի պահուստ	(3,785)	(2,067)
Ընդամենը զուտ այլ ֆինանսական ակտիվներ	139,257	35,406
Առգրավված ակտիվներ	121,945	133,973
Կանխավճարներ	129,219	44,870
Այլ	28,582	20,277
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	279,746	199,120
Ընդամենը այլ ակտիվներ	419,003	234,526

16 Այլ փոխառություններ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Բաժնետերերից և այլ կապակցված կողմերից ստացված փոխառություններ	25,797,989	26,050,171
Այլ փոխառություններ	358,713	356,038
Ընդամենը այլ փոխառություններ	26,156,702	26,406,209

Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	26,406,209	17,988,955
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Ստացված այլ փոխառություններ	42,219,867	21,635,719
Այլ փոխառությունների մարում	(41,433,600)	(13,973,569)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	786,267	7,662,150
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	(1,091,133)	337,795
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	2,132,418	1,907,997
Վճարված տոկոսներ	(2,077,059)	(1,490,688)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	26,156,702	26,406,209

17 Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Բանկերից ստացված վարկեր	7,301,491	2,408,331
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ	1,475,474	784,828
Ընդամենը ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ	8,776,965	3,193,158

Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	3,193,158	8,753,592
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ	24,186,394	16,316,998
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի և փոխառությունների մարում	(18,544,079)	(22,173,909)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	5,642,315	(5,856,911)
Արտաբյուջայի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	(81,044)	307,863
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	359,880	370,127
Վճարված տոկոսներ	(337,344)	(381,513)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	8,776,965	3,193,158

18 Թողարկված պարտքային արժեթղթեր

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Թողարկված պարտքային արժեթղթեր	413,487	450,032

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը թողարկել և տեղաբաշխել է ԱՄՆ դոլարով արտահայտված պարտքային արժեթղթեր՝ 835 հազար ԱՄՆ դոլար անվանական արժեքով (2020թ-ին՝ 835 հազար ԱՄՆ դոլար անվանական արժեքով):

Կազմակերպության կողմից թողարկված պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	450,032	599,148
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Թողարկված պարտքային արժեթղթերի վաճառք	-	450,311
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	-	(626,620)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	-	(176,309)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	(36,265)	33,636
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	27,351	37,108
Վճարված տոկոսներ	(27,631)	(43,550)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	413,487	450,032

19 Այլ պարտավորություններ

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Այլ ֆինանսական պարտավորություններ	255,862	201,093
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	255,862	201,093
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	210,054	219,452
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	72,289	57,398
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	282,343	276,850
Ընդամենը այլ պարտավորություններ	538,205	477,943

20 Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 1,400,000 սովորական բաժնետոմսից (2020թ-ին՝ 1,400,000): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 5,000 դրամ (2020թ-ին՝ 5,000 դրամ):

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Կազմակերպության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային գուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապահովման արժեքը կամ արժեզրկումը:

(զ) Ճահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Կազմակերպության չբաշխված շահույթի առավելագույն չափով:

2021թ. և 2020թ. ընթացքում շահաբաժիններ չեն հայտարարել:

21 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի վարկավորման գործունեության համար և կազմում է Կազմակերպության գործառնությունների կենսական տարրը: Ծուկայական, պարտքային, և իրացվելիության ռիսկերն այն հիմնական (նշանակալի) ռիսկերն են, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող արտադրանքն ու ծառայությունների և ընդունված լավագույն պրակտիկան արտացոլելու նպատակով:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման և ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Կազմակերպության գործունեության իրականացումն ապահովելու համար:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում և վերահսկվում են Վարչության կողմից:

Կազմակերպության ներքին փաստաթղթերի համաձայն՝ ներքին աուդիտի բաժինը հաճախ պատրաստում են Կազմակերպության նշանակալի ռիսկերի կառավարմանն անդրադարձող հաշվետվություններ: Հաշվետվությունները ներառում են դիտարկումներ Կազմակերպության ընթացակարգերի և մեթոդաբանության արդյունավետության գնահատման վերաբերյալ և առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Կազմակերպության ներսում: Կազմակերպությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը:

(բ) Ֆինանսական ռիսկերի ուսումնասիրություն

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ֆինանսական ռիսկերին Կազմակերպության ենթարկվածության վերաբերյալ:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Կազմակերպությունում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված

պայմանագրային հանձնառությունների համար), ներառյալ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ պարտքային ռիսկին ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ գործիքների, որոնց գծով Կազմակերպությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, շարունակական հսկողության ընթացակարգերը:

Պարտքային ռիսկ. ակնկալվող պարտքային կորստների գումարները

Արժեզրկման գնահատման համար օգտագործվող ելակետային տվյալներ, ենթադրություններ և մեթոդներ

Տես հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Ծանոթագրություն 4 (ե) (iv) կետում:

Պարտքային ռիսկի նշանակալի ան

Որոշելու համար, թե արդյոք ֆինանսական գործիքի գծով պարտագանցման ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, Կազմակերպությունը դիտարկում է ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Կազմակերպության անցյալ ժամանակաշրջանների փորձի, վարկային որակի փորձագետների գնահատման և ապագայամետ տեղեկատվության վրա հիմնված վերլուծությունը:

Գնահատման նպատակն է պարզել, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի ան՝ համեմատելով հետևյալ ցուցանիշները.

- պարտագանցման տեղի ունենալու հավանականությունն ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում՝ հաշվետու ամսաթվի դրությամբ,
- պարտագանցման տեղի ունենալու հավանականությունն ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում ժամանակի տվյալ պահի համար, որը գնահատվել է պարտքային ռիսկին ենթարկվող գործիքի սկզբնական ճանաչման պահին (ճշգրտված վաղաժամ մարումների ակնկալիքների փոփոխությունների մասով՝ կիրառելի լինելու դեպքում):

Կազմակերպությունն 30 օր ժամկետանցությունն օգտագործում է որպես սահմանափակիչ, որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի ան:

Պարտագանցման տեղի ունենալու հավանականության ժամկետային կառուցվածքի ստեղծում

Ժամկետանց օրերն օգտագործվում են որպես հիմնական ելակետային տվյալներ պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների գծով պարտագանցման տեղի ունենալու հավանականության ժամկետային կառուցվածքը ստեղծելիս միգրացիայի մատրիցների Մարկովի մոդելում: Միգրացիայի մատրիցները կառուցվում են նախորդ 12 ամիսների տվյալների հիման վրա:

Պարտքային ռիսկի նշանակալի անի որոշում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի ան սկզբնական ճանաչումից ի վեր: Պարտքային ռիսկի անի նշանակալի լինելը որոշելիս դիտարկվում են ֆինանսական գործիքի և վարկառուի բնութագրերը և աշխարհագրական տարածաշրջանը: Նշանակալիության չափանիշները տարբեր են փոխատվության տարբեր տեսակների համար:

Սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի աճը կարող է համարվել նշանակալի նաև այն դեպքերում, երբ դրա այդ մասին են վկայում Կազմակերպության պարտքային ռիսկի կառավարման գործընթացների հետ կապված որակական ցուցանիշները, որոնք այլ պարագայում կարող են ժամանակին ամբողջական առումով չարտացոլվել քանակական վերլուծության շրջանակում: Սա վերաբերում է պարտքային ռիսկին ենթարկվող այն գործիքներին, որոնք բավարարում են բարձրացված ռիսկի որոշ չափանիշներին, որոնցից է հատուկ ուշադրության ցանկում ներառվելը: Նման որակական գործոնները հիմնված են փորձագետների դատողությունների և անցյալ ժամանակաշրջանների համապատասխան փորձի վրա:

Կազմակերպությունը պարտքային ռիսկի նշանակալի աճի մասին վկայող սահմանափակիչ է համարում ավելի քան 30 օր ժամկետանցությունը՝ հաճախորդներին տրված վարկերի համար և 1 օր ժամկետանցությունը՝ բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառությունների և ներդրումային արժեթղթերի համար: Ժամկետանց օրերի քանակը որոշվում է հաշվելով օրերն այն առաջին օրվանից, երբ վճարումն ամբողջությամբ չի ստացվել: Վճարում կատարելու ամսաթվերը որոշվում են առանց հաշվի առնելու արտոնյալ ժամանակահատվածը, որը կարող է տրամադրվել վարկառուին:

Եթե գոյություն ունի վկայություն, որ այլևս չկա պարտքային ռիսկի նշանակալի աճ ի համեմատություն սկզբնական ճանաչման, գործիքի գծով կորստի պահուստը կրկին չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների չափով: Վարկի պայմանագրային պայմանների փոփոխության դեպքում ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչման չափանիշների այլևս բավարարված չլինելու ապացույց կարող է հանդիսանալ արդիական տեղեկատվությունը, որ առկա է վճարումները ժամանակին կատարելու պատմություն՝ փոփոխված պայմանագրային պայմաններին համապատասխան:

Պարտագանցման սահմանում

Կազմակերպությունը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտագանցում, եթե՝

- հավանական չէ, որ վարկառու ամբողջությամբ կկատարի Կազմակերպության նկատմամբ ստանձնած իր վարկային պարտավորությունները, եթե Կազմակերպությունը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (առկայության դեպքում),
- Կազմակերպության նկատմամբ վարկառուի նշանակալի վարկային պարտավորություններից որևէ մեկն ավելի քան 90 օր ժամկետանց է՝ հաճախորդներին տրված վարկերի համար և 30 օր ժամկետանց է՝ բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառությունների և ներդրումային արժեթղթերի համար,
- հավանական է դառնում, որ ակտիվի պայմանները կվերանայվեն վարկառուի սնանկության արդյունքում՝ վարկային պարտավորությունները կատարելու վարկառուի անկարողության պատճառով:

Վարկառուի հետ կապված պարտագանցման տեղի ունենալը գնահատելիս՝ Կազմակերպությունը դիտարկում է հետևյալը՝

- որակական ցուցանիշները,
- քանակական ցուցանիշները և
- Կազմակերպության ներսում մշակված և արտաքին աղբյուրներից ստացված տվյալները:

Ելակետային տվյալները, որոնք օգտագործվում են ֆինանսական գործիքի գծով պարտագանցման տեղի ունենալը գնահատելու համար, և դրանց նշանակալիությունը կարող են փոփոխվել ժամանակի ընթացքում՝ հանգամանքների փոփոխություններն արտացոլելու համար:

Ապագայամետ տեղեկատվության ներառում

Կազմակերպությունն օգտագործում է ապագայամետ տեղեկատվությունը գնահատելու համար, թե արդյոք տեղի է ունեցել գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, և ակնկալվող պարտքային կորուստները չափելու համար: Ապագայամետ տեղեկատվությունը գնահատելիս Կազմակերպությունն օգտագործում է փորձագետների դատողությունները:

Կազմակերպությունը որոշել և փաստաթղթավորել է պարտքային ռիսկի և պարտքային կորուստների հիմնական խթանները ֆինանսական գործիքների յուրաքանչյուր պորտֆելի համար և, օգտագործելով անցյալ ժամանակաշրջանների տվյալների վերլուծությունը, գնահատել է մակրոտնտեսական փոփոխականի և պարտքային ռիսկի ու պարտքային կորուստների միջև հարաբերությունները: Այդ հիմնական խթանն արտարժույթի փոփոխություններն են:

Փոփոխված ֆինանսական ակտիվներ

Վարկի պայմանագրային պայմանները կարող են փոփոխվել մի շարք պատճառներից ելնելով, ներառյալ շուկայական պայմանների փոփոխությունը, հաճախորդների պահպանումը և այլ գործոնները, որոնք կապված չեն հաճախորդի վճարունակության ներկայիս կամ հնարավոր վատթարացման հետ: Գոյություն ունեցող վարկը, որի պայմանները փոփոխվել են, կարող է ապահովանալվել, և վերաբանակցված վարկը կարող է ճանաչվել որպես նոր վարկ իրական արժեքով՝ Ծանոթագրություն 4 (ե) (iii) կետում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, և փոփոխությունը չի հանգեցնում ապահովանաչման, որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, համեմատվում են՝

- պարտագանցման տեղի ունենալու հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում հաշվետու ամսաթվի դրությամբ՝ ելնելով փոփոխված պայմաններից,
- պարտագանցման տեղի ունենալու հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում, որը գնահատվում է սկզբնական ճանաչման պահին առկա տվյալների և սկզբնական պայմանագրային պայմանների հիման վրա:

Եթե փոփոխությունը հանգեցնում է ապահովանաչման, ճանաչվում է նոր վարկ և դասվում 1-ին փուլին (ենթադրելով, որ այն պարտքային առումով արժեզրկված չէ այդ պահին):

Կազմակերպությունը վերաբանակցում է ֆինանսական դժվարություններ ունեցող հաճախորդների վարկերի պայմանները (վարկային պայմանագրի պայմանների վերանայում)՝ նպատակ ունենալով առավելագույնի հասցնել պարտքի վերադարձման հնարավորությունները և նվազագույնի հասցնել պարտագանցման ռիսկը: Վարկային պայմանագրի պայմանների վերանայման Կազմակերպության քաղաքականության համաձայն՝ վարկի պայմանները վերանայվում են ընտրանքային կարգով, եթե փոխառուներ կա պահին չի կատարել պարտքի գծով իր պարտականությունները կամ գոյություն ունի պարտագանցման մեծ ռիսկ, եթե գոյություն ունի վկայություն, որ վարկառուն ձեռնարկել է բոլոր ողջամիտ քայլերը մարումները սկզբնական պայմանագրային պայմանների համաձայն կատարելու համար և ակնկալվում է, որ կկարողանա կատարել իր պարտականությունները վերանայված պայմաններով:

Պայմանների վերանայումը սովորաբար ներառում է մարման ժամկետի երկարաձգումը և տոկոսների վճարման ժամկետների փոփոխությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս որպես առանցքային ելակետային տվյալներ հանդես են գալիս հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքները.

- պարտագանցման տեղի ունենալու հավանականությունը,
- կորուստը պարտագանցման դեպքում,
- պարտքի գումարը պարտագանցման պահին:

1-ին փուլի գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են բազմապատկելով 12-ամսյա պարտագանցման տեղի ունենալու հավանականությունը պարտագանցման դեպքում առաջացող կորստի գումարով և պարտքի գումարով պարտագանցման պահին: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են բազմապատկելով ամբողջ ժամկետի համար պարտագանցման տեղի ունենալու հավանականությունը պարտագանցման դեպքում առաջացող կորստի գումարով և պարտքի գումարով պարտագանցման պահին:

Պարտագանգման տեղի ունենալու հավանականության գնահատման մեթոդաբանությունը ներկայացված է վերը՝ «Պարտագանգման տեղի ունենալու հավանականության ժամկետային կառուցվածքի ստեղծում» բաժնում:

Կազմակերպությունը պարտագանգման դեպքում առաջացող կորուստը գնահատում է հիմք ընդունելով պարտականությունները չկատարած պայմանագրային կողմերին ներկայացված պահանջների արդյունքում միջոցների վերադարձման ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը: Պարտագանգման դեպքում առաջացող կորուստի գնահատման մոդելներում դիտարկվում են պահանջի կառուցվածքը, գրավը և ֆինանսական ակտիվի անբաժանելի մասը կազմող ցանկացած գրավի փոխհատուցման ծախսումները: Ոսկու գրավով ապահովված վարկերի համար վարկի գումար/գրավի արժեք հարաբերակցությունն առանցքային ցուցանիշ է պարտագանգման դեպքում առաջացող կորուստը որոշելու համար:

Պարտքի գումարը պարտագանգման պահին իրենից ներկայացնում է պարտքի ակնկալվող գումարը պարտագանգման դեպքում: Կազմակերպությունը պարտագանգման պահին պարտքի գումարը հաշվարկում է հիմք ընդունելով պայմանագրային կողմի պարտքի ընթացիկ գումարը և պայմանագրով թույլատրվող և մաշվածության արդյունքում այդ գումարի հնարավոր փոփոխությունները: Ֆինանսական ակտիվի համար պարտքի գումարը պարտագանգման պահին իրենից ներկայացնում է վերջինիս համախառն հաշվեկշռային արժեքը պարտագանգման պահին: Փոխատվության հանձնառությունների համար պարտքի գումարը պարտագանգման պահին իրենից ներկայացնում է հնարավոր ապագա գումարները, որոնք կարող են օգտագործվել պայմանագրի շրջանակում, որոնք գնահատվում են անցյալ ժամանակաշրջանների դիտարկումների և ապագայամետ տեղեկատվության հիման վրա: Ֆինանսական երաշխավորությունների համար պարտքի գումարը պարտագանգման պահին իրենից ներկայացնում է վճարման ենթակա գումարը ֆինանսական երաշխավորության կատարման պահին:

Ինչպես նշված է վերը և պայմանով, որ 1-ին փուլի ֆինանսական ակտիվների համար առավելագույնս կօգտագործվի պարտագանգման հավանականության 12-ամսյա ցուցանիշը, Կազմակերպությունն ակնկալվող պարտքային կորուստները չափում է հաշվի առնելով պարտագանգման ռիսկն այն առավելագույն պայմանագրային ժամանակահատվածում (ներառյալ երկարաձգման բոլոր հնարավորությունները վարկառուի համար), որի ընթացքում այն ենթարկվում է պարտքային ռիսկին, եթե նույնիսկ Կազմակերպությունը դիտարկում է ավելի երկար ժամանակահատված պարտքային ռիսկի կառավարման նպատակների համար: Առավելագույն պայմանագրային ժամանակահատվածը տևում է մինչև այն ամսաթիվը, երբ Կազմակերպությունն իրավունք ունի պահանջել փոխատվության մարումը կամ դադարեցնել փոխատվության հանձնառությունը կամ երաշխավորությունը:

Եթե ցուցանիշի մոդելավորումն իրականացվում է խմբային հիմունքով, ֆինանսական գործիքները խմբավորվում են ըստ ռիսկի ընդհանրական բնութագրերի, որոնք ներառում են՝

- գործիքի տեսակը,
- պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակները,
- գրավի տեսակը:

Խմբավորումները պետք է կանոնավոր հիմունքով վերանայվեն՝ առանձին խմբերի շրջանակում պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների միատեսակ լինելն ապահովելու համար:

Այն պորտֆելների համար, որոնց վերաբերյալ Կազմակերպությունն ունի անցյալ ժամանակաշրջանների սահմանափակ տվյալներ, ներքին աղբյուրներից հասանելի տեղեկատվությունը լրացնելու համար օգտագործվում է արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվությունը:

Ստորև ներկայացված են այն պորտֆելները, որոնց համար արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվությունն օգտագործվել է որպես նշանակալի ելակետային տվյալ ակնկալվող պարտքային կորուստները չափելիս:

հազ. դրամ	Պարտքային ռիսկին ենթարկվածություն	Օգտագործված արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվություն	
		Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն	Կորուստը պարտազանցման դեպքում
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	5,116,897	«S&P» պարտազանցման վերլուծության հաշվետվություն	«Moody's» պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	914,243	«S&P» պարտազանցման վերլուծության հաշվետվություն	«Moody's» պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն
Այլ ֆինանսական ակտիվներ	139,257	«S&P» պարտազանցման վերլուծության հաշվետվություն	«Moody's» պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն

Պարտքային ռիսկի կենտրոնացում

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ Վերահաշվարկված
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	914,243	35,126
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	5,116,897	5,519,123
Հանախորդներին տրված վարկեր	52,318,930	47,610,186
Այլ ֆինանսական ակտիվներ	139,257	35,406
Ընդհանուր առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին	58,489,327	53,199,841

Որպես կանոն գրավ չի պահանջվում արժեթղթերում ներդրումների գծով պահանջների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետզնման և արժեթղթերի փոխառության գոծառնությունների մաս:

Հանախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով պարտքային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 12-ում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության պայմանագրերը: Համանման ֆինանսական գործիքները ներառում են վաճառքի և հետգնման պայմանագրերը:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չկային հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորություններ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		
		ճանաչված ֆին. պարտավորության/ակտիվի համախառն գումար	ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների գուտ գումար	Ֆինանսական գործիքներ	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	Զուտ գումար
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(5,275,501)	-	(5,275,501)	5,519,123	-	243,612
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(5,275,501)	-	(5,275,501)	5,519,123	-	243,612

Վերը նշված աղյուսակում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Ծուկայական ռիսկ

Ծուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Ծուկայական ռիսկը ներառում է արժույթային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Ծուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Ծուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Կազմակերպությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա շուկայում գերակշռող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել կորուստների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխությունների դեպքում:

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքի հսկողության միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների ճեղքվածքի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2021թ. ԱՎՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	112,925	-	-	-	-	2,299,619	2,412,544
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	87,266	151,882	227,818	1,968,274	2,681,657	-	5,116,897
Հանախորդներին տրված վարկեր	2,198,903	1,361,180	6,756,666	38,663,355	3,338,826	-	52,318,930
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	139,257	139,257
	2,399,094	1,513,062	6,984,484	40,631,629	6,020,483	2,438,876	59,987,628
ՊԱՐՏԱՎՈՐՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐ							
Այլ փոխառություններ	560	907,247	18,326	16,484,433	8,746,136	-	26,156,702
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ	171,656	155,421	3,449,246	4,039,340	961,302	-	8,776,965
Թողարկված պարտքային արժեթղթեր	12,566	-	-	400,922	-	-	413,487
Վարձակալության գծով պարտավորություններ	47,581	38,038	79,200	663,340	516,383	-	1,344,542
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	-	255,862	255,862
	232,363	1,100,706	3,546,772	21,588,035	10,223,821	255,862	36,947,558
	2,166,731	412,356	3,437,712	19,043,595	(4,203,338)	2,183,014	23,040,070

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2020թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35,126	-	-	-	-	1,573,377	1,608,503
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	87,424	152,449	229,705	2,049,679	2,999,866	-	5,519,123
Հաճախորդներին տրված վարկեր	1,925,677	913,147	3,404,138	38,385,968	2,981,256	-	47,610,186
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	35,406	35,406
	2,048,227	1,065,596	3,633,843	40,435,647	5,981,122	1,608,783	54,773,218
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Այլ փոխառություններ	9,187	17,814	125,734	12,452,993	13,800,481	-	26,406,209
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	5,275,501	-	-	-	-	-	5,275,501
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ	378,894	9,418	547,052	1,807,236	450,559	-	3,193,158
Թողարկված պարտքային արժեթղթեր	13,677	-	-	436,356	-	-	450,033
Վարձակալության գծով պարտավորություններ	24,421	45,049	69,470	533,899	358,539	-	1,031,377
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	-	201,093	201,093
	5,701,680	72,280	742,256	15,230,485	14,609,579	201,093	36,557,371
	(3,653,453)	993,316	2,891,587	25,205,162	(8,628,457)	1,407,690	18,215,847

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2021թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			2020թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արժույթ
	Տոկոսակիր ակտիվներ					
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	8.54%	-	-	8.54%	-	-
Հանախորդներին տրված վարկեր	25.6%	12.6%	-	22.9%	12.6%	-
Տոկոսակիր պարտավորություններ						
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	6.50%	-	-	6.5%	-
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ	9.48%	7.07%	-	6.80%	7.04%	-
Այլ փոխառություններ	9.88%	7.00%	-	7.45%	7.02%	-
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	-	-	-	5.75%	-	-

Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ գուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (ներառյալ հարկերը) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) գուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի հիման վրա:

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
100 բկ գուգահեռ նվազում	(21,107)	183,240
100 բկ գուգահեռ աճ	21,107	(183,240)

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունների արդյունքում՝ պայմանավորված տոկոսադրույքների փոփոխություններով, որն իրականացվել է 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	<u>2021թ.</u>	<u>2020թ.</u>
	<u>Մեփական կապիտալ հազ. դրամ</u>	<u>Մեփական կապիտալ հազ. դրամ</u>
100 բկ զուգահեռ նվազում	262,216	47,133
100 բկ զուգահեռ աճ	(262,216)	(47,133)

(ii) Արժույթային ռիսկ

Կազմակերպությունն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժույթային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	<u>ՀՀ դրամ հազ. դրամ</u>	<u>ԱՄՆ դոլար հազ. դրամ</u>	<u>Եվրո հազ. դրամ</u>	<u>Այլ արժույթ հազ. դրամ</u>	<u>Ընդամենը հազ. դրամ</u>
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,609,426	162,804	93,406	546,908	2,412,544
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	5,116,897	-	-	-	5,116,897
Հանախորդներին տրված վարկեր	44,230,469	8,088,461	-	-	52,318,930
Այլ ֆինանսական ակտիվներ	54,185	-	423	84,649	139,257
Ընդամենը ակտիվներ	51,010,977	8,251,265	93,829	631,557	59,987,628
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Այլ փոխառություններ	9,825,442	16,331,260	-	-	26,156,702
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ	2,808,658	5,968,307	-	-	8,776,965
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	413,487	-	-	413,487
Վարձակալության գծով պարտավորություններ	1,344,542	-	-	-	1,344,542
Այլ ֆինանսական պարտավորություններ	255,767	91	-	3	255,861
Ընդամենը պարտավորություններ	14,234,409	22,713,145	-	3	36,947,557
Չուտ դիրքը	36,776,568	(14,461,880)	93,829	631,554	23,040,071

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ հազ. դրամ	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,164,361	228,687	97,993	117,462	1,608,503
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	5,519,123	-	-	-	5,519,123
Հանախորդներին տրված վարկեր	39,372,135	8,238,051	-	-	47,610,186
Այլ ֆինանսական ակտիվներ	34,815	591	-	-	35,406
Ընդամենը ակտիվներ	46,090,434	8,467,329	97,993	117,462	54,773,218
ՊԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Այլ փոխառություններ	19,966,102	6,440,110	-	-	26,406,212
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	5,275,501	-	-	-	5,275,501
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ	780,495	2,412,664	-	-	3,193,159
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	450,032	-	-	450,032
Վարձակալության գծով պարտավորություններ	1,031,337	-	-	-	1,031,337
Այլ ֆինանսական պարտավորություններ	201,019	74	-	-	201,093
Ընդամենը պարտավորություններ	27,254,454	9,302,880	-	-	36,557,334
Չուտ դիրքը	18,835,980	(835,551)	97,993	117,462	18,215,884

Ստորև աղյուսակում ներկայացված 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս հաշվի չեն առնվել հարկերը և հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Կազմակերպությունը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով	(1,446,188)	(91,470)
ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով	9,383	9,799

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Կազմակերպությունը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով:

Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Կազմակերպության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Կազմակերպությունը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը կազմված է թողարկված պարտքային արժեթղթերից, այլ կազմակերպություններից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերից, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդներից, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելներ՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չզեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չզեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների գծով չզեղչված դրամական հոսքերի վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ներհոսքի (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Այլ փոխառություններ	437	155	909,046	25,574	34,866,793	35,802,005	26,156,702
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ	68,761	137,706	211,265	3,735,181	6,009,678	10,162,591	8,776,965
Թողարկված պարտքային արժեթղթեր	13,208	-	-	12,994	427,119	453,321	413,487
Վարձակալության գծով պարտավորություններ	22,542	45,987	68,981	137,961	1,588,476	1,863,947	1,344,542
Այլ ֆինանսական պարտավորություններ	255,862	-	-	-	-	255,862	255,862
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	360,373	183,693	280,246	3,886,136	8,025,273	12,735,721	10,790,856

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների գծով չզեղչված դրամական հոսքերի վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ներհոսքի (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Այլ փոխառություններ	4,870	18,013	63,320	69,461	40,218,780	40,374,444	26,406,209
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	5,285,412	-	-	-	-	5,285,412	5,275,501
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ	8,111	376,884	10,005	588,364	2,591,392	3,574,756	3,193,158
Թողարկված պարտքային արժեթղթեր	777	-	-	14,143	493,401	508,321	450,032
Վարձակալության գծով պարտավորություններ	16,000	32,000	48,000	96,000	1,233,257	1,425,257	1,031,337
Այլ ֆինանսական պարտավորություններ	201,093	-	-	-	-	201,093	201,093
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	5,516,263	426,897	121,325	767,968	44,536,830	51,369,283	36,557,330

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում նախատեսված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,412,544	-	-	-	-	-	-	2,412,544
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	87,266	379,699	1,968,274	2,681,658	-	-	5,116,897
Հանախորդներին տրված վարկեր	569,811	638,889	8,117,846	38,663,355	3,338,827	-	990,202	52,318,930
Հիմնական միջոցներ	-	-	-	-	-	439,880	-	439,880
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	-	1,247,301	-	1,247,301
Ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	31,534	-	31,534
Այլ ակտիվներ	139,257	-	-	-	-	286,658	-	425,915
Ընդամենը ակտիվներ	3,121,612	726,155	8,497,545	40,631,629	6,020,485	2,005,373	990,202	61,993,001
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Այլ փոխառություններ	426	134	925,573	16,484,433	8,746,136	-	-	26,156,702
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ	67,783	103,872	3,604,667	4,039,340	961,303	-	-	8,776,965
Թողարկված պարտքային արժեթղթեր	12,566	-	-	400,921	-	-	-	413,487
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	2,578,250	-	2,578,250
Վարձակալության գծով պարտավորություններ	21,937	25,645	117,238	663,340	516,382	-	-	1,344,542
Այլ պարտավորություններ	201,093	-	-	-	-	353,021	-	554,114
Ընդամենը պարտավորություններ	303,805	129,651	4,647,478	21,588,034	10,223,821	2,931,271	-	39,824,060
Չուս դիրքը	2,817,807	596,504	3,850,067	19,043,595	(4,203,336)	(925,898)	990,202	22,168,941

* Ժամկետանց վարկերի ժամկետանց մասը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,608,503	-	-	-	-	-	-	1,608,503
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	87,424	382,154	2,031,084	3,018,461	-	-	5,519,123
Հանախորդներին տրված վարկեր	1,241,470	582,907	4,317,285	38,385,968	2,981,256	-	101,300	47,610,186
Հիմնական միջոցներ	-	-	-	-	-	410,702	-	410,702
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	-	973,936	-	973,936
Ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	27,066	-	27,066
Այլ ակտիվներ	35,444	-	-	-	-	199,082	-	234,526
Ընդամենը ակտիվներ	2,885,417	670,331	4,699,439	40,417,052	5,999,717	1,610,786	101,300	56,384,042
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Այլ փոխառություններ	9,187	17,814	125,734	12,452,993	13,800,481	-	-	26,406,209
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	5,275,501	-	-	-	-	-	-	5,275,501
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ	6,835	367,675	556,964	1,811,124	450,559	-	-	3,193,157
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	13,677	-	436,356	-	-	-	450,033
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	1,087,322	-	1,087,322
Վարձակալության գծով պարտավորություններ	4,884	19,537	114,519	533,899	358,539	-	-	1,031,378
Ընթացիկ հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	162,869	-	162,869
Այլ պարտավորություններ	201,093	-	-	-	-	276,851	-	477,944
Ընդամենը պարտավորություններ	5,497,500	418,703	797,217	15,234,372	14,609,579	1,527,042	-	38,084,413
Զուտ դիրքը	(2,612,083)	251,628	3,902,222	25,182,680	(8,609,862)	83,744	101,300	18,299,629

* Ժամկետանց վարկերի ժամկետանց մասը

22 Կապիտալի կառավարում

Կազմակերպության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Կազմակերպությունը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ առևտրային կազմակերպությունների համար որպես կապիտալ սահմանված հոդվածները:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության նվազագույն ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») կազմում էր 12% (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 12%): 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր օրենսդրությամբ սահմանված ցուցանիշին:

Ստորև ներկայացված է դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ճշգրտված զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը:

հազ. դրամ	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Ընդամենը պարտավորություններ	39,908,798	38,734,534
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	(2,412,544)	(1,608,503)
Զուտ պարտք	37,496,254	37,126,031
Ընդամենը սեփական կապիտալ	22,178,743	17,649,507
Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1.69	2.10

23 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Կազմակերպությունն ամբողջովին չի ապահովագրել իր տարածքները և հիմնական միջոցները, այն ապահովագրված չէ նաև գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին վնաս հասցնելուց՝ Կազմակերպության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով:

Դեկավարությունը գտնում է, որ Կազմակերպության կողմից իրականացվող կանխարգելման և վերականգնման ընթացակարգերի միջոցով որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումն էական անբարենպաստ ազդեցություն չի ունենա գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Դեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(զ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հանախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

24 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Հսկողություն

Կազմակերպության բաժնետերերն են Վիգեն Բաղայանը (50%) և Վահե Բաղայանը (50%):

Կազմակերպության մայր կազմակերպությունը չի հրապարակում ֆինանսական հաշվետվություններ:

(բ) Գործարքներ Խորհրդի և Վարչության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Վարչության անդամներ	209,619	133,901

Այս գումարները ներառում են Վարչության անդամների դրամային և ոչ դրամային հատուցումները:

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2021թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր և համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ		Այլ		Ընդամենը հազ. դրամ
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն Ակտիվներ					
Հաճախորդներին տրված վարկեր	441,978	8%	8,474	16%	450,452
Պարտավորություններ					
Ստացված փոխառություններ	25,837,093	7.3%	-	-	25,837,093
Վարձակալության գծով պարտավորություններ	1,334,542	10.0%	-	-	1,334,542
Շահույթ/(վնաս)					
Տոկոսային եկամուտ	38,542	-	287	-	38,829
Տոկոսային ծախս	2,078,686	-	-	-	2,078,686
Տոկոսային ծախս վարձակալության գծով	111,875	-	-	-	111,875

Ստորև ներկայացված են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2020թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր և համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ		Այլ		Ընդամենը հազ. դրամ
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն Ակտիվներ					
Հաճախորդներին տրված վարկեր	501,678	8.30	1,875	33%	503,553
Պարտավորություններ					
Ստացված փոխառություններ	26,050,171	8.0	-	-	26,050,171
Վարձակալության գծով պարտավորություններ	1,031,337	7.7	-	-	1,031,337
Շահույթ/(վնաս)					
Տոկոսային եկամուտ	65,515	-	220	-	65,735
Տոկոսային ծախս	1,952,192	-	-	-	1,952,192
Տոկոսային ծախս վարձակալության գծով	79,681	-	-	-	79,681

25 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Կազմակերպությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Ստորև բերվող աղյուսակում իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով ներկայացված է այն ֆինանսական գործիքների վերլուծությունը, որոնք չափվում են իրական արժեքով և որոնց համար բացահայտված է իրական արժեքը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	5,116,897	-	5,116,897

Ստորև բերվող աղյուսակում իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով ներկայացված է այն ֆինանսական գործիքների վերլուծությունը, որոնք չափվում են իրական արժեքով և որոնց համար բացահայտված է իրական արժեքը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	5,519,123	-	5,519,123

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ: